

ԱՐԱԶԻ


ԱՊՐՈՂՆԵՐԸ

ԹԱՏՄՎԱԾՔՆԵՐ



1929

ՊԵՏՐՈՎ
ՅԵՐԵՎԱՆ



ԱՐԱՋԻ

ԱՊՐՈՂՆԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

~~Հ 6503~~

A I 8110

-□-



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹ-ՑՈՒՐ,

ԽԵՐԵՎԱՆ - 1929

ԹԵՏՏՐԱԿԻ Հ ՏԱՐԱՎԻ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հրատ. № 924 Պ. № 154
Տիրաժ 2,000
Գրառեալգար № 1635 (ր.)

ԱՊՐՈՂՆԵՐԸ

Յերկաթուղու գնացքը յերկար սուլոցով մոտեցավ կայարանին ու դդրդալով կանգ առավ նրա առաջ։ Քսանևեկ թվականի գնացքներից եր, իր բոլոր մանրամասնություններով, ապրանքատար վագոնների մի լիրկար շարան, վորոնք այնքան լիքն եյին մարդկանցով, վոր թվում եր, թե իրար զլիմի ածած հուկեր են և վոչ թե մարդիկ։ Նմուշի նման յերեացող միքանի մարդատար վագոնների սանդուղքները հազիվ ելին դիմանում մինչև գետինը կախ ընկած մարդկային փնջերին վագոնների տանիքների վրա, նրանց արանքներում, նույնիսկ շոգեկառքի վրա, մի խոսքով՝ ամեն տեղ, ուր աչքը դիպչում եր, մարդկային ցեղն եր յերեսում միջատների նման շարված։ Ամեն սեռի ու հասակի ճամպորդներ, վորոնց անխտիր գաղթական անունն եյին տալիս, դալուկ, քաղցած ու հիվանդու դեմքերով, կեղտու ու պատառուտած լաթերի մեջ, շարունակ լիրթենեկում եյին գնացքներով յետ ու առաջ՝ «մի բան» ճարելու համար։ Կայարանների ընակիչներին նույնիսկ թվում եր, թե նրանք յերբեք չեն իջնում վագոններից։

Գնացքը կանգ առավ, և դրա հետ ճամպորդներին աիրեց այն սովորական անհօւսությունը, վորը ձագում եր այն մտքից, թե, ով գիտե, վնրքան ժամանակ է կանգնելու գնացքը։ Նրանք արդեն նախորդ

կալարաններում ընտելացել եյին համբերության և
ալժմ, անձնատուր լեղած գերիների նման, իրենց
քախտը հանձնել եյին գնացքին. կուզինա՝ կտանի, չի
ուզենա՝ չի տանի...

Վոչվոք չեր կարող իջնել գնացքից, յեթե միայն
մտադրություն չուներ մնալու կայարանում, վորովհե-
տե իջնել՝ նշանակում եր տեղը կորցնել. Միակ յե-
ռանդը ցույց եյին տալիս նոր նստողները, վորոնք
իրենց անշուք կապոցներն առած՝ վազվզում ելին վա-
գոնից վագոն՝ տեղ ճարիլու համար. Միանգտամայն հա-
նելուկ եր, թե ինչպես ելին նրանք տեղափորվում
այնքան խիտ լցված վագոններում.

Գնացքի վերջին վագոններից մեկը փոքր ինչ
բացվեց այն ժամանակ, յերբ նորեկ ճամպորդների
վազվզոցը դադարեց. Վագոնից ցած իջավ կոնդուկ-
տորը, ուշադիր հայացքով յետ նայեց, ինչ-վոր ա-
սաց ներսի նստողներին ու դիմեց դեպի կալարան։
Նրա հեռանալուց հետո կայարանից դուրս յեկավ մի
յերիտասարդ, կեպի գլխարկը խորը կցած աչքերին,
մի փոքր կապոց ձեռքին, ու շեշտակի քալլերով դի-
մեց դեպի նույն վագոնը, վորտեղից դուրս յեկավ
կոնդուկտորը, կարծես նա առաջուց իր տեղն արդեն
գիտեր. Ճամպին նա հանդիպեց մի ուրիշ, ակնոցավոր
յերիտասարդի, վորը մոլորված, ցրված մարդու տեսք
ուներ, ու շված կանգնել եր մի տեղ, կարծես չի-
մանալով, թե դեպի վճր վագոնն ուղղի իր քայլերը։
Նկատելով նորեկ յերիտասարդի վորոշ ու վճռուկան
քայլերը՝ նա անգիտակցաբար հետևեց նրան։

Հենց վոր առաջին յերիտասարդը փորձեց բար-
ձրանալ վագոն, ներսից լսվեց.

— Ընկեր, սա ծառալողների վագոն ե, չի կա՞
րելի նստել:

— Իսկ դուք ծառայողնե՞ր եք...

— Մենք առանձին իրավունք ենք ստացել:

— Ցես ել ծառալող եմ,—ասաց յերիտասարդը և
ճարպիկ թոփչքով բարձրացավ ապրանքատար վագոնը:

Ակնոցավոր յերիտասարդը բոպեաչափ մնաց տա-
տանմունքի մեջ, ապա խրախուսավելով առաջին յերի-
տասարդից՝ ինքն ել բարձրացավ, բայց մեծ դժվա-
րությամբ, յերկու անհաջող փորձերից հետո:

Վագոնի ներսը միայն յերկու հոգի ելին, յեր-
կուսն ել գերմարմին, հաստավիզ ու արյունալից, կուշտ
գեմքերով, Առաջինը, վորը տարիքով ավելի մեծ եր
յերեսում՝ կարճահասակ եր, կլոր, զուրս ընկած փո-
րով, փքված գեմքով, բեղ ու մորուքն ածիլած: Մյու-
սը միջահասակ եր, լայն գեմքով, յերկար բեղերով ու
լայնանիստ մարմնով: Յերկուսն ել պիջակներով ելին,
տակին հագած սկ սատինի բլուզներ, վորոնք, սակայն,
պատահական հյուր եյին թվում նրանց մարմնի վրա,
վորպես ժամանակի մի անխուսափելի պահանջ՝ ավելի
գեմոկրատ յերեալու համար:

Նրանց կասկածուտ, վորձող հայացքները, խոր-
հըրդավոր, շարունակ մտքի հետ հաշիվ տեսնող լոռւ-
թյունը, մյուս կողմից այս «արտօնյալ» վագոնը, մա-
նավանդ նրա յետեկի մասում դարսած արկղներն ու
հակերը թելադրում եյին դիտողին (այն ել քսանե-
մեկ թվականի կասկածուտ դիտողին), վոր նրանց մեջ
ինչ-վոր բան կա:

Նորեկների գալը յերեսում եր, անսպասելի և ա-
նախորժ եր նրանց համար, Միքանի գաղտագողիք

հալացքներ զցելով նոր ճամպորդների վրա՝ իմանալու համար, թե ինչ մարդիկ են, նրանք այնուհետև շուտ դռան արանքից դուրս ելին նայում, սպասելով կոնդուկտորին:

Վերջապես դռնից ներս նայեց կոնդուկտորի կարմրավուն-խավար, կարծես փոշոտված դեմքը՝ իր անկանոն թափթփած բեղերով ու խորամանկ, փորձող աչքերով: Բարձրանալուն պես նա դեմքը խոժողեց, նկատելով նոր մարդկանց:

— Հընդերներ, ես վագոնը ծառայողների համար ա, ինթրեմ տեղավորվեք ուրիշ տեղ, — լուրջ տոնով դիմեց նա նորեկներին:

Ակնոցավոր յերիտասարդը մեղավոր հայացքով նայում եր մեկ կոնդուկտորին, մեկ մյուս յերիտասարդին, հույս ունենալով, վոր սա կկարողանա պաշտպանվել հարձակումից, և ինքն ել մեջը «գուրս կըպրծնի»:

Մյուս յերիտասարդը համառությամբ լուսմ եր, դեմքին տալով լուրջ, գործերից հոգնած մարդու արտահայտություն, նույնիսկ հորանջելու նշաններ անելով:

Կոնդուկտորը զինաթափ յեղավ յերիտասարդի սառը վերաբերմունքից: Նրա մեջ կասկած ծաղեց՝ չլինիթ թե նորեկներն ազգեցիկ մարդիկ են և կարող են իրեն վնասել Ռւսով նա փոխից եր քաղաքականությունը: «Դեռ իմանամ ովքեր են, հետո խոսքս «ռեղաց անեմ», մտածեց նա:

— Հընդերներ, խնդրեմ ձեր մանդատները, — նորից դիմեց կոնդուկտորը:

Եերկուսն ել հանձնեցին իրենց վկայականները:

Կոնդուկտորը լուրջ արտահայտություն տալով դեմքին՝ նայեց դեռ մի վկայականին, հետո մլուսին; բայց պարզ յերևում եր, վոր դժվարությամբ եր կարդում է դլախի չեր ընկնում։ Նա փորձեց հարցերով դուրս դալ դժվարությունից։

— Վճրուիդ եք ծառայում, — հարցը եց նա ակնոցափոր յերիտասարդին, վորն ավելի մատչելի յեր թվում։

— Յես ուսուցիչ եմ։

— Իսկ դժուք, հարցը եց նա մլուս յերիտասարդին։

— Դես եղանակ գրած ե ելք... թե կարդալ զիտես, ել մւր ես հարցնում, — դժոն տոնով պատասխանեց յերիտասարդը։

Նրա համարձակ տոնը վերջնականապես ընկճեց կոնդուկտորին, վախ աղդելով նրա վրա։ Կոնդուկտորի համար կարծես պարզվեց, վոր չի կարելի հեռացնել նրանց վագոնից։ յեթե վեճի բռնվիր, խնդիրը կարող եր հասնել այն փափուկ կետին, թե ինչ իրավունքով ե նա հովանավորում ալս չաղլիկ ճամպրդներին, ամբողջ վագոնը նրանց հատկացնելով։ Ու մուայլված իր անզորությունից՝ նա վերադարձրեց մանդատներն ու իջավ վագոնից, առանց մի բառ ասելու։

Վագոնի յերկու հիմնական բնակիչները լարված ուշադրությամբ հետեւում ելին խոսակցության, հազիվ զսպելով իրենց անհանգստությունը։ Յերկար բեղերավոր ճամպորդն ուզեց միջամտել բայց նրա ավագ ընկերը փեշից զգուշությամբ քաշելով՝ յետ դարձրեց այդ անտակտա քայլից, մտքում ավելի դիպլոմատիկ ծրագիր մշտկելով։

Ցերբ լարված մթնոլորտը հանդարտվեց, նա մո-

տեցավ վագոնի դռներին, քաշեց ձանր փեղկը, թողնելով մի նեղ արանք, վորպեսզի դրսից նոր ճամպորդները չփորձելին ներս մտնել:

Հետո մոտենալով իր ընկերոջ՝ քչփշաց նրա հետ.

— Թե կովով չես կարողանում, հաշտությունը մեջ գցի, թե թուրդ չի կարում, հացդ կկարի...

Ապա ասաց բարձր ձայնով.

— ԴԵ յեկ մի բան ուտենք, իսո լավ քաղցած եմ...

— Լավ,—պատասխանեց իր ընկերն ու մոտենալով պաշարեղենի զամբյուղին՝ սկսեց թղթե փաթեթները շխշացնելով ընթրիքի պատրաստություն տեսնել:

Արգեն յերեկոն մոտ եր, Վագոնի անապակի պատուհանն աղոտ լույս եր տալիս հատակի գորզի վրա փուած փոքրիկ սփոռոցին և նրա վրա շարած ուտելեղներին:

Նորից դռան փեղկը շարժվեց: Կոնդուկտորն արագ բարձրացավ վերև, այս անգամ լայն ժամփիտը դեմքին, ըստ յերեսութին՝ հաճոյանալու մեծ ցանկությամբ, խորհրդավոր հայացք զցելով ուտելեղենների վրա:

— Պոյեզդը (գնացքը) ես ա կերթա, — ասաց նա, այնպես ցուց տալով, իբր թե դրա համար ե յեկել:

— Համեցեք, համեցեք, — համարլա միաժամանակ կանչեցին յերկու ճամպորդները. — արի մի թիքա կեր:

Կոնդուկտորը հենց վոտի վրա մի թաս ողի խըմեց, հաց ու յերշիկ առավ բերանն ու սկսեց շտապշտապ ուտել:

— Վռազում եմ, գործ ունեմ, — ասաց նա. — պոյեզդը ես ա կշարժվի...

— Դե գոնյա հետդ մի բան վերցրու, ճամպին կուտեսու, — ասաց ավելի հասակավոր ճամպորդը:

Կոնդուկտորը վերցրեց մի մեծ կտոր հաց, նրա հետ ել զանազան ուտելեղեններ ու իջավ ներքեւ, անհարմար զգալով իր ներկայությունը վագոնում:

— Մի բովե սպասիր, — կանչեց ավագ ճամպորդը նրա լետեկից ու կռանալով դրան մոտ՝ սկսեց ցածր, հազիվ լսելի ձայնով հետը խորհրդակցել:

— Արխային կացեք, լավ կերթաք. հեշ մի բանից ելա վախիւ միք լես ըստեղ չեմ, — ասաց կոնդուկտորը անզգուշ բարձր ձայնով, լերեկ արագի ազգեցության տակ, ու արագ քայլերով հեռացալ գնացքի ուղղությամբ:

* * *

Արդեն մութն ընկել եր, լերբ գնացը շարժվեց: Ընթրիքի պատրաստությունը տեսնելով՝ լերկու ճամպորդները փակեցին վագոնի դռուը և վառեցին մոմը:

Ուսուցիչը նստել եր հատակին, իր կապոցի վրա, ու նալում եր ճամպորդներին իր խը ըը ակնոցների տակից, վորի մի ապակին չկար: Նայում եր աչքերը չուած, ակնոցալորներին հատուկ համառ հայացքով, կարծես վոչ թե նայում, այլ հետախուզում եր: Նրա վտիտ, փոքր ինչ կռացած մարմինը, իր դալուկ դիմքով, ակնոցներից դուրս ցցված լերկար անարյուն քթով, լույսի մեջ թվում եր, թե արձանացել ե մի մեծ զարմանքի վրա: Եթե սրան ավելացնենք նրա՝ ամերիկական կոմիտեյի հակերից հանած հին, տեղտեղ մաշված պիջակն ու լերկար մազերի վրա պըզըզած անհամապատասխան փոքր, ճիշլած կեպին, ապա

պիտի ասենք, վոր նա նմանում եր նախկին կռնսիս-
տորի թալանված գրադրի:

— Ընկերներ, խնդրեմ դուք ել մասնակցեք, միա-
սին ավելի ուղախ կլինենք, — ասաց ավագ ճամպորդը
գեմքին տալով շատ սիրալիր արտահայտություն:

— Շնորհակալ եմ, — ասաց պառկած յերիտասար-
դը. — գիշերը չեմ քնի. քունս տանում ե:

Իսկ դժւք, — դիմեց նա ուսուցչին. — համեցեք
խնդրեմ:

— Շնորհակալ եմ, — քաղաքավարի տոնով, ժպտա-
լով պատասխանեց ուսուցիչը, բայց յերեւում ել՝ նրա
դիմպրությունն այնքան ել ուժեղ չե. քաղցած փորն
արդին իր պահանջներն եր դնում, գրգռված պնչերը
փքվում ելին տապակած մսի ու մոթալի պանրի. ա-
նուշ հոտից:

— Ել ինչ շնորհակալություն. դեռ կերեք, հետո
շնորհակալություն ասեք. ինչ յերիտասարդ եք, վոր
ուտելուց փախչում եք:

Ցերկորդ հրավերից հետո ուսուցիչը մոտեցալ
ճամպորդներին: Ընթրիքն սկսվեց կոնլակով, վորից
հետո ըերաններն սկսեցին գործել ամենալեռանգուն,
զիշատիչ թափով, հազիվ հասցնելով ծամելը: Հենց վոր
ուսուցիչը մասնակից յեղավ ուտելուն, նա կարծես
տեղափոխվեց մի ուրիշ աշխարհ: Միս, յերշենկ, պա-
նիր, խավիար, ձկնեղեն. . Ցեվ ելի քանի տեսակ ու-
տելեղեններ... Այս բոլորը յերազ եր, և յեթե նրա
քիմքը չվկայեր, անշուշտ չեր հավատալ իր աշքերին:

Գնացքն արագացրեց իր ընթացքը. վագոնն ո-
րորվում, թոչկոտում եր, ուրախ արամադրություն
բերելով:

— Հը, կերեք, — ասաց ավագ ճամպորդը, վորը վոչ
թե ուտում, այլ կլանում եր, իեղոտելով համարյա ամ-
բողջ յերեսը. — քանի կա՝ կերեք, թե չե կփոշմանեք,
ուտելիքը կփախչի, փիս ժամանակ ե...

— Ենորհակալ եմ, — բերանը լիքը պատասխա-
նեց ուսուցիչը:

— Հա, թամառ ուտելու ժամանակն ա, — ասաց
մյուս ճամպորդը. — մարդուս իշտահը պակասության ժա-
մանակ ա լավ գալիս:

Ծուտով առաջ յեկավ և զինին, վորը թագյնելու
համար ածել եյին մեծ թեյամանի մեջ. խմում եյին
մեծ բաժակներով, իբր թե թել են խմում: Սկզբում
կենացներ չելին առաջարկում, բայց հետզհետե տա-
քանալով՝ դրան ել հասան:

— Զեր կենացը, — առաջարկեց մեծ բեղերավոր
ճամպորդը, զիմելով ուսուցչին. նրան հետեւց և մյուս
ընկերը:

— Ենորհակալ եմ, — ասաց ուսուցիչը գլուխը շար-
ժելով: Նա արգեն իրեն զգում եր յերազի մեջ. նրա
ակամա ծոմ պահող մարմնում հսկայական հեղափո-
խություն ելին առաջացրել զինին և մսեղենը: Վոգե-
վորությունը ալիքներով ներս եր խուժում նրա մեջ.
թվում եր, թե սավառնում ե թեթև, անհոգ կյանքի
թևերով...

Սեղանակիցները, տեսնելով ուսուցչի դրությու-
նը՝ ժպտում եյին, համարելով նրան հարբած և ուրա-
խանալով՝ ինտելլիգենտի թուլության վրա:

Հնթրիքն ընկավ իր յերկրորդ շրջանը, վորտեղ
գերիշխողը զինին եր և նրա հետ՝ բացված լիզուները:
— Ներողություն, վնրտեղ եք ծառալում, — հար-

- պըրեց ավագ ճամպորդն ուսուցչին, ծխախոտը վառելով.
- Դժբախտաբար ուսուցիչ եմ:
 - Ինչի՞ դժբախտաբար:
 - Դե թնչ, յեղբայր. այնքան չնշին վարձատրություն եմ ստանում, վոր ամաջում եմ ասեմ:
 - Հա, գե եղ պայոկները (փայերը) վոր տալիս են՝ վոնց վոր ասած՝ ծանր հիվանդին հուզու են տալիս. ժամանակ ա ելի՛, թնչ արած, պետք ա դիմանանք...
 - Այս, պիտի այսպես ասած՝ ապրենք... Բայց յես կասեմ՝ իսկական ապրողը այդ ծտի բաժիններով չե, վոր ապրում են.
 - Մի պահ տիրեց լուսիթյունն Ուսուցիչը նայում եր. մտազբաղ ու ցրված արտահայտությամբ. ապա վերցընելով բաժակը՝ ասաց.
 - Դուք իմ կենացը խմեցիք. ալժմ յես ձեր յերկուսիդ կենացն եմ առաջարկում: Յես ձեզ չեմ ճանաչում. սակայն ինձ համար պարզ ե՝ դուք պատկանում եք այն մարդկանց թվին, վորոնց յես անզանում եմ ապրողներ... Նայեցիք ձեր չորս կողմը. այս դալուկ ու քաղցած, թափթիվուկ բազմության մեջ՝ հատ ու կենտ պատահում են մսեղ ու հյութալի անհատներ, վորոնք զատվում են ընդհանուրից, վորպես վարդիրը խօսերից: Ի՞նչ ճանապարհով են նրանք ապրում ու իշխում, այդ հետաքրքիր չե. փաստն այն է, վոր նրանք ծունկը դնում են կյանքի կրծքին ու իրանց ավարը վերցնում Նրանք բնության հերոսներ են, վոչ պաշտոնական հերոսներ, Թող մութը, կասկածելի լինեն բնության ճամպաները. Նրա համար միւնուցն եւ Հետաքրքիրը փաստն ե, մեր ամենամեծ

փիլիսոփայությունը։ Վերջիվերջո պիտի համեզվենք,
մոր ինչ ուզում են՝ քարոզեն, ինչ ուզում են՝ հրամա-
յեն, բնության գլխին դալլի ավետարան են կարգում.
«ապրողները», կամ, ափելի բանաստեղծորեն ասենք՝
կարմրաթշիկներն անխախտ առաջ են տանում իրենց
գործը հաղար ու մի ձեերով։ Նրանք զլուխ են հա-
նում նույնիսկ մեր բոցավառ որերում, յերբ հավա-
սարության մանգաղն անողոք հնձում և բոլոր գուրս
ցցված խոտերը.. Ան ու սարսափի, չեկալի ու բանտի
ծանրության տակ պիսպես ձեերով դարձյալ ծաղկում
են բնության կարմրաթշիկ հերոսները... Տեսել եք՝
ինչպես քաղաքալին ալզիներում մկրատով խուզում,
հավասարեցնում են թփերը, բայց բավական և մի
փոքր ժամանակ անցնի, և ահա առանձին ճյուղերը
բարձրացնում են զլուխները, յերեսը տալիս արեին
ու իրենց տակ խլացնում մլուս «հավասարված» ճյու-
ղերին։ Կարմրաթշիկների շարքերը, բարեկամներս,
յերբեք չեն սպառվիլ քանի կա նրանց հզրը հովա-
նավորը՝ բնությունը. .

Յերկու ձամպորդները լսում եյին ուսուցչին ան-
հանգիստ ու լարված. ուսուցչի խոսքերը թվում եյին
վտանգավոր։ Ոզտվելով նրա պառզայից՝ ավագ ճամ-
պորդն ասաց

— Ի՞նչ կարեք կա, ընկեր, եսպես բաներ խո-
սելու. լավն են ա՝ իմինք, ձեր կենացը, — ասաց նա,
կամենալով վերջ տալ վտանգավոր ճառին։

— Ներեցեք, — շարունակեց ուսուցիչը. — յես մի
փոքր յերկարացը իսկույն կվերջացնեմ։ Բնությունն
ել ունի իր հերոսները, իր գեղեցիկ իշխողները, վո-
րոնք հաղար ու մի ձեերով առաջ են տանում իրենց

Հյութալի կյանքը նրանք են կյանքի շարժողները, նրա թագն ու պատկը... Ամեն անգամ, յերբ պատահում եմ նրանց, յս հրճվում եմ, չնայած վոր պատկանում եմ այն դալուկ, հյութազուրկ, «հավասարված» շարքերին: Ցեվ ահա, բարեկամներս, յս ձեր մեջ ել տեսնում եմ այդ իսկական ապրողներին... Փաստը խոսում է ձեր գեմքերից... Խմում եմ «ապրողների» կենացը, ձեր կինացը:

Ուսուցիչը լոեց, ու բաժակը ձեռքին՝ վերացած ու ցրված հայացքով նայում եր յերկու ճամպորդներին: Նա չեր նկատում, վոր նրանք հաղիվ աղատ շունչ քաշեցին իր վաճնվագոր ճառից հետո: Կարճատեև լուսթլունից հետո ավագ ճամպորդը, գիւղլոմատուրեն ծռմոելով գեմքը՝ վերցրեց բաժակը.

— Շնորհակալ եմ ձեր կենացի համար, — ասաց նա. — միայն մի բան կասեմ, ընկեր. գուք գրքի մարդ եք և ամեն բանի վրա ուրիշ տեսակ եք նայում. ուշ զում եմ ասել՝ եղ, ինչ վոր գուք ասում եք, — հերոսներ, յս ի՞նչ գիտեմ՝ եղպես մեծ-մեծ բաներ. — եղ բոլորը չկա: Մենք խեղճ մարդիկ ենք. որ-որի վրա ապրում ենք, յոլա լենք գնում ժամանակի համեմատ... Ամենու բան բախտի, ժամանակի գործ ա. ուզում եմ ասել՝ զորորինակ առաջվա ժամանակ՝ մենք վոնց վոր հիմնավոր, տեղներս պինդ նստած մարդիկ՝ ծաղրում ելինք հեղափոխականներին, դե չելինք հասկանում, քամի ցանողներ եյինք ասում նրանց: Բայց դե հիմի ի՞նչ խոսք՝ նրանք են մեզ ծաղրում... Ուզում եմ ասել՝ ամեն ինչ բախտի, հանգամանքի բան ա. եսպես ել կըլի, ենպես ել. պիտք ա յոլա գնանք, վոնց վոր ժամանակն ա պահանջում.

Շոգեկառքը սուլից պտուտի մոտ։ Անկունում
պառկած յերիտասարդը վեր կացավ տեղից ու սկսեց
ուժեղ կերպով տրորել տչքերը։

— Համեցեք, համեցեք, — դիմեցին նրան յերկու
ճամպորդները։

— Ծնորհակալ եմ. բժիշկն ինձ արգելել և եղ-
պես բաներ ուտելը. յես միայն ուզում եմ պարոն
վարժապետի ճառի վրա միքանի խոսք ասել։

— Խնդրեմ, խնդրեմ, ուրախությամբ կլսենք, —
ասացին ճամպորդները լայն ժամանակով ու փորձող աչ-
քերը նրա վրա հառելով։

Յերիտասարդը մոտեցավ։

— Պարոն վարժապետը (նա առանձնապես շեշ-
տեց «պարոն»-ի վրա) ենպես վոգեռված ճառ ասեց,
վոր զարթեցի քնից. դե նա փիլիսոփա մարդ ե, ի՞նչ
կարող եմ նրան պատասխանել. միայն կուզեյի իմա-
սալ, թե եղ վոր աշխարհիցն ե վարժապետը։

— Նույն աշխարհից, ինչպես և դուք, — պատաս-
խանեց ուսուցիչը, աչքերը բարձրացնելով ակնոցի
տակից։

— Զե, բարեկամ, դուք մեր աշխարհի մարդ չեք.
Ճեր հերոսները, վորոնց դուք յերկրպագում եք ու
պաշտում մեզ մոտ փողոցներ են մաքրում. իսկ դուք
ասում եք՝ մեր աշխարհից եք կրակը վժրտեղ, ջնուրը
վորտեղ...»

— Դուք աղավաղում եք իմ ասածները, — հան-
կարծ ընդհատեց ուսուցիչը։

— Եերօղություն կանեք. դուք, պարոն, վաղուց
տղավաղված եք. եւ ի՞նչ պիտի աղավաղեմ...»

— Ընկեր, ներօղություն, մենք եսպեղ ժամանակ

Ենք անցկացնում, խռում, զրից անում — ասաց ավագ ճամպորդը մեղավոր ժպիտով. — չարժե նեղանալ մեկմեկուց...

Ցերիտասարդն ավելի ծգվեց, լուրջ և ամուր արտահայտություն տալով իր կամքով լի զեմքին, կարծես պատրաստվելով հարձակման:

— Ցես վոր ասում եմ ուրիշ աշխարհից եք, դուք նեղանում եք. մի խնդրեմ ինձ հասկացնեք՝ ի՞նչ եք յերգում սոխակի պես: Ովքե՞ր են ձեր կցանքի շարժողները... Վոչ թե ձեր սիրած յեղոտ գեմքերը, այլ աշխատավոր բազուկները. և ինչպես ես շոգեկառքը ձեզ տանում ե, նրանք ել կտանեն ձեզ այնտեղ, վրատեղ իրանք են ցանկանում... Դուք, բարեկամ, ուշացած բաներ եք ասում. են վաղ եր, վոր եշը կաղ եր. ձեր պաշտած հերոսները, ձեր կարմրաթշիկները թիթեռ են դառել. նրանց կլանքը շատ կարճ ե. . Դուք ասում եք՝ փաստերով եք խռոսում, բայց մոռանում եք, վոր փաստերին յերկու աչքով պիտի նայել... դուք եղ ձեր կարմրաթշիկների կովքն ելիք անում, իսկ յես ասում եմ՝ ձեր սիրելիների նավը խորտակվելու վրա յե: Ավելի լավ կանեք՝ սդի յերգեր յերգեք մեռնողների վրա... Դուք ձեր կարմրաթշիկների յեղոտ ձեռները համբուրեցիք և ձեր ճակատին դրիք. շատ գովելի յե, շնորհավորում եմ. միայն վախենում եմ հատեղ ել ուշացած շլինեք... Ցես միայն կուզեցի, վոր դուք ձեր կարմրաթշիկներից ենպես քեփով ու ճառով բաժանվելիք, ինչպես վոր նըրանց գիմավորեցիք...

Շոգեկառքը սուլից յերկար օւ թանձր. Մոռենում եցին կարառնին:

— Իսկ ալժմ, — շարունակեց լերիտասարպը, — միքանի խոսք և մնում, վոր վերջացնեմ. Ներողություն կանեք, վոր ձեր ուրախությունը պիտի վերջանա... Ձեզ մի նորություն պետք ե իմաց անեմ... Կարող եք ենքան ել չվախենալ. Զեկալի կողմից հայտարարում եմ ձեզ ձերակալված...

Հանկարծակի սարսափը հղոր քամու նման մի ակնթարթում տարավ ունկնդիրներից գինու ազդեցությունը: Յերեքն ել վեր թռան տեղերից ու մնացին քարացած:

— Ի՞նչ ենք արել, վոր եպիես եք ասում, — զողովով ձայնով ասաց ավագ ճամպորդը:

— Ձեր բոլոր սպեկուլացիաները, զողովովյուններն ու զեղծումները մեզ շատ լավ հայտնի յեն վազուց ե՛ ձեզ ճանաչում ենք: Չուր չեր վարժապետը ձեր գովկքն անում. յերեսում ե սիրտն իմանում եր, վոր զուք մեծ ձկներից եք:.. Ի՞նարկե, մենք չենք մոռանալ և ձեր բարեկամ կոնդուկտորին, վորը ես նեղվածքի մեջ եսպիս լին տեղ ե արել ձեզ և ձեր հետաքրքրելու ապրանքներին...

— Իսկ լիս. — զողովով ձայնով հարցրեց ուսուցիչը. — Ներեցեք... յես վոչ մի կապ չունեմ սրանց հետ...

— Ի՞նչպիս չունեք. շատ սրտալի, մինչև անզամ նախանձելի բարեկամություն կա ձեր մեջ, — ասաց չեկիստը, կամենալով զիտմամբ վախեցնել նրան:

— Վհչ, սիսալ ե, վոչ մի կապ չունեմ, — պատասխանեց ուսուցիչը համարյա ճշալով. — դա թյուրիմացություն ե. յիս առաջին անդամն եմ հանդիպում սրանց...



— Եղպես շուտ մոռացաք ձեր հերոսներին. լավ,
դուք ազատ եք. միայն մի հինգ ըոպե ինձ հարկավոր
եք, ուղիշ վոչինչ. իսկ նըսնից գենը կարող եք ա-
զատ փելիսովայութլուն անել ձեր կարմրաթշիկների
մասին:

Գնացքը կանգ առավ: Չեկալի աշխատակիցը հա-
նեց գրպանից ատրճանակը ու մոտենալով վագոնի
դռանը՝ փոքր ինչ բացեց փեղկը: Կալարանի կողմից
մոտեցան յերկու զինվորներ:

— Բարձրացեք վերե, — զիմեց նա զինվորներին:
Յերկու կարմիր-բանակալինները գրավեցին ի-
բենց զերքերը:

1926թ.

ԴԵՂԻՆ ՆԱՏԱՐԱՆԻ ՎՐԱ

Ճիշտ վոր տարորինակ մարդ եք:

Նույնիսկ զարմանում եմ, թե ինչու փողոցով
անցնելիս վոչվոք չեր մոտենում նրան և լուրջ, շատ
լուրջ հարցնում՝

— Ներեցեք, դուք ուրվական Եք... Յերբ եք
վերադարձել են «Հանդերձյալ» աշխարհից... ինչու յեք
յեկել...

Ցեվ իսկապես՝ նրա գեմքը մեռելի գույն ուներ.
այն ել յերկարատե հիվանդությունից հյուծված մեռե-
լի. ներս ընկած ալտերը, դուրս ցցված քիթը, բոլորը,
բոլորը վճռ այս աշխարհից ելին, իսկ աշքերի դեղին
փայլը դերեզմանային սարսուս եր ազդում նայողի
վրա:

Հետո նրա շորերը կողոպուտի շորերի եյին նման.
ճին, խունացած ամառվա վերարկուն, գլխարկը՝ թեպետ
յեվրոպական, բայց անցած-զնացած ձերի, քրտնքից
ու փոշուց խավարած, կոշիկներն արդեն ծոմուտված ու
յերեսին ծալքեր բռնած. շալվարը՝ տոտերը մաշված,
ու անհավասար կարկտած, մի խոսքով՝ նրա. ամբողջ
հագուստը, թվում եր, հատկապես փոխ եր առած կինդա-
նի մեռելի դեր կատարելու համար:

Թայլում եր դանդաղ, կրիայի նման, անձայն
քայլերով. անցնում եր պողոտայի ծալրով, վորպեսզի
վոչվոքի չգիպչի. ու կրիայի նման ել ասես շարունակ

աշխատում եր թագցնել զլուխը պատյանի մեջ ու
մեկ-մեկ վախիխելով դուրս եր հանում:

Վոչվոք չեր մոտենում և չեր նկատում նրան
այնպես, ինչպես նկատում են սովորական մարդկանց,
ինքն ել, թվում եր, չեր հստաբբըրգում, թե ինչ ե
կատարվում իր շուրջը, նրա զզայսրանները փակված
եյին մի անտեսանելի պատյանի մեջ, տեսնում եր՝
չեր տեսնում, լսում եր՝ չեր լսում, տարված լինելով
իր ուրույն մտքերով:

Մի ճամպա ուներ նա տաք յեղանակին՝ անից
դեպի քաղաքային այգին ու այնտեղից ել տուն։ Այ-
գումն ել մի մշտական տեղ ուներ, վոր կարելի յեր
սեփական համարել, քանի վոր չեր փոխվում յերբեք։
Մի առանձնացած նստարան եր՝ լեռ ընկած ծառու-
դիում, բայց դեղին գույնի, մի վոտն ել կոտրած։

Այդտեղ եր նա նստում ու նստելուն պես ար-
ձանանում եր, հառում դեմքը մի ուղղությամբ ու
այդպես ել մնում ժամերով։ Նրա միակ շարժումը համ-
րիշի հատիկները զցելն եր, այն ել այնքան դանդաղ
եր լինում, վոր գժվար եր նկատել այնպիսի զգու-
շությամբ եր զցում հատիկները, կարծես թանգագին
քարեր եր համարում։

Յեկ միշտ ել մենակ եր նստած։ Նրա մոտը մարդ
չեր բանում, մի կողմից պատճառն այն եր, վոր տիղը
յետ ընկած եր, նստարանն ել կաղլիկ, մուս կողմից՝
այդ մարդու դեմքն այնպիսի արտահայտություն ու-
ներ, վոր թվում եր, թե ճակատին գրած ե.

— Անցվոր, ով վոր ես, լավ կանես՝ հեռանաս ին-
ձանից...

Այդպես նա հաճախում եր քաղաքալին այգին

մի տարորինակ կանոնավորությամբ, ասես իր մշտական ծառայությունն եր այդ գալիս եր տմենից վաղ և հեռանում ամենից ուշ Բանն այն տեղն եր հասեր, վոր մի ժամանակ այզեպանն սկսել եր կասկածել. թե չինի եղ մարդը գալիս ե, վոր թագուն մտիկ տա իր զործին ու հետո գնա իմաց անի, թե այզեպանը լավ չի բանում ե, ովք զիտե, ծառայությունից հեռացնել տա: Բայց շուտով ճանաչեց, իմացավ նրա անցյալը, նրա զարդը, և կասկածները հանեց մտքից: Վորոշ ժամանակից հետո ընտելացավ նրան այնպես, ինչպես սովոր եր այզու ծառերին: Մի անգամ այզեպանը սրախոսելով աւաց մեկին.

— Դա վոր կա՝ տերեւ համբարող ա, գալիս ա, նստում առավոտից իրիկուն ու, ինչքան տերեւ կա ծառերին՝ հաշիվ ա անում:

Նստում եր իր տեղն ու ընկնում իր մտքերի մեջ: Գղղղված, ծվիկ-ծվիկ յեղած վերմակի եյին նման նրա մտքերը, վորի մեջ մտնելով յերեակայում եր, թե տաքանում ե, թեալետ ամոն արանորից ցուբան եր ներս մտնում: Յերկիրը պտտվում ե արեի շո ըջը, իոկ նրա մտքերը պտտվում ելին իր նախկին մեծ տան շուրջը. Վորը քաղաքի կենտրոնումն եր և զրս վված եր Հեղկոմից: Ո՞ւ, այդ Հեղկոմը... այդ անոնքը, անշուշտ, զժոխքից եր լեկել թե չե սովորական մարդկային լեզվով յերբեցե կարող եր լսել արդպիսի մի խոսք. .

* *

Անհայտ մարդ չեր Սերքաշյանը (այդպես եր նրա ազգանունը): Մի ժամանակ նրա անունն իր տան նման քաղաքի կենտրոնումն եր ու ամենքի բերանում:

Սերքաշլանի հարստությունը, Սերքաշլանի տունը խանութները, կառքը, Սերքաշլանի գործերը, սովորությունները, նրան պատահած դեպքերը, մի խոսքով՝ Սերքաշլանի ամեն ինչը, նրա լուրաքանչյուր քայլը բեմի վրա յեր և անխախտ զավասանքի յեր արժանանաւմ:

Ու նրա արտաքինը, նրա արամագրությունը, բոլորը շրջապատողների աչքում առաջին տեսակի ելին: Փողոցով անցնելիս նա այնպիսի արտահայտություն ուներ, վոր թվում եր, թե ասում եր.

— Փողոց, լավ իմացիր, Սերքաշլանն ե վրադ ման գալիս հա... հասարակ մարդ չկարծիս ..

Ի՞նչպես բնական կերպով ամենքը, ով զործ ուներ, զանում ելին ալդ մարդուն, տուրք ելին բերում նրան իրենց վոտով, հետը խոսում ելին հնագանդ ու խոնարհ ..

Բայց եդ յերբ եր, յերբ...

Յեթե մեկը մոտենար նրան ու հարցներ՝ ձիշտ ե, վոր նրա տունը գրավել են, հարցնողը պիտի զգուշությամբ աներ ալդ, ասեղների ծալը երին ման գալով ասեր, վհչ սովորական ձայնով և վհչ սովորական խոսքերով:

Սերքաշլանը նայում եր հարցնողին մի առանձին գննական հայացքով, նայում եր վստից գլուխ, նույնիսկ հանում եր իր ակնոցները, թելերը զցում ականջներին, վոր լավ զիտի, և վայ թե կասկածեր, թե դիմացինը ծաղրում ե, կամ համաձայն ե Երանց, այսինքն իր տունը գրավողների հետ:

— Ի՞նչ, ձեզ համար վոչինչ ա ելի՞,- կասեր նախոպոտ, զղերը ցնցող ձայնով,—գնացեք ձեր հորն ու

մրրը ծաղրեցեք. զուք ել համաձայն եք Երանց հետ...
մի ասեք՝ տեսնենք, եղ վեր որենքով հն խլել իմ
տունը, թող բերեն սաղ աշխարհի որենքները, մի
տեսնանք՝ վհրտեղ ա գրած, վոր սեփականությունը
պետք ա խլեն...

Ու իր զեզնած աչքերը կհառեր դիմացի մարդու
վրա, գերեզմանալին ան ձգելով նրա մեջ։ Ու խոսակիցն
շտապում եր հեռանալ, մտքում փոշմանելով իր արածի
վրա ու վճռելով յերբեք չմոտենալ այդ մարդուն։

Բայց յեթե խոսակիցը կասկածելի չթվար, կարող
եր պատահել, վոր նա դիմեր նրան իր զլխավոր,
նույնիսկ կարելի յի ասել՝ միակ հարցով, վորը նրան
հետաքրքրում եր.

— Ճիշտ մ, ասում են՝ Անգլիան ու Ֆրանսիան
պահանջում են, վոր մեր կառավարությունն ընդունի
սեփականությունը...

Ապա, յերբ խոսակիցը միքանի մխիթարական
բաներ եր ասում, Սերքայանն սկսում եր իր դա-
տողությունները սեփականության մասին.

— Ես անորենները (լեզվիս ինչ ա գալիս) թող
մի նստեն—քննեն, տեսնեն վհրտեղ ա ընդունված,
վոր սեփականություն չլինի. թե իրենց խելքները չի
հասնում, թող հարցնեն լուսավորյալ Յելքոպացին...
ինչու խելոք, կըթված մինիստրները մեր դեմ են խո-
սում, վորովհետեւ նրանք հասկանում են. իսկ սրանք...
ախր ես ինչ պատուհաս եր, վոր մեր զլխին յեկավ...
ես... ես... բերանս ինչ ա գալիս...

Տոպելապես խոսակցության թելը կորցնում եր:
Հուզմունքից շունչն սպառվում եր. վոսկրացած, «մե-
ռած» ձեռքերն սկսում ելին դողդողալ:

Ապա հանդարտվելով շարունակում եր.

— Մրանց արածն իսկի ավազակն ել չի անիլ. բայց չեն ամաչում, արել են ու վրեն ել ճառեր են ասում, մթամ ուղում են հաստատեն, թե ճշմարիտ են վարվել... մի քննենք տեսնենք, թե բանն ինչու՞ն ա. կարելի՞ յա, վոր աշխարհն առանց սեփականության լինի. ախր մի մժեղն ի՞նչ ա՝ նա յել սեփականություն ունի, ել ուր մեաց մարդը... նմանապես տեսնենք՝ ի՞նչ են ասում հին գրքերը Աստվ սծաշնչում գրած ա՝ քու հարեանի ունեցածի վրա աչք մի տնկիլ ինչու. վորովհետեւ մարդու ունեցածն ասոծանից ա. զրա համար ել ասում են, թե սեփականությունը սրբություն ա.. են, ի՞նչ ասեմ, վոսկի խոսքեր են, բայց ես անաստվածներին ի՞նչ... են... են...

Նորից սկսում եր սիրտը թրթուալ, շունչն սպառվում եր, ձեռքերը դողդողում: Զգում եր, վ իր ծվիկ-ծվիկ մտքերը ցովիցին: Միքանի ըովե հավաքում եր մտքերը համրիչի հատիկների միջոցով ու իր վերջա-բանը տ լիս.

— Բայց թող լավ իմանան, իսկական որենքը, իսկական գատաստանը կգա, ամենքին իր տեղը կը-նատացնի: Աստվածաշնչում պարզ զրած ա՝ անորեն-ները կպատճեն՝ զարմանալի յա, թե ի՞նչպես մար-զարեները զրել են: Հենց իմանաս՝ ես որվա համար ա: Նմանապես Եֆեմերդին շատ ճշմարիտ ա գրում. ասում ա. խառնակություն, անորինություն կլինի, թագավորների ման... բայց հետո՝ յերեք տարուց հետո կխաղաղվի հիմքի ես ա՝ յերեք տարին անցել ա... կգա, անպաճառ կգա իսկական որենքը...

Այնուհետեւ նա ընկնում եր իր մտքերի ճահիճ-

ները։ Գնում եր իր յերեակայության յետուից ու մոռանում և խռոակցին, և իր դասախոսությունը։ Ազդ բաղեցին գուր կլիներ նրա հետ խռակը, նրանից մի բան հարցնելը։ Ամբողջավին տարված եր իր մաքերով՝ նա ել վոչ լսում եր, վոչ տեսնում։

* *

Դեղին նստարանի մարդը թվում եր անստարքեր գեպի սմեն ինչ, բայց նա մի դապտնի հետաքրքրություն ուներ գեպի արտաքին քաղաքականությունը։ Գուցե շատ քիչ դիպլոմատներ Սերքաշյանի նման սրտատրոփ սպասեցին քաղաքական լուրերին։ Հենց վոր լսում եր լրագրավաճառ տղաների ձայնը, ականջները լարում եր, անհանդիստ շարժումներ անում, նույնիսկ ձայներից գուշակում, թե ինչ լուրեր կարող եցին լինել։ Ցեթե արժեք եր տալիս ձայներին, լրագիր եր գուռմ։ Խոլ յեթե գուշակում եր, վոր իր ուղած լուրերը չկան, համառությամբ զսպում եր ինքն իրեն, և թեկուզ լրագրավաճառ տղաներն անցնում եցին մոտով ու ականջին բղավում, ձայն չեր հանում։

Շատ անգամ ել թեպետ հավատում եր, թե լավ լուրեր կան, բայց հուզմունքից սիրտ չեր անում անմիջապես իմանալ, այլ ձգտում եր այդ լուրն իմանալ մի ուրիշ, ավելի ուշացած աղբյուրից։

Ի նշն եր հետաքրքրում նրան լրագրերի եջերում։ Նրան չելին հետաքրքրում ժողովները, զեկուցումները, համագումարները, ինտերնացիոնալ սոցիալիզմ, կոմմունիզմ. . Նրան թվում եր, թե այդ տեսակ բաներն աստված հնարել ե մարդկությունը վոչնշացնելու համար, ինչպես, որինակ՝ մորեխը, խոլերան, տիֆը։

Նրան հետաքրքրում ելին լեվոպական մինիստրոները, նրանց խելոք ճառերը, նրանց կարծիքը սեփականության մասին, հետաքրքրում ելին նախկին մեծ իշխանները, «թագավորները», վորոնց մասին կարդացած ամեն բառը հիշում եր: Նա մեկն եր այն մարդկանցից, վորոնք դեռ հավատում ելին, թե կայսրը կենդանի լի, իսկ նրա տեղ դնդակահարել են մի «աննշան» սպալի:

Կարդում եր կամ լսում այդ լուրերը և զլանցով ապրում միքանի որ: Ապա սկսում եր կազմել յերեվակայության մեջ քաղաքական կուլիցիաներ, մեկ միացնում եր մտքում Անգլիային, Ֆրանսիային, Իտալիային, Ամերիկային ու շարժում անիծված «խորհուրդների» դեմ, մեկ ել ավելացնում եր դրանց վրա և փոքր պես ություններին, վոր ավելի լավ ճզմի իր «թշնամունք»:

Բայց ամենից գլխավորն այն է, վոր նա սպասում եր որերով, ամիսներով, թե անա կլսի, վոր երանե գալիս են: Զարմանալի հնարազիտությամբ պատճառներ եր գտնում, թե ինչու այս ամսում չհաջողվեց նրանց դալը, բայց հետեւալ ամսում անպատճառ կհաջողվի:

Յերեք հին հրեաներն այսպես սրտատրով չեն սպասել Մեսսիային, ինչպես Սերքացյանն սպասում եր Երանց. շատ անգամ յերեակայությամբ տարվելով՝ տիսնում եր նրանց այնքան մոտ, այնքան «իսկական», վոր կարծես շոշափում եր...

Նա սպասում եր, վորովհետեւ այդպես ելին ասում Աստվածաշունչն ու Եֆեմերդին, հին գրքերն ու լուսավորյալ Յեվոպան, վերջապես իր հին մարմնի մեջ

մի ձալն անընդհատ կրկնում եր, թե կգա իսկական, ամուր որենքը և կվերադաբնի իր սեփականությունը, իր մեծ տունը քաղաքի կենտրոնում...»

Նրա յերեակալությունը, թվում եր, ամբողջովին հատկացրած եր հենց միայն արդ լուրերի համար, նրանց սնուցյանելու և ուռճացնելու համար:

Ինչ փուլիթ, վոր ուրիշները կարծում եյին, թե Սերքաշյանը շատ մտածելուց խելքից շեղվել է, նրա հին ծանօթները խղճում ելին (ափսոս մարդ. ինչ եր՝ ինչ դարձալ), բայց նրանք չելին իւանում, վոր Սերքաշյանը ապրում եր ալդ լուրերով, յերջանիկ եր իր սոլասելիքներով...

* * *

Խորհրդավին ծառայող եր, անշուշտ. թղթապանակը ձեռքին, լրազիր կարդալով կամաց-կամաց անցնում եր ծառուղիով։ Յերեսում եր՝ ցրված մարդ եր, թե չե ինչու պիտի անցներ դեղին նստարանի մոտով։ ճանապարհն ազդաեղ չի ծովում։ Հաղթանդամ մարդ եր, խոշոր դեմքով, յերկար, ու մազերով, ակնոցներն աչքերին։ Ազահությամբ կարդալով մոտեցավ, կանգ առավ Սերքաշյանի մոտ, ուշադրություն չդարձնելով նրա վրա։

«Ես ի՞նչ նշանավոր բան ա գրած լրազրում, վոր ես մարդը ճամպեն ծոել ա ու հիմի յել լրազրից գենը վոչինչ չի տեսնում։ Հինի՞ թե հենց են ա կարդում, ինչին վոր յես եմ սպասում գիշեր-ցերեկ»—մտածում եր Սերքաշյանը։

Ու նրա քաղաքական ջիղը շարժվեց. «Զե, անպատճառ արտասահմանից նորություն կա. Հինի՞ թե

«թագավորը» շարժվել ա... զորքերը սահմանն անցել են... ենդուր եյին լրագիր ծախողները ենպես պինդ կանչում... Հենց ես ա վոր կա՞ գալիս են... սա յել մեր հեղափոխությունն ա»:

Ու մոռացած իր կասկածոտությունը՝ նա մինչև անգամ տեղից վեր կացավ, մոտեցավ այդ ոտարոտի հյուրին, վորն ալժմ նրա համար մի յերկնառաք ավետարեր հրեշտակ եր: Ու ել չհամբերեց, իր սիրած ու պաշտած հարցը տվից.

— Ներողություն. Բնչ նորություն կալրազրում. ձիշտ ա, վոր Անգլիան ու Ֆրանսիան պահանջում են, վոր մեր կառավարությունը սեփականությունը լետ տա:

Յերիտասարդը յերեսը դարձրեց գեղի Սերքացանն ու ակնոցների տակից թեք նայելով ժպտաց. նրա հայացքը կարծիս ասում եր.

— Դիտեմ ինչ և փորացավդ... այ թե ախորժակ ունես...

Ու զեմքին լուրջ արտահայտություն տալով՝ պատասխանեց.

— Այո, ճիշտ ե, Անգլիան, Ֆրանսիան, հետն ել Ամերիկան պահանջում են, վոր մեր կառավարությունն իսկույն ընդունի մասնավոր սեփականությունը և յետ դարձնի բոլոր գրաված կալվածները...

— Եղ ինչ... (Սերքացանն ուզում էր ասել՝ եղ ինչ լավ ե, բայց վախենալով՝ զսպեց իրեն). ուրեմն բոլորը միասին են պահանջում..., իսկ ինչպես են պահանջում, պատերազմ են հայտարարում...

Յերիտասարդը նորից ժպտաց, բայց դարձլալ զեմքին լրջություն տալով՝ պատասխանեց.

— Իհաւրկե ստիպում են և շատ խիստ միջոցներով, պատրաստել են զորքեր, նավատորմիդ, աերոպլաններ, ալինպես են սաստել, վոր մերօնք առանց պատերազմի լել իսկույն պիտի համաձանվեն; վորովհետեղ դիմ գնալու հնար չկա. նրանք շատ են ուժեղ:

— Իսկ յերբ են սկսելու, — ասաց Սերքաշյանը, չկարողանալով զսպել իր ուրախությունը:

— Շատ շուտով, միքանի որից հետո... մի շաբաթ ժամանակ են տվել. դադանի ուլտիմատում են ներկայացրել:

Ապա նա խորհրդավոր կերպով մոտենալով Սերքաշյանին՝ թեքվեց զեպի նրա ականջը.

— Մեր մեջ մնա, վոչվոքի շասեք. Մոսկվայից գաղտնի նամակ եմ ստացել. շուտով, ամսիս 15-ից Անգլիան և Ֆրանսիան պիտի շարժվեն և հարձակվեն Ռուսաստանի վրա. յերեք միլիոն զորք են ուղարկում, մեկ միլիոն ել աերոպլան, թագավորն ել պատրսոստ և Պարիզում. գիտե՞ք, իսկական Նիկոլայը զեռ կենդանի յե...

— Ի՞նչ եք ասում, — բացականչեց Սերքաշյանը, վեր թռավ տեղից ու, բռնելով յերիտասարդի ձեռքը, սկսեց թափահարել:

Յերիտասարդն անախորժ սարսուռ զգաց Սերքաշյանի ձեռքից. նրա չուծ աշքերը, բաց բերանը և ուրախությունից դողդողացող ձեռքերն ու ազոտվային ձայնը փոշմանել տվին իր արածը:

«Ի՞նչ հիմարություն եր սրան քնից զարթեցնելը. հիմի ենքան հարցեր կտա, վոր ինձ կսպանի»: Աւ շտապեց փախուստի դիմել:

— Կերողություն, գործի լիմ գնում, կուշանամ, —

ասաց նա, — մի ուրիշ անպատճիսունք, ցտեսություն,
վոչվոքի չասեք...

— Մնաք բարով, շնորհակալ եմ լավ խարարի
համար:

Բայց Սերքաշյանը ծարավ մնաց. նա կուզեր
յերկար խոսեր. հարցունիորձ անել այդ դուրեկան
լուրերի մասին. մի ձգողական ուժ քարշում եր նրան
դնացողի լետեից:

Հակառակ իր սովորության՝ սկսեց յետ ու առաջ
քայլել նստարանի առաջ. արագ-արագ զցում եր համ-
րիչի հատիկները ու ինքն իրեն խոսում, մապում,
զլուխը շարժում: Վոչ մի աղմուկ, վոչ մի մարդ զրսի
աշխարհից նրան չեր գրավում: Ցերկար ժամանակ
յետ ու առաջ եր գնում ինքնամոռացության մեջ:

Ցերեակայությունը բերում եր մեկը մյուսի յե-
տեից ավելի ախորժելի պատկերներ. ականջին հնչում
եր մի ուրախ ժխոր, զորքերի շարժում, յեկեղեցիների
զանգեր, բոլորն իրար շնորհավորում ելին, և մի դու-
րեկան խոսք եր հնչում ամենքի բերանից:

— Սեփականություն...

Արդեն մռւթն ընկել եր, յերը Սերքաշյանը վի-
րակարձավ տուն:

Կինը մի առանձին անհանգիստ հայտցքով հան-
գիպեց մարդուն: Նա իր ամեն ինչից վախեցող զեմ-
քով, սկ շորերի մեջ, սկ շալով փաթաթված, առանց
այդ ել սգավոր կնոջ պատկեր ուներ: Երատեսքն այն-
պես եր, վոր ամեն բոլեն թվում եր, թե պատրաստ ե-
զաղթելու և լաց լինելու: Ամբողջովին յենթարկվել եր
իր բախտին և կարծես վոչ մի գանգատ չուներ նրա
դեմ, ալլ միայն վախ և կասկած:

— Ես ինչի՞ ուշացար, հարցրեց նա վախեցած:
մոչինչ, խոսքի բռնվեցինք. մարդիկ ելին, թա-
ղա խարարներ եյին ըերեւլ:

— Յես ել ասում եմ ինչ և պատահել, չլինի
հիվանդացել ա, կամ բանտարկել են. սիրու շատ ան-
հանգիստ եք, գիշերս ել վատ յերազ եմ տեսել. առա-
վուար չասի, վոր սիրու խարար չըլի. մթամ դու բար-
ձրացար ծառի վրա, ու մեկ ել տեսնեմ, խմորի գնդի
նման փափկեցիր ու վեր ընկար:

— Բան չկա. եղ նշանակում ա, վոր մեր գոր-
ծուրը փափուկ կերթան:

— Ե՛, յերանի հանգիստ ըլենք. ջնաննամը թե
տունը խլեցին, միայն թե ականջո դինջ ըլի:

— Արխալին կաց, ամեն բան լավ կցնա. լավ
խարարներ եմ իմացուլ. շուտով կցնան... ամեն ինչ
առաջվա պես աըլելու, իմացմը... առաջվա պես...

— Ե՛, ի՞նչ ասեմ. շատ ենք եղպես հույսով լցվել,
մեկ ել նորից գատարկվել...

— Յերեք տերություն պետք ա գան մեզ վրա,
մեր որենքները փոխեն, բոլոր խլած տները յետ տան:

— Ո՞հ, ելի պատերանը կլինի. դե են ա ասա՝ կեն-
դանի գերեզման մտնենք, ելի, յեղածն ել նրանք կը-
տանեն, ել ի՞նչ կիմա մեզ:

— Զե՞, սա ուրիշ թաղավորներ են գալու, գալիս
են, վոր սեփականությունը տերերին՝ տան. չունքի,
ասում են, սեփականությունը սըբություն ա..

— Ե՞հ, յերանի եղպես ըլի... իմ հույսը վազուց
ա կտրվել:

Ու գնաց կերակուրը բերելու:

Սերքաշյանն ուտում եր բանջարեղենից պատ-

բաստած կերակուրը, ցրված մտքերով, չիմանալով, թե
ինչ ե ուսում: Հետո նստեց իր հին, խարխուլ բաղ-
կաթուին ու ընկղմվեց մտածմունքի մեջ: Նա համ-
րիչի հատիկներով հաշվում եր, թե ինչքան կարող է
ստանալ իր տան վարձից, յերբ յետ տան, վրան ավե-
լացնում իր և «այսքան տարվա վասները», վորոնք,
անշուշտ, պիտի վճարեր յեկող որինավոր կառավա-
րությունը, ու ստանում եր մի կլոր գումար: Հետո
այդ գումարը գնում եր իր առևտրի մեջ, ու իր հարստու-
թյունը զլորվող ձնագնդի նման մեծանում եր...

Այսուհետեւ նա մտածում եր, թե ում կտա վար-
ձով իր տունը, թե ինչպես կվոնդի հիմիկվա «ավա-
զակ» բնակիչներին. նրանց բանտարկել կտա, վոր լավ
խմանան, թե տունը «տեր» ունի: Հետո իր արտասահ-
ման փախած տղան կվերադառնա. միասին առևտուր
կտկսեն ու կմարեն, ու կմարեն... ելի քաղաքի կենտ-
րոնում, փառքով ու պատվով...

Կինը սգավորի գեմքով նստած լամպի առաջ՝
գուլպա յեր կարկատում ու ցաք ու ցրիվ մտածում
հազար ու մի մոռայլ բաների մասին, յերբեմն թեթև
ախ քաշելով: Ամենից շատ նա մտածում եր, թե կզան
կբանտարկեն իր մարդուն, իրըն հարստի, իսկ հետո,
ով գիտե՞լինչ կանեն... ե՞ն, յերանի իր մարդն ել աղ-
քատ լիներ, ինչ բախտավոր կլինեյին...

Յերբ նկատեց, վոր ամուսինն արդեն ննջում է,
շտապով վեր կացավ, ուղղեց անկողինն ու զարթեց-
րեց: Սերքաշյանը վեր կացավ, ախ քաշեց, ապա որոր-
վելով գնաց, պառկեց իր անկողնում ու իսկույն
քնեց:



Յենած և Սերքաշյանը, թէ դարթուն, յերակ է,
թէ իսկական բաներ և տեսնում. նա չի ուզում այս
հարցը պարզել, վորովհետեւ տեսածն ու լսածն այնքան
լավ է, վոր վախենում է յերջանկությունից զրկվի:

Ահա նա անցնում է քաղաքի կենտրոնական փու-
ղոցով. առաջվա պես ամեն պատճած մարդ գլուխ է
տալիս, նույնիսկ տները, թվում եր, բարեւում են իրեն:

Այնպես լավ որ է, թագավորի լայեղ որ: Փողոց-
ները ծփում են հին, յերեք գույնի դրոշակներով. ինչ
հիանալի գույներ են, սպիտակն ու կապույտը նրան
դուր են գալիս, գոնց վոր վաղուց կարուտած մի թան-
դագին բան:

Յեկեցիների զանգերը զողանջում են, հրավի-
րում թափորի: Հին կայսերական զորքերը լցվել են
փողոցները. սպանները ֆալլուն, պսպղուն շորերով շըր-
ջում են որիորդների հետ: Ի՞նչ ուրախություն է.
Սերքաշյանը այնպես է վերացել, հենց իմանաս յերկու
հարյուր հազար և տարել վիճակախաղում:

Դիմացից մոտենում է ձիավոր սպան, կանգ և
առնում Սերքաշյանի առաջ, զինվորական բարեւ և տա-
լիս ու հարցնում.

— Դուք եք պարոն Սերքաշովը:

— Այո, յես եմ:

— Դեներալը ձեզ կանչում է:

Սերքաշյանը մոտենում է, համբուրում սպայի
ձեռքը, համբուրում է նույնիսկ նրա ձիուն:

— Վիթսեղ և գեներալը:

— Ծիրանցանի մեծ տանը:

— Ես ըռպեցիս կզնամ:

Ու շտապի քալիկրով դիմում և աջ կողմի փողոցն իվեր։ Միբանյանի տան մուտքը ճիշտ առաջին նման եւ Սանդուղքները մոմով սրբած, սլալան դռնապանը զինվորական փալլուն կոճակներով։ Միջանցքում սպաներ են, մեկը մյուսից գեղեցիկ հաղնված։ Բոլորը ճանաչում են Աերքաշյանին և սիրալիր բարեւում։

Գեներալը նստած և բաղկաթուի վրա, վորպես աստված ահեղ գտատաստանի որը էերկար բեղերով ու մորուքով, հզոր, հրամայող ձայնով։

«Այս հասկանում եմ, կառավարիչն եսպես պետք ալինի. իսկապես վոր իշխան մարդ ա, մեր մածուն ուտող կոմունիստների նման չի», մտածում և Աերքաշյանը։

— Դուք ինձ ծանոթ եք յերեսում, — ասում և պեներալը. — պարոն Աերքաշյովը չե՞ք։

— Այս, ձերդ գերազանցություն, յիս կապալառու ելի ձեզ մոտ...

Խորը գլուխ և տալիս։ Գեներալը մեկնում և ձեռքը. Աերքաշյանը մոտենում ե, ուզում և համբուրել բայց գեներալը չի թողնում, միայն բարեւում ե։
— Այս դիմացի մեծ տունը ձեզն ե։

— Այս, իմն եր, բայց խլեցին. Եհ, ձերդ գերազանցություն, ինչ վոր յիս նրանցից քաշեցի, ել պատմել չեմ կարող (հուզմունքից ձայնը խղվում ե)։

— Եք մոռացեք, հին բաներ են. չեք տեսնում, քայլեկիկներին կախել ենք տների ճակատներից։ Այս տեսեք պատուհանից։

Աերքաշյանին այնքան տարօրինակ և թվում ուցդ լուրը, վոր վախենում և դուրս նայել։ Բոլց իր կարծիքը հայտնում ե.

— Զերդ գերազանցություն, պատիճն, իմ կարծիքով, թեթև ե. մենակ կափելն ի՞նչ... պետք ե առաջ սվիններով ծակծկեն մի հաղար տեղից, հետո միայն կախեն.

— Վոչինչ, վերջը մեկ ե' մահ և Գլխավորն այն ե, վոր զուք ձեր սեփականությունն այժմ կարող եք հանգիստ և ապահով վայելել: Ասացեք խընդիմ, ձեր տունը վարձով չեք տա մեր գրասենյակների համար:

— Ձեզ վեշքեց ե, ձերդ գերազանցություն. ձեզ պես պատվական մարդուց ի՞նչ հարկավոր ե վարձը:

— Վոչ, մենք չենք կարող վերցնել առանց վարձի, սեփականությունը սրբություն եւ

— «Ի՞նչ վոսկի խոսքեր», մտածում ե Սերքաւայնը:

— Ուրիմի, պարոն Սերքաշով, դուք քաշվում եք, ձեր զինը չեք ասում. լավ, յեթե մենք տանք ձեզ տարեկան 24 հաղար և վարձի կեսն ել ես գլխից վճարենք, կհամաձայնենք...

— Համաձայն եմ, ձերդ գերազանցություն, ի՞նչ պես վոր ձեր կամքն ա...

Գեներալն իսկուն հրամայում ե, վոր «ասիգնով-կա» գրեն, ապա նորից սեղմելով Սերքաշյանի ձեռքը, դադտնի կերպով ցուցամատով նրա ձեռքի ափը քուրում ե, վոր նշանակում եր, թե՝ «մի յերկու հաղարն ել ինձ կասս, դու յել կապրես, լես ել...»:

Սերքաշյանը խորը գլուխ և տալիս, աչքերով ժպտում ե, «համաձայնություն» ցուց տալով, ու իջնում է ներքեի հարկը փող ստանալու. Զաքմանալի լե. ի՞նչ սիրալիք են բոլոր ծառայողները. բոլորը ժըպտում են և աչքերով նշաններ անում:

«Զեր քաղցը աչքերի համար տասատաս մանեթ աձեր ջանը», մտածում է Սերքաշյանը, հիշելով անցրուը, յերբ նա զինվորական կապալառու լեր:

Մտանում է փողերը, բոլորը հին, կախերական 500-անոցներ, խշխշան ու նոր: Կատարյալ քեֆ և, ևս ինչ հեշտ կրանք և, հենց իմանաս գլուխան անիմսերի վրա լին շարժվում Սերքաշյանի վոտքերը:

Դուրս է դալիս փողոց ու քաղլերն ուղղում գեղի իր սելվական տունը: Ահա ծովեց գեղի աջ ու տեսալ զեռ հեռվից իր փայլուն, սպիտակ տունը: Ես ինչպես ե, վոր վոչինչ չի փոխվել ամեն ինչ նույն զրության մեջ, նույնիսկ ավելի նոր և թվում. բա մզ եր տառում, թե քարուքանդ են արել կոմմունիստները:

Հենց փողոցի անկյունում պատահեց կոմմունիստ Մարգարյանը, այն մարդը, վոր զրավեց իր տունը: «Ես վհրատեղից, —մտածեց Սերքաշյանը, —վո՞նց ակենդանի մնացել հըմ՝ չես փախչիլ ձեռիցս, բարեկամ, չես քեզ ցուց կտամ, թե ինչպես պետք աւ զրավես իմ տունը: Ափսոս, իմանայի, գեներալից կիմնդրեցի, վոր սրան մի առանձին պատիժ տար, հաղար չարշարանքից հետո կախեր»:

Ու արագացրեց քաղլերը: Մարգարյանը ներս մտավ իր, Սերքաշյանի սեփական տունը: Նա յել յետեից ներս գնաց դավիթ, բայց այնտեղ խիտ ամբոխ եր հավաքվել այնքան խիտ, վոր ասեղ զցելու տեղ չկար: Մանելուն պես Մարգարյանը լուծվեց ամբոխի մեջ ու կորափ, վոնց վոր մի կաթիլ ջուրը զետի մեջ:

«Իսս նայեց, գեն նայեց Սերքաշյանը: Մարգարյանին ել չտեսափ: «Զե՞ վոր: Ես տունն իրանի ա, սե-

փակտն; ուշեմն ինչ ունեն ևս մարդիկ, չգիտե՞ն, վոր արդեն վարձով տվել են:

Բայց նա կանգնել ե բակում ու չի կարողանում շարժել, առաջը կտրել ե խիտ ամբոխը պատի նման: Աւ վոչվոք իսկի ուշադրություն ել չի դարձնում նրա վրա:

— Ճանապարհ տվեք եց, ես իմ տունն ա, սեփական տունը...

Հա... հա... հա հոնում ե ամբոխը, և հզոր ծիծաղը վորոտի նման ցնցում ե Սերքաշյանին:

Հազիվ ուշքի գալով, նա նորից ե կանչում կորդը պատռելով.

— Լսում եք, ես իմ տունն ա, սեփական տունը, հին որենքով պինդ հաստատված, հիմա ելի առաջվա պես ա, իմացաք, առաջվա պես...

Բայց նորից ամբոխը թնդացնում ե ծիծաղը, Սերքաշյանը քիչ ե մնում վայր ընկնի, Նրան բռնում ե իր կողքի հաղթանակամ մարդն ու գցում վերև. մըուսը բռնում է, նորից գցում վերև ու ալդպիս իրար տալով նրան պտտում են ու վերջը դուրս գցում փողոց... վորտեղ նա ընկնում ե մի խոր հորի մեջ...

Զարթնում ե առավոտը շփոթված, անհանգիստ, սիրտը կարծես ասեղներով ծակծկում են:

— Ո՞հ, ես ինչ խառը յերազներ տեսա, — դիմեց նա կնոջը, — ի՞նչ քաղցր բաներ տեսա, առաջվա մեր կյանքը, ապրուսել, բայց շատ վատ վերջացավ, ենքան վատ, վոր սիրտ չկա պատմելու:

— Եես ել շատ յերազներ տեսա, վոչ մեկը միտս շնաց, Ե՞հ, ինչ անենք, յերիսիդ խաչ հանի, յերազի բարին կկատարվի:

յածը ձայնով,—բան եմ՝ ասում. թազա խաբար լսել ես; Երեկ մեկն ինձ ասեց, թե նամակ ա ստացել Մոսկվայից, մթամ յերեք տերություն գալիս են մեզ վրա, պահանջում են, վոր սեփականությունը լետ տան տերերին:

— Ի՞նչ ասեմ, յերանի հավատացողաց, եսքան տարի վոր հավատացինք, ի՞նչ տարանք. ախպեր, յես նազդ մարդ եմ, գալիս են, չեն գալիս՝ իրանք գիտեն, միայն մինչև աչքովս չտեսնեմ՝ չեմ հավատա: Սուտ բաներ են, այ, նազդն եսորվա գաղեթն ա, այ, տես, մեծ-մեծ տառերով գրած ա ճակատին, թե յերեք տերություն մեզ ընդունում են, ճանաշում են, հաստատում են... իմացմը, այ ինչն ա զբուստ... տար ինքդ կարդա, կտեսնես:

Սերքաշանը մնաց շվարած ալս անսպասելի լուրից: Զկարողացավ նույնիսկ բան ասել, վերցրեց լրադիրը, առանց մնաս բարե ասելու, վիրավորվածի նման քայլեց դեպի քաղաքային ալզին:

— Խեղճ մարդ, խելքը շարժվել ա,- ասաց ինքն իրեն Մարությանը, — հեյ գիդի, ինչ կորցրեց...

Լավ եր Ոհանեսը մի սուր դանակ խրեր իր կուրծքը, քան թե ալս դաժան լուրը հաղորդեր:

Ի՞նչպես... նա չեր կարողանում հասկանալ. Ի՞նչ պես կարող ե մեր կարգերն ընդունել, մեզ հետ հաշտվել լուսավորյալ Յեղուպան, չե՞ վոր նրանց մինիստրները պատրաստ են մեր արյունը խմելու:

Չե՞, սա մի նոր դժբախտություն ե, եստեղ մի ուրիշ գաղտնիք կա, վոր նրան անհայտ ե: Սա ել մի հեղափոխության նման բան ե, վորը նա չի կարող բացատրել...

Ամայի յեր այգին, ծառուղիները ծածկված տերեներով։ Որը ցուրտ եր, մրսում եր, բայց չեր ուզում տուն գնալ։ Տիուր եր, հուսակտուր, ինքն ել մերկանում եր իր յերազներից, անրեաթափ ծառերի նման։

Ուրեմն ես բոլոր մտածմունքները յերադ ելին, ուրեմն ել չեն գալու... Իսկ ինքն այսքան ժամանակ սպասել ե... Գուցե սխովլում ե Ոհանեսը... Բայց չեղ վոր նա մեր մարզե ե, ինչի՞ պետք ե ծոփ իր ասածը, վերջապես լրագիրը...»

Բայց ե անում լրագիրը, ակնոցները գնում աշքերին. ճիշտ ե, ճակատին մեծ-մեծ տառերով դրած ե, նա միայն մի մասն ե կարդում, ել ուժ չունի բոլորը կարգալու, բայց հարցը պարզ ե, բավական ե մի խոսք կարգա՝ «ճանաչում են»։

Ուրեմն անցավ ամեն ինչ, ել յետ չի գալու։ Մեջը տիրում եր մահացու հուսահատություն, մի ցանկություն եր գալիս վոչնչանալու, հեռանալու ես զժվար հասկանալի աշխարհից...»

Հանկարծ ցնցվում ե սրտի ծակոցից, կարծես մեկը ճանկուում ե ներսը։

Վեր ե կենում, վոր տուն գնա, բայց զգում ե, վոր լեթե շարժմի, իսկույն վայր կընկնի, չի կարողանում նույնիսկ կանգնած մնալ, նստում ե ու կաշկանդվում մահվան դատապարտվածի նման։

Յերբ բավական ժամանակ անցնելուց հետո ուշքի յեկավ, նայեց չորս կողմը, այդում ամեն ինչ տարորի նակ եր թվում, ասես ինքը վաղուց մեռած ե յեղել և վերադարձել ե նորից։

Բայց նա հիշում ե, վոր վաղուց, շատ վաղուց սպասում եր Երանց գալուն։ Վերքան սխալվում եր, չե՞ վոր Երանք ել մեռած են և ել յետ չեն գալու։

Հանում և իր ծոցատերը, թերթում և իր գրած-ները. ահա Աստվածաշնչի, Եփեմերդիի կտորները. չե, ալդ բոլորը քամի յեր, յերազ եր... նրանք մեռել են, և հենց լրագրութիւն ել եղ և գրած:

Ու մատիտը հանելով՝ գրում և գանգաղ, գողգո-դացող ձեռքով՝ Ապա նորից ծակոցներ գդալով՝ թու-լանում ե, նվազում: Ծոցատերը ձեռքից վայր և ընկնում: Հետզհետե մարելով՝ մոռանում և ամեն ինչ. ալլես վոչ մի ցանկություն չուներ, ել վոչ վոքի չեր սպասում...

* *

Կեսորի մոաերքին ալգեպանը տերեները մաքրե-րով մոտենում եր Սերքաշյանի ծառուղիին: Նրա աչքովն ընկավ մի նոր հանգամանք. Սերքաշյանը կիսաթեք հենվել եր նստարանի մեջքին, իսկ նստարանը թեքվել եր կոտրած վոտքի կողմը:

«Ես ի՞նչ և պատահել», — մտածեց ալգեպանը ու սուր աչքերը հասկեց Սերքաշյանի վրա: Մոտեցավ ա-վելը ձեռքին, նորից զիտեց, ապա ձեռքով կամաց շարժեց: Սերքաշյանը չզարթեց: Չլինի՞ թե մեռել ե, անցավ ալգեպանի մտքով, նորից շարժեց ավելի ու-ժեղ, դարձալ կհնդանության նշույլ չկար: «Մեռած ե, իսկական մեռած...»:

Ալգեպանի խիտ մորուքի մեջ կորած աչքերում մի կիսահեղնական խղճանք յերեաց, իբր թե ասում եր՝ «Ես եր, ելի՛, քու վերջը»...

Սերքաշյանի հին, յուղոտված գլխարկը. ծովել եր գլխին, նրա վրա մի տերեւ եր ընկել, ու յերեում ելին թռչունների աղբի հետքեր: Կարծես վոչ թե մեռած

եր, այլ անշարժության խոստում աված հնդկական
ճգնավոր եր, վորի վրա համարձակ կարող ելին նստել
թռչունները:

Նրա վոտքերի մաս ընկած եր բաց լրազիրը,
վորի ճակատին մեծ-մեծ տասերով զբած եր, թե
յեվրոպական պետությունները ճանաչում են Խորհրդ-
դային Միությունը:

Իսկ յերբ յեկան միլիոններները, վերցրին ծո-
ցատեարը, նրա մեջ Աստվածաշնչի, Եփեմերդիի կտոր-
ներից հետո կարգացին հետեւոլը,

— Մեռավ իմ սեփականությունը, յիս ել թող
մեռնեմ նրա հետ...

1926թ.

ՏՐԱԿՏՈՐԸ

(ԲԱՆՆ ՈՒՐԻՇ ԹԱՎՈՒՐ Ա. .)

Մի շաբթից ավել եր՝ Դանելը մտքի յետեից ընսկած՝ կարծես հալածված՝ տեղ չեր գտնում գյուղում։ Արդեն գութանավարի ժամանակն եր. ով լծկան ուներ՝ վարում եր, իսկ Դանելը և իր նման չունեռները մնացել եյին կրակի մեջ, ձիշտ ե, միքանխոը կիսովի վարել ելին տվել իրենց արտերը, բայց եղ ճամպեն ել փակ եր Դանելի առաջ. նա շատ լավ զիտեր, վոր յեթե զիմի ունեռներից մեկին, հենց թեկուզ Տերունանց Սհակին, Ենակես կղաղվի, վոր մինչև վերջին շունչը չի մոռանալ. Վոնց վոր շատերին, Ահակը Դանելին ել ոձի նման կխայթի. նա կասի են խոսքերը, վոր ասել եր միքանխոներին.

— Գնա՞ թող քու կառավարությունը քեզ ոգնի։ Յեվ վժնց չասի, վժնց չհանի իր սրտի մուռը, քանի վոր Դանելն իր ընկերներով միշտ Տերունանց Սհակի ու նրա նմանների դեմ ե խոսել. Հիմի եղ բոլորից հետո գնա նրա զուռն ընկնի, թե ինչ ա՞լ լըծկան տուր՝ արտս վարեմ... չե, եղ լինելու բան չի. մահը դըանից լավ ա...»

Դեռ հիմի յել Սհակը մին-մին դաղում և Դանելին ես յերկու կիրակի յե՝ Սհակը վոչխարի չաղ բուզ դը ձեռին՝ Դանելի տան առաջովմ անց ե կենում. զիտմամբ նրա կողմօքս ե անցնում, ցույց տա-

լու համար, թե՛ տեսնք, տեսնք, միս եմ տուն տանում. յես ելի են առաջվա Սհակն եմ, ելի յես միս եմ ուսում, իսկ դուք՝ չիփլախներդ, բերաններիդ ջուրը դնալով մտիկ եք անում: Հենց թեկուզ ամեն նստելիս թնչ ե խոսում Սհակն իրեն ուզած մարդկանց հետ. մեկ-մեկ ձենք հասնում ե Դանելին: Մթամ, առում ե, եսքան հակալ-հակալ արին, հողերս խլեցին, անունս կուլակ դրին, ընտրելու իրավունքից զրկեցին, վերջը թնչ տարան... յես ելի են եմ.. ելի եղ անողները պետք ե գան վոտներս ընկնեն, լծկան ու գութան ինողրեն...

— Զե՞, ելի յեղակալել ա եղ անիծածը, — մտածում եր Դանելը, — լավ կըլեր մին ել թափ տայինք, համա թնչ անես, վոր հրաման չկա... պետք ա թողնենք, վոր միքիչ լինանա: Հենց եղ ել իմանում ա, ենդուր ա եղակս յերես առնում. մի տես՝ վճնց ա վոռը հուզ տալիս, յերբ իր դուռը մարդ ա գալիս՝ խնդրում, վոր կիսովի արտը վարի. քանի անդամ տանում-ըերում ա, չարչարում, ձեռը լիգել տալիս, նոր վարում: Խակ Կարապետանց Մուշելի գլուխը թնչ ոյին եր հանել. կարելի՞ յա մոռանալ. դեռ ասել եր՝

— Աքխային կաց, արտդ կվարեմ, փողն ել հեշտ ա, յերբ կունենաս՝ կտաս:

Բայց ժամանակը վոր յեկել եր, Սհակը լծեր եր գութանը, ամեն թնչ պատրաստել ու վերջին ըոպեյին կանգնել, թե՝

— Փողը հանիր տուր, թե չե՞ դու զիտաս, վարել չեմ:

Ու մինչև որս ել Մուշելի արտը մնում է վարելու:

Զե՞, Դանելը Տերունանց Սհակի կամ նրա նմա-

նակի դուռ գնացողը չի, թեկուզ տասը տարի սոված
մա իր ընտանիքով, Բայց ի՞նչ անի. վժրտեղից ճար
գանիւս ցանիր չես՝ հնձիլ չես... մի տուն յերեխերդ
կմնան քաղցած...

Մտածում եր Դանելը՝ կանգնած իր տան սրա-
հում միտքը զես-դեն զցում, կանգնած տեղը վոտք
կոտի վրա փոխում, բայց մի ձամպա չեր գտնում
ի՞նչ պայծառ, բանելու որ ե, բայց ի՞նքը փետի նը-
ման կանգնել ե ու չի իմանում՝ վոնց անի, ում
դիմի...

Դանելի կինը նստած նույն սրահում՝ յերեխանց
կարկատանն եր անում: Նա աչքի տակով հետեւում
եր մարդուն, զզալով, վոր նա լել նույն դարդի մեջ
և, ինչպես և ինքը: Մեկ-մեկ խորը շնչում եր, զսպե-
լով ինքն իրեն մի քաշելուց: Կանացի սիրտն անհամ-
բերությունից պատովում եր. «Ես ա որերը կանցնեն,
խալխը կվարեն, կլիանան, մեր արտը կմնա խոպան,
վորքի նման, ել ինչմի ապրենք, ում դուռն ընկ-
նենք»...մտածում եր Հոռոմսիմը ու մի առիթ փընտ-
ռում, վոր մարդուն ես բոլորն ասի, թեպետ որ չեր
անցնում, վոր եղ մասին խոսք չբացվեր:

Փոքրիկ Արտօն՝ Դանելի տղան, բոքիկ վոտնե-
րով, վաղեվաղ յեկավ-կանգնեց մոր առաջ ու հեինե
վրա բերեց.

— Հաց եմ ուղում:

— Ի՞նչ հաց, նոր չի տարամր, — ասաց մալրը, —
հենց ես իմանում՝ ամբարներդ լիքն Ե՞ն... եգուց ելոր
հացը կպակսի. փոքրիդ միքիչ հուզ տուր: Գնա վեր
կաւ քիչ կտրի, շանը չտաս, թե չե ինձանից չես
պրծնիլ:

Յերբ յիրեխան հացը կծռտելով կուրս գնող փող,
կինը դարձավ Դանելին.

— Ես որերն անց են կենում, թնչ ես տաղ ա-
րել խալիք վարում են, դռւ թնչ ես մտածում. եզուց-
ելոր քեզ հաց ու հարկավոր, յերհիսանցդ թնչ պա-
տասխան ես տալու:

— Ե՞, թնչ պաի անեմ, յանի դու չես խմանում,
վոր վոչ լծկան ունենք, վոչ զութման:

— Դու միշտ հա եք ես տառմ, զետենում ես՝ չու-
նեցողն ունեցողին ա կպչում, հետք լոլա գնում, վա-
րել տալիս, բա կազնելով բան կը լի. հրեն Տերունանց
Մհակը քանիսինն ա վարել:

Տերունանց Մհակի անունը կարծես շամփու-
րով դադեց Դանելին. նու պատասխանեց զրգավաճ.

— Հենց մի զլուխ տակից-զլիսից խոսում ես, յես
քեզ ասել եմ՝ աղամարդու բաներում մի խառնվիլ:

— Են վաղ եր, վոր եշը կաղ եր, ել են ժամա-
նակը չի, վոր կնիկը բերանը կապի, ուռա կենաւ թնչի յես
ել իմ խորհուրդը չասեմ. խի, մենակ խելոքը զու լիս...

— Բա բու թագա խելքդ վնրդի մնաց. մթամ ա-
սում ես՝ զնա Տերունանց Մհակին խնդրվի. բա վնց
չես միտ զցում՝ քանի՛ անգամ ենք շան լափը զլիսո-
վը տվել խալտառակ արեր. հիմի թուք ու մուքը կու լ
տալով գնանք մեղա զանք:

— Թնչի պաի մեղա զաս, եղ եր պակաս. քեզ
պես միքանիսդ զնացիք ճակատ-ճակատի կաղնեք ու
վարել տվեք արաերը:

— Ներողութին կանես. ել առաջվա պես չի, ը-
տենց իբավունք չկա. խաթրով, որենքով թե կարաս
կանես, թե չե՞ ճակատ-ճակատ չկա... Համ ասում ես՝
լոլա զնա, համ ել, թի՛ զոռի կաղնեք:

— Վանց թե իրավունք չկա. վոր սուսն կենաս ու որենք-որենք անես, քեզ հաց տվողն ով ա: Թաղա ու ըենքն են ա, վոր աղքատն ապրի. բա երեխանցդ հու կտորելու չես: Թե գլուստը կուզես՝ տղամարդիկդ փալաս եք դառել. շատ եք խոսում, ամա թուրներդ կտրուկ չի:

— Յանի եղ լեզուկ առանց են ել մի բան չեր, հիմի լել ես թաղա բաները լսել ես, թթուն կծու չես արել... Թուրը կտրուկ չի... քեզ հմար աշխարհս դուզ ա... լավ կտրուկ ա թուրս, ամա վոր կտրելու բան չկա...

— Բա լավ, մենք դնանք ջուրն ընկնենք, իսկ Տերունանց Սհակի կնիկն ու երեխերը գաթա ուտեն ու նախշուն չթեր հագնեն, փոփոան... մի ասա տեսնամն վորն ա քու որենքը, ապրելն ա, թե մեռնելը. իմ ասելն են ա, վոր ձեր ձենը պտի լսել տաք. քարը պատռեք ու ձեր արտերը վարել տաք:

— Դու վոր ըտենց մեծ-մեծ բրդում ես, նրանից ե, վոր աշխարհից բեխաբար ես. հենց իմանում ես՝ քու հրամանին ա, վոր ինչ ուզես՝ անես. ախպեր, ասելդ թնչ ա, քանի փափախս գլխիս ա, յես Տերունանց Սհակի դուռը չեմ դնալ. թե սրտովդ ա, դու գնա:

— Են ա ասա՝ որս սե ա, սե ա, ելի... բա են մեծ-մեծ խոսելն ընչիս եր, յերը վոր ես որը պտի մթնացնեյինք... Են, վոնց ուզում ես՝ արա. իմ որը սե ա ըլել սե ել կմնա... ել են ջուրը, ել են ջադցը...

Ու կինն սկսեց լաց լինել՝ զսպելով իր հեծկուտոցը:

— Դե լավ, ի՞նչ ես քեզ ու քեզ վասվառմ, աղամարդու գործ ա՞ տղամարդն ել կանի, զու լավ կանս՝ քու կարկատանին ու իլիկին մտիկ անես:

Ասաց Դանելն ու զանգաղ քաղցրով գուրս յեկալ փողոց:

* * *

Գյուղխորհրդի սրահում հավաքվել ելին մի խուժը գյուղացիք ու աղմկում եյին: Դանելին զուր եր գալիս եղ աղմուկը, կարծես հույս եր տալիս, ճամպա ցեր բանում իր ծանր գրությունից գուրս զալու համար:

Մոտ զնալով նանկասեց իրեն լավ ծանոթ գյուղանտեսին, վորը խոսում եր զյուղացիների հետ և ինչ-վոր գրում ծոցառեարում: Նրա յերկաքացած մորոքը, արեից այրված զեմքը ցուց եյին տալիս, վոր վազուց և գուրս յեկել քաղաքից: Իր զեմքի բարյացակամ և ուշագիր արտահայտությամբ նա շատ նման եր յերեխաներից սիրված ուսուցչի, վորն իր շուրջը հավաքած աշակերտներին՝ բարի և ներողանիտ ժայռով ամենքին ել հավասար լսում և և բավարարում: Գյուղացիք մեկը մշուսի առաջը կտրելով խոսում ելին այնպես բարձր, կարծես լառը զյուղի մյուս ծայրին եր: Հատ ու կտոր լսում ելին.

— Թե լծկանի ճար չարիք, լավ ա զնանք ջուրը թափվենք...

— Մեր հույսը զուք եք, թե ապրենք, հն ա ձեզ զանով կապրենք...

— Մեզ մեր հարուստների ճանկը միք քցիլ խեղում են.. զիմանալ չենք...

Դանելը մոտեցավ զյուղատանտեսին,

— Բարով եք լեկել:

— Այ բարե, վճնց ես, Դանել, դու ի՞նչ կասես ձեր գյուղի կարիքների մասին:

— Դե ել ի՞նչ ասեմ. են ա սաղ գրանից են խոսում. լավ տենում ես ել՛ ի՞նչ որն ենք ընկել:

Ապա նկատելով, վոր Տերունանց Սհակի տղեն գյուղացիների մեջ կանգնած լսում ե, շարունակեց, ուղենալով ծածկել իր բուն ասելիքը.

— Դե դուք ել լավ հասկանում եք, թե ի՞նչ հայի լենք. մի խոսքով՝ իս ձեզ իմաց եմ անում, վոր բանն ուրիշ թափուր ա. պետք ա ոգնությունը հենց հոգուն վրա հասնի:

Գյուղատնտեսը ժպտաց:

— Ասում ես՝ բանն ուրիշ թափուր ա... լավ, վոր եղած ե, կաշխատեմ՝ մի ճար անեմ ձեզ համար:

Գյուղատնտեսը նախագահ Պետրոսը, վորը փոքրահասակ, նիհար դեմքով, ինքնահավան մարդ եր, իր պարտքն եր համարում ամենքի խոսելուց հետո բացատրել նրանց ասածը ու նորից կրկնել ամեն ի՞նչ: Նա փորձեց խոսել Դանելից հետո.

— Հընդեմ, ասեմ, թե մեր գրությունը վոնց ա. ես մեր գեղը հո տենում ես շատ ժարդ կա, վոր վոչ լըծկան, վոչ գության չունի. հիմի ասենք վարելու ժամանակն ե հասել...

* — Ներովություն, — ասաց գյուղատնտեսը, կըտրելով նախագահի խոսքը, — զե ի՞նձ համար պարզ ե ձեր գրությունը. այ ի՞նչ եմ մտածել. թող ձեզանից յերկու հոգի զան ինձ հետ միասին գնանք խորխըրդային անտեսություն. ենտեղ կինդրենք, վոր ձեզ տան են նոր բերած մաշինի գրութաններից, վոր տրակ-

տոր են ասում. կարելի յէ տեսած լինեք՝ առանց լըծ-կանի վարում ա:

— Այ շնորհակալ ենք, — ձայն տվին գյուղացիք:

— Տղերք, իմացմք, — ասաց Դանելը. — գե յեկեք՝ յերկու մարդ ջոկենք, վոր զնան մեր հընդեր գյուղատնտեսի հետ:

— Դե են ա մինը մեր նախագան կըլի, մինն եւ զու, ել թնչ ջոկենք, — ասաց գյուղացիներից մեկը վորն ամենքից տարիքով եր:

— Հոժար ենք, հոժար ենք, — ձայն տվին դլուղացիք:

— Յեկեք զնանք՝ միքիչ դինջացիք, — ասաց նախագահը գյուղատնտեսին:

— Վահ, չեմ կարող, հենց հիմա պիտի զնամ. շտապ գործ ունեմ:

* * *

Խորհրդացին անտեսության կառավարիչը խոսում եր մշակների հետ, յերբ պատգամավորներն ու գյուղատնտեսը ներս մտան: Կառավարիչը կարճահասակ եր, լիքը մարմնով, արեկց թխացած կլոր դեմքով:

— Բարե ձեզ:

— Բարե. հը՛, թնչ խարար ե, լերեքով եք դալիս, — ասաց նա ժպտալով ու իր լախն, մսոտ ձեռքը տվեց լերեքին ել:

Գյուղատնտեսը մի կողմ քաշեց կառավարչին ու բացատրեց գործի եյությունը:

— Հա, բանն եսպես ե, — վերջացրեց նա. — հիմի ես մարդկանց հույսը քեզ վրա յե, պիտի մի ճար անես:

— Թիմե՞ք ինչ կա, — ասաց կառավարիչը, մոտենայով գլուղացիներին, վորոնք ուշադրությամբ հետեւուն եյին նրան, ուղենալով գուշակել իրենց խնդրի վճիռը: — տեսնում եմ, վոր թունդ նեղն եք ընկել: քայլ վանց անհնք: յերկու տրակտոր ունենք. մեկը մեղ համար հարկավոր ե, մյուսն ել փշացել ե:

Դանելն առաջ ընկավ:

— Հընգեր ջան, վոր եսոր քու դուռն ենք յեկել: իմացիր, վոր տեղներս շատ նեղ ա, պետք ե մեր կուլակներից մեզ ազատեք են ա ատամները սրած սպառում են, վոր մեզ զգեն: հատուկ խնդրում ենք՝ մեղ վրա քաղցր աչք ունենաք. եսքանին իմացեք, վոր բան ուրիշ թափուր ա...

— Ի՞նչ ասիր...ուրիշ թափուր ա... հա, հա հա... — սկսեց հոհուալ կառավարիչը. — Ի՞նչ մազալու բան ասիր. չե՛, տեսնում եմ, վոր լավ աղերք եք. բայց իմ բանն ել զժվար ա... ախաբեր, դրուստն ասած՝ զործը մեր վարպետի ձեռին ա. գնանք տեսնենք՝ ինչ ա ասում:

Ու քայլերն ուղղեց գեպի բակի մյուս ծայրի շինությունները: Յեկողները հեաևեցին նրան:

Վարպետ Վոսկանը փոքրիկ արհեստանոցում իր յերկար քիթը ցից՝ խորասուղղել եր զործի մեջ. խարտոցում եր ինչ վոր մեքենալի մասնիկ:

— Բնկեր Վոսկան, ես մարդկանց հո տեսնում ես. կարճ և ազդու ասած՝ սրանք վոչ յեղներ ունեն, վոչ գութան. յեկել են տրակտոր խնդրեն: Ես մեր փշացած տրակտորը պիտի նորոգենք, իրենց ուանք. հիմի քեզ վրա յա, ինչ ուղում ես՝ արա, հնարքով լինի, թե հրաշքով՝ պիտի ես մարդկանց տրակտոր տաս. պիտի հարվածալին հարված տաս ու մեքենան նորու-

կես: Եսքանն իմացիր, վոր ինչպիս ես ընկերն ասաց՝
բանն ուրիշ թափուր ա...»

Վասկանը հանկարծակիի լեկած կառավարչի վըձև
ատկան տոնից՝ նայեց նրա զեմքին, կործեռ տուռ
դեմի, թե վարքան հաստատ և նրա կամքը:

— Ըսկեր Արշավիր, ձեզ հայտնի յա, վոր գործող
խեղիված եմ. մի կողմից ել հարկավոր նյութեր, որը
ծիքներ չկան կաշխատեմ, թե հնար կլինի, դրանց
բախտն ե.

— Լավ. ուրեմն վազվանից կոկսա: Իսկ զուք, ըն-
կերներ, նո լսեցիք. են ո մի շարթից հետո կգաք,
թե պատրաստ կլինի՝ կտանեք արակտորը:

— Ծնորհակալ ենք, մնաք բարով:

Դանելն ու նախազահը ճանապարհվեցին դեպի
զյուզը:



Ամբողջ շաբաթը զբուզն իրարանցման մեջ եր:
Դանելի խումբը, վորին նա «չիփլախների թարուն»
եր անվանում, մեծ հուսով սպասում եր «մաշինի գու-
թանին»: Իսկ ունեսորները—ելի Դանելի անվանած
«դմբուզականները», կամ կուլակները—վորանեղ նըս-
տում, ծաղրում եյին հավատացողներին, ծաղբում ելին
«սուտլիկ» զութանը և կասկածում նրա դալու վրա:
Բայց այսքանը կար, վոր քանի մոտենում եր սպասած
ժամանակը, այնքան ավելի լիր ուժեղանում անհան-
գիստ, լարված դրությունը զլուզում: Ազքատները մեկ-
մեկ ծաղրի ու կասկածանքի ազդեցության տակ իրենք
ել արարակուսանքի մեջ ելին ընկնում, մտածելով, թե՝
հանկարծ արակտորը չգա, ու իրենք հարուստների

սըտով լինեն, ավելի նեղն ընկնեն։ Իսկ հարուստ ողմբուզականները» նախանձից զբգովում եյին, կարծ ծերով, թե կարելի յի եդ զութանը մի ենպես հրաշք ե, վոր աղքատներին իբնացից կբարձրացնի ու նրանց առանց այն ել էերկար լեզուն ավելի կերկարացնի։

Կիրակի առավոտը զաղթական Տիգոն, — տհուեսութան բանվորը — յեկավ Դանելի տուն.

— Երախօքը բագրատ ե, — ասաց նու ցածր, խոպոտ ձայնով, մի աշքը շիլ անելով։

— Ի՞նչ զոխուր, ի՞նչ ես ասում։

— Երախօքը, մաշինի գութան շինած-բակ-րասդ ե։

— Պա, քեմատաղ, դե ըտենց ասա ելի... ապրես, քեզ մի խալաթ եմ տալու։ Դե արի գնանք, տղերասցն իմաց անենք։

Յերբ նրանք անցնում ելին գլուզի զլխավոր փողոցով, Սարուի խանութի մոտ (նրա ավել անունը «չորացած Սարո» իեր), զերանների վրա մի խումք զյուղացիներ նստած զրուցում ելին։ Կենտրոնում Տերունանց Սհակն եր, նրա շուրջը՝ գլուզի մյուս ունեցորները, բայց նրանց մեջ կային միքանիսը այն զյուղացիներից, վորոնց չեր կարելի դասել վոչ ունեցորների, վոչ աղքատների կողը, և վորոնց մասին Դանելն ասում եր, թե նրանց մի վոտը տաքումնե, մյուսը՝ սասումը։

Տերունանց Սհակը նստած զրությամբ շատ նման եր այն կարճ ու հաստ կաղնիներին, վորոնք վոչ մի կացնի մոտ չեն թողնում։ Իր թափթփված քեղերի արանքից նա խոսքեր եր շաղ տալիս «մաշինի գութանի» մասին։

— Հա, են ա ելի՞, պլուխները լեղոտ կըլի, բան ու կհրծ են շինել եղ շինմաշինի մաշինի գութանը՝ ել չեն իմանում, վոր տակը բան չկա խելքները կորցը-րել են, ուզում են, վոր մենք ել կորցնենք, ախար, հայ հայ անելով արտ չի վարփիլ, Առանց լծկան դութան կըլի՞... քիչ ել կենան, կասեն՝ յերկաթի մարդ ա զալիս...

Դանելը մասնում եր Տերունանց Մհակի յետելից նա մատղիր եր անցնել առանց ձայն հանելու, բայց եղ վերջին խոսքերն ենակես վառեցին նրան, վոր կտնդ առավ.

— Մինն ասի՞ ի՞նչ ես քեզ ու քեզ խորովվում, վախիլ մի, Տերունանց Մհակի սրտովը չի ըմբէ. հենց լավ ել իմացած կենաս՝ մաշինի գութանը գալիս ա ասելիդ ի՞նչ ա, հազիր են առես, ինչ վոր սրտումդ ա... զու չիս ուզում, վոր են աղքատն ել որ քաշին

— Ախար, ինչի՞ս վրա յիս ասում, թե սրտովս չի. հերիք ի՞նչքան տունս քանզեցիք. ի՞նչս եք տեսել վոր իմ վատն եք խոսում. բա ես խալխի լավը վոր չուզենամ, լծկանս ու գութանս հսքան մարդի կամմի:

— Եղ վոր տալիս ես, մուհոտա յիս տալի՞ս. տասն ան տամ յեղը քաշում ես. չինի՞ թե՛ են ցորենն ու փողը վոր առնում ես, քու տունը չի մանում: Են ել ում տալիս ես՝ քու ճորտն ես շինում:

— Ախար, դե են ա միանգամից գյուլի տակ տվիք, պղծէք ելի՞. թող միանգամից քոս ու փուչ ըլեմ, վերջանամ: Զաթի ձեղանից որ չեմ տեսել. թող սրանից դենը չքվեմ. մի երկու լեզն ունեմ, ախար, թող են ել չըլի, կարելի յա ձեր սիրաը դինջանա:

— Քանի գոփող ըլես, անունդ գոփող կասեն.
դու շատ լավ գիտես, թե մեր ուզածն ինչ ա. եղ դու
լես, վոր ուզում եմ ինչ վոր կա, քեզ մնա, ու խալին
ել քու դուլը դառնա... դե գնա մի մատաղ արա, վոր
քու սրտովլը ըլի, մաշինի գութան չգա:

Դանելը շարունակից իր ճանապարհը Տիգոյի հետ,
իսկ Սհակը խեթ նայելով նրա յետեից՝ մտքում հայ-
հոյում եր, իրեն շրջապատող գյուղացիք բերանները
հուզ տված՝ քաղաքագիտորեն լուսմ եյին, չոփերով
քչփորելով գետինը:

— Ախալեր, ես ինչ խարար ժամանակ ա,—ա-
սաց խանութպանը՝ «չորացած» Սարոն, զգուշու-
թյամբ գիտելով չորս կողմը իր չուած, վախ կերած
աչքերով,— խերը հու կորել ա, լավությունն ել հետը.
լավ խոսքն ինչ ա՝ են ել ա չքացել: Են որն ել տեր-
տերն եր ասում՝ մի տեղ վոր աստծուն հակառակվեն՝
բա մարդ մարդի չի հակառակվի՞լ... Հիմի դե գութան
ենք բերում՝ կոփվ ա, ես կոմպերատիվ կուսակցութին
ասեն՝ բոլորը լանդովը կոփվ ա. մեր ա առաջվա ժա-
մանակը. եհտիբար կար, յոլա գնալ կար... չե, ախալեր,
խերն ու լավությունը գնաց, ել յետ չի գալ...

Տերունանց Սհակն առանց լսելու խանութպա-
նին՝ վեր կացավ, փեշերը թափ տալով ու փնթվնթա-
լով գնաց դեպի տուն:



Հենց վոր գլուղում ձայն ընկավ տրակտորի գու-
լու մասին, ել մարդ չմնաց՝ դուրս յեկավ թամաշա ա-
նելու: Սկսած գյուղի ծայրի ջրաղացից մինչև կոռպե-
րատիվի առաջի հրապարակը տրակտորն անցնում եր

անընդհատ «կեցցեների» ուղեկցությամբ։ Մեքենավարի տեղը Վոսկանն էր. նա ամաչկոտ ժպտում էր այս անսպասելի բազմության հայացքների զիմաց։ Տրակտորի ճակատին ամրացրած փոքրիկ կարմիր գրոշակը փափուռմ էր ուրախ, կարծես պատասխանելով «կեցցիներին»։

Տրակտորը կանգ առավ կոռպերատիվ խանութի առաջ։ Սպասող կոմյերիտներն ու պիոներները թնդացրին «կեցցեն» ու շրջապատեցին մեքենան։ Տղաներից մեկն սկսեց ճառել բայց տիրող աղմուկի պատճառով հատ ու կենտ բառեր ելին լսվում։ Ամենքն ազանությամբ զիտում ելին մեքենայի թեկուղ ամենափոքր մանրամասնությունները Յերեխաները ճշալով ու մեկ-մեկու հրելով առաջ ելին ընկնում մեծերի խիտ շարքերից ու աչքերը չուած՝ զիտում ու շոշափում այդ տարրորինակ գութանը։ Ավելի հեռվից՝ վորը տան շնմքից, վորը կտուրից, նայում ելին կանայք, իրար հետ փափալով։

Դանելն իր միքանի ընկերներով ուրախ ժպտով կանգնել ֆը Վոսկանի մոտ, նրա թեկից բռնել։

Զարրաբանց Մակոն, վորը գյուղի ունկորներից էր, մոտեցավ տրակտորին, խեթ նայեց իր սովորական ծուռ հայացքով, վորի ժամանակ նա իր ձախ աչքը փակում էր.

— Ախաղեր, թե իմ խելքը բան ա կտրում սա վարող պտուղ չի. թե սա մեր արտերը վարի, ինչ ուղղում եք ասեք, թեկուղ բեղս կարեք... ընկնց ել՛, թամաշի համար են բերել.

Մեքենայի մոտ կանգնած վարպետ Վոսկանը կատաղեց։

— Ի՞նչ, չես հավատաւմ. դե սպասիր, սադ ո՞րը
քեզ պատի ման ածեմ մեջենալի յիտեից, վոր դու
ինքդ քո ձեռով բեղդ կտրեաւ:

Զարբարանց Մատոն վախից յետ քաշվեց, մտա-
ծելով, թե խաթա բա, վայ թե մի պատիժ նշանակեն
իր խոսքերի համար:

— Ընկեր Վոսկան, դե գնանք միքիչ գնչացի,
մի բան կեր, հետո կվարենք; — ասաց Դանելը:

— Զե, հենց ես բոպեյիս պետք ե սկսենք, ձեր
գեղում ենպիս մարդիկ կան, իրանք չեն հավատում,
ուրիշների սիրտն ել ուզում են պղտորել: Եդ տեսակ
մարդկանց աչքը պիտի ծակենք ու վարենք:

— Դե տանենք ես մոտիկ ուսումնարանի արտը
վարենք:

Վոսկանը պատեց տրակտորը ու դանդաղ շարժ-
վեց դեպի ուսումնարանի արտը. նա դիտմամբ դան-
դաղում եր, վորպեսզի շատ մարդ հետեի իրեն:

Վարն սկսելուն պես սկսվեց և գյուղացիների
ցնծալի զարմանքը.

— Այ տղա, որան մտիկ, ե, հենց վարում ա
հողը, կասես բմբուկ ա շուռ տալիս:

— Պա, սա հու վարում չի, սա ուտում ա հողը, —
ասում եր մի ուրիշ գյուղացի:

Դանելի կինը վազեվազ յեկել մուանալով իր ա-
մոթխածությունը և մարդու կողքը կտրած ասում եր
ցածը ձայնով, հրելով նրա կողքին.

— Ա՛ մարդ, դե մի ասա շուտ անի, մեր արտը
վարի ե...

— Ա՛ կնիկ, տեսնում չես. հլա նոր ա՛ փորձում.
են ա մերն ել կվարի, ուրիշներինն ել, վախիլ մի, մեզ
ել կհասնի:

Կնոջ գեղան գեմքից լերեռում եր, վոր նա չի հավատում, թե՞ ոմեղ ել կհասնի»:

Յերբ Վոսկանն արգեն վերջին ակոսումն եր ու մոտենում եր արարի ծալրին, վորտեղ կանդնած եր Դանելը, ուրախությունից գեռ վերջին չհասած՝ կանդնեցրեց արակառը ու բարձր ծախով կանչեց.

— Դանել, բանն ի՞նչ թափուր ա...

— Բանն ուրիշ թափուր ա, Վոսկան, ուրիշ թափուր ա...

Յերկուսն ել ծիծաղեցին մի առանձին հաղթական ծիծաղով, հիշելով մի շարաթ առաջ ասած իսուքերը, վորոնց նշանակությունն ամենից լավ իրենք ելին հասկանում: Դանելի շուրջը հավաքված պլողացիք գլախ ընկնելով նրանց գաղտնի խոսակցության, ժպտում ելին:

Գործը վերջացնելուց հետո Վոսկանին տարան ձաշի: Այստեղ ուրախությունն առանձնապես չաղացավ Դանելի շուրջը. ամեն կողմից նրան ելին դիմում ու կանչում.

— Դանել,

— Հը:

— Բանն ի՞նչ թափուր ա:

— Բանն ուրիշ թափուր ա, ուրիշ...

Ասում ելին ու հոճում:

Յերբ զուրս լեկան ճաշից ու զնացին տրակտորի մոտ, Դանելը յերջանիկ ժպիտը գեմքին հենվելով տըրակտորի վրա՝ ասաց.

— Ախաղեր, թամամ բանն ուրիշ թափուր դասվ, ինչ ուղում եք՝ ասեք: Ա՛յ ջանիդ մատաղ հա, ի՞նչ կըլի՝ ամեն մեր նեղ մաջալին եղաղես հասնես, վոնց

վոր ևսոր հասար: Յարաբ սրա հնարողն ուղ ա, մի
գնամ տեսնամ, ճակատը պաշեմ: Տղերք ջան, սրանից
դենը սա յա մեր զենքն ու բերդը. սա վոր կա, մեր
աչքի լիսն ա...

Ու սիրալիր հայացքով նայո մեր պաշտելի մե-
քենալին, վորի մեջ կարծես մի մեծ, ամեն արգելք-
ներ հաղթող վողի կար նստած:

1926 թ.

ԱԶՔԸ ՎԱԽԵՑԱԾ ՀԱՆԵՍԸ

Ամեն անգամ, յերբ քաղաքից մի մարդ ել դալիս, լիներ դա կոռպերատիվ հրահանգիչ, կոմիերիտների շրջիկ, նույնիսկ կինբաժնի վարիչ՝ միենույն և, Հանեսը պիտի նրա առաջը լեներ, մեծ մասամբ զյուղից դուրս, վոր մարդ չտեսնի, ու միշտ նույն խնդիրը կրկներ.

— Պարάն հընգեր, խնդրում եմ ինձ ոգնեք...

Աչքերը չուած՝ հեինե, նա այնպիսի տեսք ուներ, հենց իմանաս յետեից վազում, հալածում ելին, և շուտափույթ ոգնություն եր աղերսում:

Թաղաքի մարդը կանգնեցնում եր ձին, ու Հանեսն սկսում եր իր արտի պատմությունը. ես բայլշելիկ կառավարությունը վոր յեկալ՝ Մաթոսանց Սիմոնի արտը խլեց ու տվեց իրան՝ Հանեսին (չունքի եղ Սիմոնը ամենահարուստ մարդն ա զյուղում՝ քսան որավար հող ունի, տավար-վոչխարն ել ջոկ): Թէ հիմի Հանեսը կարում չի տիրություն անի արտին, ոգտվի նրանից, չունքի Սիմոնը կոիվ ա զցում, հարամ ա անում ամեն ինչ...

— Խնդրում եմ մի ենպես հրաման տաք, վոր եղ արան ինձ վրա պինդ հաստատի, Սիմոնն ել թարգը տա, ել կոիվ չգցի.

Նորեկը մնում եր շվարած, տեսնելով, վոր գործը իրեն չի վերաբերում, բայց խոր հուրդներ եր տալիս,

թե ում պետք ե գիմել, կամ նամակ եր զբում այս ու
այն պաշտոնյայի անունով և շարունակում իր ճամ-
պան։ Սակայն Հանեսը գոհ չեր մնում վնչ տված խոր-
հուրդներից և վոչ նամակից (վորը չեր հանձնում),
ու ելի շարունակում եր իր դիմումները ամեն մի քա-
ղաքից չեկողին։

Հանեսին այնպես եր թվում, թե վոչվոք իր
դարձը չի ուզում հասկանալ, ու ամեն մեկը, վորին
նա դիմում ե, միշտ աշխատում և գործը գցել և ու-
տեղի մտրդկանց վրա, փոխանակ իր ձեռքով վճռե-
լու, կամ քաղաքից կարգադրելու։ Այսր վոչվոք «իտ-
քը չեր անում, թե ես Մաթոսանց Սիմոնը, գյուղի
ամենակատաղած հարուստ մարդը (վորի մոտ Հանեսը
յերեք տարի նոքար ե յեղել) որը ցերեկով իր արտը
կտա ես տեղի մարդու ասելով... են ել ում... ամե-
նախեղճ, ձենը փորն ընկած մարդուն, վորի ավելորդ
անունը «աչքը վախեցած Հանես» եր...»

* * *

Այսպիս եր Հանեսի ավելորդ անունը, և զուր
չեր կպել նրան այդ անունը։ Դժվար թե զյուղում
դանվեր մի ուրիշ մարդ Հանեսի պես սիրաց ան ըն-
կած։ Ասենք՝ պիտի խոստովանել, Հանեսի վախը մի
ուրիշ տեսակ եր։ Նա չեր վախենում գաղաններից,
քաջքերից, նա վախենում եր աղամարդկանց ից.
զեռ մանկությունից պրիստավ, քլոխվա, կակարդավոր
մարդկանց ահսնելիս՝ վախչում եր թագնվում։ Մի
անգամ, յերբ Հանեսը գեռ ութ տարեկան եր, քաղա-
քից յեկել եր մի կակարդավոր մարդ, հետնել քերել
եր իր փոքրիկ աղային։ Մի որ սա մտրակ եր շինել

ու վազվում, խաղում եր։ Հանկարծ տեսավ Հանեսին, վազեց նրա կողմը։ Հանեսը վախից զլուխը կորցրած՝ սկսեց վազել, նապաստակից ել արագ ու մի շնչում ընկավ իրանց տուն, դուռը չըխկացնելով։

— Այ տղա, ի՞նչ ես վազում, — հարցեց հայրը։

— Են աղի տղեն... — հազիվ կարողացավ տեսլ Հանեսը ու չփառահելով նույնիսկ իր հոր պաշտպանոթյանը՝ գնաց թաղնվեց թոնիրում։

Հանեսը զիտեր, վոր հայրը չեր կարող պաշտպանել իրեն աղամարդուց. չե՞ վոր նա մի անգամ տեսավ, թե ի՞նչպես մի կակարդավոր մարդ քյոխիվ հետ միասին ծեծեցին իր հորը խարջի ժամանակ...

Դեռ տասնհինգ տարեկան եր Հանեսը, յերբ նրա հայրը մեռավ, թաղման որը ել բարեկամ, ել հարեան— բոլորը՝ ասես խոսքը մեկ արած՝ սիրտ ելին առաջ Հանեսին։

— Վախիլ մի, Հանես, դնչաղ կաց, ոչով կարալ չի քեզ մի չոռ ասի, սարի պես քամակիով կաղնած ենք։

Բայց շատ չանցած՝ Հանեսը ուրիշ խոսքեր լսեց։ Են սիրտ տվող հարեանը, Յերիցանց Առաքելը, վարելու ժամանակ Հանեսի արտից զավթեց, մեջ զցեց բավական տեղ, ու յերբ Հանեսի մայրը գնաց, վոր առաջն առնի, հարեանը կատաղած զոռաց։

— Գնա կորի, թե չե հենց կտամ, մարդուդ տեղը կը նկնես։

Մի բարեկամ ել մէսւս արտը վերցրեց, խոստանալով կիսովի վարել, բայց կեսի տեղ մի քառորդը տվեց, իսկ հետեւալ տարին ել այդ չտվեց, ու արտը մնաց նրա ձեռքին։

Մայրը փորձեց գանգատվել, բայց շուտով տեսավ, վոր խաթեն ավելի յե մեծանում, դեռ գանգատը չվերջացած՝ գողացան նրա միակ կովը։ Բոլորը զիտեցին, վոր այդ զողությունը գանգատի վրեժն եր։ Ու մայրը լոեց, ուրսափած ուժեղների շառից։ Յերբ պատանի Հանեսը խոսում եր զրա մասին, մայրը միշտ լոեցնում եր.

— Վարդի, սուս կաց, Են զորբեքի հետ կարալ չենք բաս մտնիլ. անով-տեղով ջուրը կածեն կսպանեն կամ մինչև վերջին թիքեն ել կիլեն. լավն են ա՝ սուս ու փուս ապրենք. մի կտոր հաց կճարենք. գնա նոքար մտի, հնազանդ աշխատի, մինչև վոր կմեծանաս, հետո տեսնանք, հալբաթ մի ճար կանենք։

Հանեսը նոքար մտավ, ու իր բախտի պակասը թամամեց։ Աշխատում եր գիշեր-ցերեկ ու քանի շատ եր աշխատում, այնքան ավելի եյին հայհոյում, ծաղրում ու ծեծում։ Որորի վրա նա խեղճացավ, սիրու խոցող մի վախ իջավ նրա վրա, ձենը փորն ընկավ։ Նա ման եր դալիս գյուղում վախվիսելով, վոնց վոր մի հալածված, թափառական շուն, վորը ամեն քայլափոխում յետ ու առաջ ե նայում, սպասելով, վոր կամ քարով կիսփեն, կամ մի տանու շուն վրեն կհարձակվի։

Անցան տարիներ, Հանեսի մայրը մեռավ, ու զրա վրա նա ավելի խեղճացավ։ Ամեն մի ուժեղ ձայն, ամեն մի խեթ հայացք նրան դող եր բերում։ Ու նրա անունը կպավ «աչքը վախեցած Հանես»։

Այժմ Հանեսն իրեն լավ եր զգում միայն զյուղից դուրս, հանգում, անտառում, տափարի ու վոչխարի հետ։ Նա ուրախ կլիներ, վոր իսկի չվերադառնար զյուղը, ուր մարդիկ փշի մացառների նման ճամպա

չելին տալիս նրան։ Յեթե տավարը պահելիս մեկ-յերակու ընկեր ել պատահում եր, նա մոռանում եր իր ցավիրը։ Ամենից շատ նաև մտերացել եր իր ընկեր Սիրաքի հետ։ Միասին քաշվում ելին մի կանաչ տեղ ուխոսում, զրուցում ելին։ Միրաքը պատմում եր հայունի գաչտ գն եր ի մասին։ Միասին յերացում ելին, թե ինչպես իրենք ել գաչաղ են զառնում, զալիս են իրենց զբուղը, բոլոր կուտազած զորբաներից վրեժը հանում։ Եղ տեսակ զաչաղ իգիթին թեկուզ սպանեն։ Բնէ կավոր, դժարը ևս նորարությունն ա, ևս հայնոյանքը, ծաղրը…

* * *

Դեռ մինչեւ բալլշեիկների գալը զբուղում հաճախ խոսք եր ընկնում նրանց մասին։ Հանեսը չեր մասնակցում խոսակցությանը, վախենալով մի վտանգավոր բան թոցնել բերանից։ Մեկ ել նա լավ զիտեր, զոր թեկուզ իմաստունի խոսք տեսը՝ բանի տեղ չելին դնիւ, կծաղրելին, քանի վոր ինքը աղքատ եր։

— Բհը, զու եյիր պակաս, — կասեր զորբաներից մեկը. — Բնէ ևս արարագ-սարսազ զուրս տալիս։

Դե եղ խոսքին Բնէ պատասխան տար Հանեսը, կոփվ զցեր. չեր կարող, կովի համար «մեջք» և հարկավոր. խոկ ինքը մի խեղճ մարդ ե։ Ճիշտ ե, հիմի նա տուն եր զըել, կնիկ, յերեխաներ ուներ, ել նոքար չեր, մի կտոր հող ել ուներ, բայց սովի ձեռքից չեր կարողանում աղատվել։

Մի անգամ միայն, են ամենաթունդ սովի որերին, յերբ նորից խոսք ընկավ բալլշեիկների մասին, Հանեսն ել չհամբերեց.

— Ամի մի գան ե՛, — սսաց նա սրտով. — մեռանք ճամփա պահելով. մի գան ե՛, և անիրավներից, մարդ ուսողներից ազատեն։

Ասաց ու ինքն ել զարմացավ, թե եդ վհնց ասաց. չորս կողմը նայեց, տեսնելով, վոր հավաքված ները իրան նման աղքատներ են. ունեորներից միայն յերկու հոգի ելին, նրանք ել հեռու կանգնած՝ խոսում ելին։

Հանեսը սրտիցն եր խոսում, սովու յեկել եր խեղդել, լերեխաները հաց ելին կանչում. իրեն քարքարոտ արտից նա համարյա վոչինչ չեր ստացել. Միաբը խառնվել եր, մի ճամփա չեր գտնում, վոր ազատվի ես նեղությունից.

Դուրսը ինչ-վոր կատարվում եր, Հանեսը դժվարությամը եր գլխի ընկնում. Պատերազմը, թագավորին վեր զցելը, ևս խառը բաները, վոնց վոր մի ամուլ ծածկված սար՝ վոչինչ չեր յերեացնում. Միայն ին եր տեսնում Հանեսը, վոր քանի գնում՝ սովը հաղթում ե, վոր գլուղի ունեորներն որ-որի վրա ավելի յեն քարանում ու գաղաղում և անորեն դառնում։

Այսպիսի որերին յերբ Հանեսը լսում եր «բայլշեիկի» մասին, եդ խոսելը՝ վոնց վոր մի թունդ արադ՝ մոռացնում եր նրա ցավերը. ինչ վոր ասում ելին նրանց մասին, վեր եր քաղում ու ինքն իրան մտածում, սպասում, անհամբեր սպասում, վոր մի որ գան ու մի արդար որենք բերեն։

Այսպես խոսեցին-խոսեցին գյուղում, մեկ ել տեսան՝ յեկան: Հանկարծակի մի բան եր, ինչպես գետի վարարելը: Մինչեւ Հանեսը կհասկանար, թե ես ինչ ե կատարվում, յեկան, նրան ել տեղահան արին. Ապրողները—Յ

։ Փողովի կանչեցին։ Գնաց տեսավ, վոր գլուղի աղքատ-ները նստած՝ պինդ-պինդ խոսում են, հենց իմանաս՝ ամեն մեկը տոսո որավար հող ունի ու չորս լուծը լեզ-ներ։ Ինքն ել ուրախացավ։ բայց միշտ զարմանում եր.

— Աղքատների իշխանություն կը լի՛... վո՞նց թե... նոքարը խաղելինից ըարձրը՝ եղ հու ամեն բան թարս ա գուրս զալիս. բա ևս ամեն բան շուռավողն ով ա...

Ալդ ել դեռ վոչինչ. ամենից զորեղն են եր, վոր գլուղի հեղկոմը՝ քաղաքից յեկած ընկեր Բազրատի առաջարկությամբ՝ վճուց ամենատաղքաա զյուղացիներին հող տաք խլելով հարուստների փայլից։ Հանեսին ընկավ Մաթոսանց Սիմոնի արտը։ Այնքան զարմացավ Հանեսը, վոր մեկ-մեկ մտածում եր՝ չլինի թե ծաղր են զցում վրան։

Մինչև եսպես կասկածում եր, տհոսավ մի որ ել զութան, լիզներ իրար հավաքեցին ու Հանեսի հերքեի արտը ուրիշների հետ վարեցին։

Այստեղ արդեն Հանեսը մտածեց.

— Դե ել ինչ դես-դեն, են ա թագա որենք ա, ելի՛ որենքի գեմ մվ կարա խոսի...»

Կինը, վոր սկզբում շատ թերահավատ եր, այն ասում եր հաճախ։

— Բա մինչև լերը պետք ա են քեթխուլեքը մեջ նստեն, մեջ ուտեն, խի՛, իմ մարդը պակաս մարդ մ..

*
* *

Հանեսին տված արտը լերկու կտոր եր, մինը ճամպի տակը, մյուսը՝ վերեց, Ներքեի մասը հենց սկզբից վարեցին ու ցանեցին, իսկ վերեինը թողած

եր խոպան՝ աշունքավարի համար, և ալժմ խոտի տեղ
եր, Հենց վոր խոտը հասավ, Հանեսը գերանդին առավ
ու գնաց հնձելու,

Սկսեց շը՞խ-շը՞խ հնձել, ու քանի հնձում եր,
այնքան ավելի ձեռները բացվում ելին, Արդեն Հանեսը
ինքն իրեն մոռացել եր, գործով տարվել, յերբ հան-
կարծ ականջովն ընկավ Մաթոսանց Սիմոնի ձայնը.

— Դու եդ ում շունն ես, վոր արտօ հնձում ես:

Հանեսը ցնցից նրա ձախից, կանդ առավ նը-
րան թվաց, թե ինքը ելի առաջվա նսան՝ նոքար ե
Սիմոնի մոտ, ու հիմի նա յեկել ե զործի ժամանակ
ճղճում ե, հայնոյում, վոնց վոր առաջ եր անում:

— Յես որենքով եմ հնձում, — ասաց նա հազիվ
լսելի ձախով:

— Ի՞նչ որենք, քիթ ու պոռնգդ վոր կշարդեմ՝
են ժամանակ կիմանաս, թե որենքն ի՞նչ ա:

— Որենքը ընդունում չես. դե յես կգնամ կա-
միսարին կկանչեմ, տենամ ի՞նչ ջուղար կտաս նրան:

— Զանդամը գնաս, ի՞նչ ուզում ես՝ արա, յես
իմ արտը քեզ չեմ տալ. են վար ցանեցիր ներքես,
քեզ վայել կանեմ...քթիցդ հանել չպտեմ ..դնւրս կորի
ասըմ եմ..

Հանեսը նկատեց, վոր գալիս եր և Սիմոնի մեծ
տղան՝ ձեռքին մի դագանակ: Պարզ եր. յեկել ելին
Հանեսին ենպես ջարդտան, վոր ձեռք քաշի այդ արտից:
Ուժը նրանց կողմն եր. յերկու հոգու դեմ ի՞նչ կարող
եր անել:

Ու գերանդին ուսին դնելով, Հանեսը շտապ քայ-
լերով հեռացավ արտից: Սիմոնի տղան ճամպեն ծռեց,
վոր նրա առաջը կտրի, բայց հայրը չթողեց:

— Թող գնա կորչի եղ շունը. ինքն ա փախչում,
ել ուր ես գնում:

Տղան կանգ առավ. կարծիս տատանվում եր, ապա
նորից քայլերն ուղղեց զեպի հայրը:

Հանեսը գնում եր, կատաղությունից արադ
հևալով:

— «Տաս սպանես եղ մուռտառին, միանդամից
ազատիս... ասում եր ու արագ քայլում զեպի զուղը:

Ուղակի գնաց հեղկոմի նախագահի մոտ:

— Մաթոսանց Սիմոնը թողնում չի արաս հնձեմ:

— Գլուխը քարովն ա տալիս ինչի՞ չի թող-
նում:

— Կոխվ ա զցում. լեկել եյին ինքն ու տղեն՝
փետերը ձեռներին. հիմի զու զիտաս, կամբարը, թե
արտը ՚ինձ ա տված՝ հնձեմ, թե չե՞ ես ի՞նչ բան ա ..

— Արա, մի եղ Սիմոնին գնացեք կանչեցեք:

Քիչ ժամանակից հետո Սիմոնը լեկավ փընթ-
փընթալով:

— Ինչի՞ չես թողնում, վոր ես մարզը հնձի:

— Բա իմ արտը թողնեմ ուրիշը հնձի...

— Դու եղ խամ-խամ խոսելը թող, ժամանակին
մտիկ արա. թող արա հնձի, թե չե բանար կզցեմ...

— Զհաննամը, հնձում ա՝ հնձի. լեկեք սաղ տուն-
աեղս ել տարեք...

Ասաց ու հայնոյելով հեռացավ:

Հանեսը մյուս որը գնաց, հնձեց արտը. ել Սի-
մոնը չեկագի Բայց լերը խոտը չորացավ, Հանեսը
հավաքեց, բլուկեց ու մինչեւ սայլ ու լծկան կոտներ,
վոր տուն տանի, մեկ ել յեկավ տեսավ, վոր խոտը
չկա... Սիմոնը խոտը հավաքել տարել եր:

Ելի Հանեսը գո՞նզատվեց։ Այս անդամ Սիմոնին յերեք որ բանտարկեցին։ ստիպեցին, վոր խոտը յետ տա, բայց Հանեսը միայն կեսի չափ ստացավ ու դրանով ել բավականացավ։

Ահա այդ որվանից սկսվեց Հանեսի արտի պատմությունը։

— Զե, բանը փչացրին, — ասում եր նա ինքն իրեն։ — հաստատ որենք չկա, որանից բան չի դուրս գալ են ա՛ թե ենթելից, քաղաքեց զուրս լեկած մարդն արավ՝ արավ, թե չե հստեղի մարդու բանը չի։ Մեր գեղի բայլշեկը վժրն ա. Թորոսանց Ակոփը, Զորանանց Յեղոն, Կորեկանց Ոհանը. ինչ են հասկանում, վոր ինչ վճռեն. ուրիշի ձեռին, ուրիշի խոսքին են մտիկ անում. Խոսք որինակ՝ Հանեսը գնում ա գանդատվում նախագահին, կամ ինչպես ինքն եր ասում՝ կամիսարին, Թորոսանց Ակոփին. զե սա յել աղքատներից ա. ինչքան չըլի՛ միքիչ քաշվում ա Մաթոսանց Սիսոնից, կարելի լա սրտումը միքիչ ել վախում ա. մտածում ա, թե՞ ով ա իմանում, ժամանակը վհնց շուռ դա։ Ուղիղ ա, կարգադրություն անում ա, համա հնապես պինդ բան չի բոնում, վոր միանզամից հոտը կտրցնի, ու Հանեսը դինջ վայ' մի իր արտը։ Զե, խարաբ արին բանը ..

Դյուղում մի մարդ չկար, վորին Հանեսը վըստահեր. ես «թագա որենրը» նունիսկ ինքն իրեն չեր վստահիլ։ Նա կուզեր, վոր բոլոր իշխանավորները քաղաքից գոյցին Թող գան, նստեն, միանզամից իրաւց ձեռով հաստատեն ամեն ինչը, թե չե՛ մեր մարդը ելի նին դայդի կանի. ամեն բան կփչացնի..

Ու դրանից եր, վոր Հանեսը աչքը բռնից քաղա-

քի ճամպեն։ Միշտ սպասում եր, թե մի մարդ կգտ ու
իրան ձեռքով գործը կվճռի, իհաստատի, ենալիս պինդ
կհաստատի իր վրա են արտը, վոր ել հազար Արմոն-
ներ գոն, չեն կարող քանողել։

Ենդուր եր Հանեսը ամեն քաղաքից յեկողի
առաջը գուրս գալիս, արտի պառմությունն անուն
ու խնդրում, վոր Արմոնն ել կոփվ չցցի…

* *

Քանի մոտենում եր վերի արտի հնձելու ժամա-
նակը, Հանեսն ավելի լիք անհանգստանում։ Նա ելի
շարունակում եր զիմումներն քաղաքից յեկած ամեն մի
մարդու, բայց միշտ զժգոն եր մնում։

Մի նոր հույս ել բացվել եր Հանեսի համար.
յերկու շաբաթ առաջ ընտրել ելին նոր նախագահ,
վորը թեպետ տեղացի լիք, բայց յերկար ժամանակ
յեղել եր գուրսը, յեղել եր պատերազմում, բալլենիկի
կոփվերում ու միքիչ խամացել եր իրենց գյուղացի-
ներից։ Նրանից ոտարի հրա եր գալիս, և դրա պատ-
ճառով ել նա Հանեսի սրտին մոտ եր։ Բայց ելի Հա-
նեսը տատանվում եր՝ գնա մոռը, գանդատվի, թե չե-
գալ թի նա յել ուրիշների նման կիսաբերան անի
գործը…

Վերջապես, յերը արդեն արտը հասել եր, և ել
ուրիշ յելք չեր մնում, Հանեսը սրտապնդեց ու գնաց
նախագահի մոտ։

Առավոտ եր. նախագահը պատրաստվում եր զնա-
լու շրջանի կենտրոնը։

— Հը՛, Բնչ կասես, Հմնես։

— Սաղություն. խնթրում եմ, կամիսար, ինձ

ոգնություն անես... ես կարելի յա քեզ հայտնի լա, թաղա կառավարութենը ինձ վրա նշանակել ա Մաթոսանց Սիմոնի արտը. հիմի եղ Սիմոնը չի թողնում, վոր ոգտվեմ արտից. սրանից առաջ յերկու անգամ կոխվ ա զցել. հիմի լիլ՝ հնձի ժամանակ ա, ելի կոխվ ա ընկնելու. խնդրում եմ ենպես կարգադրութեն անես, վոր եղ Սիմոնը ել մոտ չգաւ:

Կոմիսսարը ժպտաց, մի աչքը կուչ ածելով.

— Հը՛, վախում ես... արխալին կաց, ես վժը որն ա, վոր վախում ես. դնա հանգիստ հնձի, վոչով կարալ չի բան առի:

— Ի՞՞ չ անեմ, մենակ մարդ եմ, նըանք յերկու հոգով եւ զալիս. ասենք՝ թե լեկան վեր տվին, ի՞նչ պտի անեմ:

— Յա քեզ ասում եմ գալ չի. հիմա նա մի թագուն տեղ ա ման գալիս, վոր ծածկվի:

— Զե՞ն, չե՞ն, կամիսար ջան, նա ենպես կատաղած մարդ ա, ել վոչովի չի հարցնում. հենց դուզ զալիս ա՝ փետը ձեռին, վոր խփի, ել որենք-բան չի հարցը-նում:

— Այ տղա, դու՝ վոնց վոր տեսնում եմ հանաք չես անում. բա չե՞ս ամաչում, եսքան քարոզում ենք նոր կարգերի մասին, դու եսորվան որը վախենում ես Սիմոնից:

— Մարգար ջան, դու, վոր տեսնում եմ, Սիմոնին լավ չես ճանաչում. նա ես թավուր թաղա բաներ չի ընդունում. նա մենակ մի բան ա իմանում, վոր եղ արտը իրանն ա. ես թաղա քարոզները նըան ի՞նչ քար կանեն. խնդրում եմ՝ ենպես սաստես, վոր ել կոխվ չգցի...

Նախագահը ժպտալով նայում եր Հանեսին:

— Հենց ես խնդրում, կասես խեղճ, անողնական վորբների կնիքի ըլես, ենդուր են անունդ դրել աշբը վախեցած Հանեն. զու իսկի բալշեիկ չես. քու արյունը վոր կա՛ թամամ ջուր ա, ամնթ ա, ել մի իսուիլ, գնա հնձիր, թե Սիմոնը զա՛ հենց ծղրատ վրեն, վոր յետ փախչի Աչքերդ բաց արա, հիմի քյատիբների իշխանությունն ա. նա պիտի քեզնից վախի և վոչ թե զու, վճացմբ... .

— Զե՞, չե՞, կամիսար ջան, յես հաստատ զիտեմ՝ նա եդ բաներից քաշվողը չի. խնդրում եմ, մի բան արա, եզուց հնձելու յետ...

Նախագահի դեմքը լրջացավ. նա աչքն ավելի կուչ ածեց. կարծես մտածում եր, թե ինչ պիտի անի Հանկարծ նա նկատեց զիմացի պատին կախած զլխարկը ու նորից ժպտաց:

— Դե յես զնում եմ քաղաք. ելի առըմ եմ, զուշադ կաց, մի մաղեդ ելա չեն կարա դիպչիլ. իսկ թե վոր վախում ես, ընը՛, քեզ տալիս եմ ես փափախը (նա վերցրեց պատից իր զլխարկը). կտանես արսի ծերին մի փետի վրա կկախես. թե վոր կդա Սիմոնը, ասա՛ իմ փափախն ա, կարգադրել եմ, վոր արտին մոտ չգատ իմացմբ... ես փափախը շատ զորավոր ա, հա՞... սա իմ հընդոր հիշատակն ա, բալշեիկի կրուգում սպանվեց, մեռնելուց տուած ինձ տվալի. Տեսնում ես ես կարմիր աստղը վրեն քաշած չը՛, դե զնա, զուշադ կաց. ես փափախը իսկիթի նման լավ պաշտպանիր...

Հանեսը վերցրեց զլխարկը. սև կոշտ մահուդից եր, վրան կարմիր աստղ, նայեց, հետո աչքերը բարձ-

բացնելով՝ նայեց Մարգարի դեմքին, կարծես կասկածում եր նրա ասածների վրա:

— Ասրմ ևս տանեմ, — հարցը եց:

— Վանց զոր քեզ ասի, են գես արա, տղամարդ կաց, դեմ, մնաս բարով, յես գնում եմ:

Հանեսը ծոցը զբից զլիարկը ու մտքի յետեկից ընկած՝ զնաց գեպի տուն:

«ԱՌ տղա, վոնց թե ևս փափախիը, ես հանմար առնում, — մտածում եր նա, — Երա են կատաղած մարդուն ևս փափախն ի՞նչ զոռ պտի անի, ...»:

«Ի՞նչ ասեմ... — հանգստացնում եր / նքն ի՛ են Հանեսը, — «Կարելի յա թե ևս փափախի մեջ մի զորություն կա, զոր մարդը տվեց... դե կամիսար ա, հասարակ մարդ հո չի...»

* * *

Առավոտը ծեզին Հանեսը վեր կ սցավ. մի յել կու բուռ ջուր տվեց յերեսովը, մաշված աղլուխով սրբեց, հետո պատի մեխից վարցը եց գլխար ն ու ծոցը դրեց:

Կինը շորերը հագնելիս նկատեց արդ:

— Դու յել թամամ յերեխա յես. շատ ել կամիսարը քեզ յերեխի տեղ ա գնում, բա քու խելքը ի՞նչ ա ասում, բա են մարդ ուտող Սիմոնը եղ զիզի փափախից կլախիթ. խի, հանաք ա անում...

— Դե մարդը կամիսար ա, յերեխա հո չի. զոր խոսք ա տվել՝ իր խոսքը գետին չի զցիլ. ես փափու խը իրան նշանն ա, հալրաթ իմանում ա, զոր զորություն ունի, թե չե՝ ի՞նչ պետք ե ի՞նձ տար:

— Յես ի՞նչ զիտեմ, շառը շատ ա, սիրտս ասում ա՝ թհղ եղ արտը, հալրաթ մի բան կճարենք, կապրենք:

Հանհսը վոչինչ չպատասխանեց, մի չոր հաց փաթաթեց աղլուխի մեջ, վերցրեց մաճդաղն ու յեղանը, ճամպա ընկալ գեպի արտը:

Գնում եր վարանոտ քալլերով, կարծես մեկը յետ եր քաշում. ու քանի գնում եր՝ ավելի յեր սիրտը պըզտորվում. ինչ ասես՝ չեր անցնում նրա մաքով:

«Հիմի վոր գա ինձ տա սպանի, իմ տերն ովա. յերեխեքս վորը կմնան, դոնեղուոը կընկնեն. ձեռիս ել մի թվանքից, խանչալից չկա...»

«Յանի յես հնձելու յեմ գնում, թե կովի. ես ո՞ր ա. լով չի ըլի՛ միանդամից տամ սպանեմ են շանը, ինչ ուզում են՝ թող անեն. մի որ ել մեռնելու չե՞նք. Ե՞ս, յերեխանցս ել մի ճար կըլի...»:

Հանկարծ հիշեց կոմիսարի խոսքերը.

— Դժաղ կաց, ես փափախը իգիթինման պաշտպանիր.. — ու սիրտ առալ:

«Ի՞նչի՞ պտի իս նրանից վախենամ. նա յել ինձ նման մի մարդ չե՞ն, նա վոր ըտենց բարձր ճղղում ա. եղ ել նրանից ա, վոր յերես ա առել առաջվա ժամանակից. հիմի նրա գորբանը գնաց. հիմի յես պետք ա բղավեմ: Թե ինձ մի մաս տա՝ ինքն ել պատասխան պետք ա տա...ինչից եմ վախում:

Եսպես գնում եր Հանհսը, մեկ խեղճանում, մեկ սիրտ առնում՝ հիշելով կոմիսարի ասածները: Վերջապես հասալ արտին:

Զով առավոտ եր. արտերից հաշանի դուրեկան հոտ եր գալիս: Կանաչով յեղերված արտն որորվում եր քամոց: Խորհրդավոր լուս թյուն եր տիրում. կարծես արտում ցողունի մեջ մարդիկ եյին թագնվել, տապ արել:

Սիբանի քայլ առաջ անցավ արտի լեզերքով, լեզանը խըսից գեանին ու վրան կախեց կոմիսսարի գըլ խարկը. կարմիր աստղը դարձնելով ճանապարհի կողմը:

Սկսեց հնձել Շանր եր շարժվում ձեռքը. կարծես մի բան մանգաղի առաջն եր ընկնում:

Արևի առաջին շողքերը Խիեցին արտին ու հանկարծ աչբերը ծակող լուս սփռվեց չորս կողմը:

Հեռվից լսվում եյին հնձլորների ձայները:

Հանեսը կանգնեց, մեջքը քիչ հանգստացնելու համար.

— «Հալբաթ են բարդուշը թարգ ա տրեւ ել գալ չի. թե յեկող եր՝ առաջուց կգար»:

Բայց հենց ուզում եր կռանա, շարունակի հունձը, մեկ ել հանկարծ մի ճղավոց լսեց, հենց իմանաս մի բան տրաքվեց նրա ականջի մոտ:

— Արա, ա շան տղա, եղ մեմ արտն ես հնձում. խի, տերը մեռել ա... դուրս կորի, թե չե՝ աջալդ յեկել ա...

Հանեսը ցնցվեց այդ դաժան ձայնից, նրան թըլվաց, թե պիտի պապանձվի, մի խոսք անգամ չկարողանա ասել: Բայց հանկարծ ինչքան ուժ ուներ՝ հավաքեց ու մի անորոշ ձայն հանեց, մի ճղավոց, ու դրանից կարծես սիրտ առավ:

— Դուրս կորի, ասում եմ, թե չե՝ գալիս եմ ջարդեմ, նորից լսվեց Սիմոնի ձայնը:

— Ի՞նչ ես զա՞լա տանըմ, — հանկարծ ծղրտաց Հանեսը ավելի բարձր, քան ինքն սպասում եր. — տեսնում ես են փափախը. են կոմիսսարի փափախն ա. կարաս՝ նրան պատասխան տուր...

Մի բոպե Սիմոնը վարանեց, աչքը դարձնելով դիպի գլխարկը. Ալինի՞ թե ուզիդ վոր կոմիսսարն ե հրա-

մայել: Բայց մեկ ել վոր նայեց Հանեսին, տեսալ նրա գղղված շորերը, խճճված մորուքն ու խոր ընկած աչշքերը, տեսավ նրա խեղճ նօնարի դեմքը ու եդ խեղճի ձեռքին մանգաղը, վորով նա իր առը համում եր՝ ել Համբերեց, «Ռի, ես քոսոտը իմ արտը Խլի»...:

Ու արագ վազեց գեղի գլխարկը:

Նկատելով նրա շարժումը գեղի գլխարկը՝ Հանեսը մի կատաղի ուժով թռավ, ու դեռ Սիմոնը չեր հասել գլխարկին, հանկարծակի յետից մի ուժգին հարգած տվեց իր մանգաղով Սիմոնի վղին, մի հարգած, վոր յերբեք կյանքում չեր տվել Հանեսը:

Սիմոնը ընկալ զետին, մի վայ կանչեց, միքանի ցնցումներ արավ ու Ցաւց անշարժ: Արյունը ըլթաց վղից, հոսեց ներքե ու ներկեց խոտը:

«Սպանեցի», — անցավ Հանեսի մաքով, բայց այդ միտքն ել նրան չեր զարմացնում: Այդ րոպեյին նա զիտեր միտքն մի բան՝ վոր յեթե Սիմոնը վեր կենա, կենանի մնացած լինի, նա նորից կխփի ու կսպանի:

Բայց Սիմոնը չեր վեր կենում, չեր շարժվում նույնիսկ:

Հանկարծ հավաքվեցին գյուղացիները, կարծես մեկը նրանց կանչել եր, յեկան շրջապատեցին Սիմոնին:

— Հանես, ա քու տունը չքանդվի, ես ի՞նչ ես արել, բանը բանից անց ա կացել...

— Հա, իմացեք, այ խալխը, սպանել եմ, յես եմ սպանել.—ասաց Հանեսը մի չտեսնված վճռական ձայնով:

Նա կոնդնել եր մի տարրինակ, թեթևացած տըրամաղրությամբ, հենց իմանաս մի խորը հիվանդու-

թյունից եր ազատվել. տարիների ծանր դարդից ապա-
ջանքի բեռն եյին վերցը կը այլից:

Ով ել զար, հարցներ Հանեսին, նա գիտե՞ր, վո՞
մի բան ունի անելու:

— Սպանել եմ... թե վոր վեր կենա, մին ել կը ս-
պաննմ:

Կանզնել եր Հանհնը, վոնց վոր մի զինվոր՝ պատ-
րաստ հարձակվելու: Իսկ նրա զիմաց՝ յեղանի ծայրից
նայում եր կոմիսարի զլխարկը իր կարմիր աստղով:
Նայում եր ու թեթև քամուց տարուբերվելով՝ կար-
ծես գլուխ իր տալիս Հանեսին...

1927թ.

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Սովորաբար ծառայողներն առավոտից մի կես
ժամ «մլուլ» ելին տալիս, ապա ոկոսում իրենց զրադ-
մունքները Յերկար շարքերով ձգված սեղանների վրա
վորը համրիչն եր չխչիկացնում, վորը աչքի անց-
նում ստացված զրությունները, վորը թերթում հաս-
տափոր «գործերը»: Կեսորին մոտ հաճախորդները
լցվում ելին բոլոր միջանցքները: Թամբաքվի ծուխը
տարածվում եր բոլոր գրասենյակներում, ու գրամեքե-
նաների ազմուկը հասնում եր գագաթնակետին: Այդ
ժամին ծառայողները գազազում ելին, հաճախորդները
թվում ելին բծախնդիր, և դաշտից լեկող զուուզցին
ներս մանելով՝ մնում եր շվարած, թե՛ «ես մարդիկ
ինչի՞ լին հերսոտել»:

Մեծ սենյակի պատից վերահսկիչի աչքով նա-
յում եր ժամացույցը: Նրա սլաքները շատ խաբուսիկ
ելին. յերբեմն արագ մոտեն ում ելին վերջին ժամին,
կարծես ստիպում ծառայողներին շուտով տուն գնալ,
յերբեմն ել թարսվում ելին, յերկար ձգձգում, առու-
տուր անում ամեն մի բոպելի համար:

Ավելի համեստ եր նույն պատի վրա ամբացրած
որացույցը, նա վոչվոքի չեր նեղացնում, յեթե հաշ-
վի չառնելինք մի-յերկու ծառայողների, վորոնք պիտի
զեկուցում պատրաստելին ամսի այն-ինչ թվին:

Հեռավոր անկյունի մի փոքրիկ սեղանի մոտ

նստած եր հաշվապահ Մաղաքյանը։ Նրա տեղը և սեղանը համապատասխանում ելին իր պաշտոնին։ Մաղաքյանը մի հասարակ և համեստ ծառայող եր։ Միայն յեթե ասում ելին իրեն, թե համեստ ե՞նա զբանից նեղանում եր իր ներսում, կարծես վիրավորանք ելին հասցնում կամ ասում ելին՝ «Դու անբուժելի հիվանդություն ունես, չես կարող առողջ մարդկանց հետ լինել»։

Նրա դեմքը մոռայլ եր, ավելի լուրջ, քան անհրաժեշտ եւ իր ներսում բողոքում եր բնության դեմ, վորալիդպիսի տխուր գիմակ և դրել իր դեմքին, յերբեմն նույնիսկ փորձում եր իր բնապորության հակառակ գնալ, ուրախ լինել, մտերմանալ մարդկանց հետ, բայց բնությունը նորից իր գերն եր ստանձնում, դեմքի պատուհանները շուտով փակվում ելին ու կարծես ասում խոսակցին, «Կանգնիր, ել առաջ մի գնա, ներս մտնելն արգելված ե»։

Սովորական ալցելուն զրազ կգար, վոր Մաղաքյանի դեմքին վոչ միայն ծիծաղը, այլ և ժպիտը յերբեք չի հյուրընկալվում։ Պետք ե ասած, վոր ալդ կարծիքն սխալ եր. նրա ուրախ բողեները տեսնողներ յեղել են։ Նրան ճանաչողներն ասում ելին. «Լուվ տղայն Մաղաքյանը, բայց մի ծանր քար կա նրա ներսում»։

Կանաչը խուսափում ելին նրանից, մտածելով, վոր «թեպետ Մաղաքյանը որինավոր ամուսին կլինի, բայց լուսնի տակ շատ բանաստեղծական մոմինտներ բաց կթողնի»։

Ի՞նչ եր Մաղաքյանի գործը. հեշտ ե ասել՝ հաշիմների, աղյուսակների, անհոգի ու դաժան թվերի

հետ եր նրա գործը։ Ալդ հաշիվսերը, պատահում եր,
զիշերն ել հանգիստ չեյին տալիս Շատ անգամ յերա-
դում ուղիղ թվերն սխալ թվեր եյին դառնում ու բա-
վական քրտինք քամում Մաղաքյանից։ Պահանջկոտ,
բծախնդիր թվեր եյին. յերբեք չեյին զիջում, յեթե
գումարը թեկուզ մի չնչինով ավելի կամ պակաս եր
լինում։

Մաղաքյանի միակ բավականությունը (յեթե
միայն դա բավականություն կարելի յե հաշվել) այն
ժամանակ եր լինում, յերբ նա ստուգելով գումարը,
համոզվում եր, վոր ուղիղ ե, կամ մանավանդ՝ յերբ
գտնում եր սխալը. ալդ բոպեներին թվերը վարժված
դինվորների նման ուրախ շաբախ եյին ու վողջուն
տալիս։

Առավոտից սկսած նրա գործն անպակաս եր,
նրա առաջ հաշիվսերի, աղյուսակների կուլտը քանի
զնում՝ մեծանում եր։ Ասես բնական որենք լիներ, վոր
ինչ անհետաքրքիր, խճճված գործ կար՝ ուղարկում
եյին **Մաղաքյանի մոտ։** Նրա սեղանի վրա կտևանելիք
այն մնացած, «Ճանջալ» հաշիվսերը, վորոնցից ուրիշ
ծառայողներն այս կամ այն պատրվակով հրաժարվել
եյին, կամ թե այն շատապ կամ «հրատապ» գործերը, վո-
րոնք հենց իսկույն պիտի կատարվեյին։

Միշտ այնպես եր պատահում, վոր մի ժամից
հետ ժողով պիտի լիներ, և այդ անհրաժեշտ թվերը,
պիտի զեկուցեյին, կամ յերեկոյան կառավարիչը պի-
տի մեկներ «կենտրոն» և հետը տաներ պատվիրած
աղյուսակները։ Որքա մեջ քանի՛ անգամ կլսեյիք։

— Հանձնեք **Մաղաքյանին։**

— Դիմեք **Մաղաքյանին։**

Յեզ նա տնքում եր այդ թվերի տակ, ինքն իրեն մոռանում, մի յերկու ժամից հետո նրա գեմքը՝ կարմրած լարված աշխատանքից՝ այնպիսի տպավորություն եր անում, կարծես սաստիկ կովավեճի յեր բոնվել իր առաջը կիտած թղթերի հետ:

Դործի այդ բոնարար բովիներին մի միտք խուլ կերպով՝ հնչում եր նրա ականջին, վորպիս պատասխան իր բոլոր տանջանքի՝

— Ընկել ես՝ պիտի տանես...

* * *

Առավոտները Մաղաքանը դալիս եր ծառայության ճիշտ իր ժամանակին, բայց գժղոհում եր իր ճշտապահությունից:

— Ի՞նչ ես մեքենալի պիս ճիշտ իր ժամանակին գնում-գալիս, — ասում եր ինքն իրեն. զոնե մի արտակարգ քան արա, հենց թեկուզ մի քառորդ ժամ ուշացիր, վոր ասես, թե ապրում ես. կյանքի համը շեղությերի մեջ ե...

Բայց այսպիս մտածելով՝ նա գարձալ շարունակում եր նույնը, և, ինչպիս ասում ելին ծառայողները, դեռ մի գեղք չել լեղել վոր Մաղաքանն ուշանաբ:

Ծառայության գնալիս լավ ե, վոր բարձր չեր արտահայտում իր մտքերը, թէ չե թյուրիմացություններ կարող ելին ծաղել: Տեսնելով շարան-շարան ծառալողներին, վորոնք թղթապահները կռնատակին շտապում եյին գործի, նա մտքում դիմում եր. բոլորին մի արհամարհական խղճանքով.

— Թղթի ստրուկներ, — ասում եր նա, դուք ար-

ժանի յեք ձեր վիճակին. թղթերից ավել վոչինչ չեք հասկանում...

— Իսկ դու, Մաղաքյան, — ասում եր նա ինքն իրեն, — զու յել նույն ապրանքիցն ես. յեթե «ուրիշ» մարդ լինելու, այս թղթի զործում չելիր լինի, վորը իսկապես մարդ մեքենայի գործ ե... Դու կլին ելիր...

Բայց այստեղ սկսում եր զործել նրա յերեակաց յությունը. ահա նա, Մաղաքյանը՝ ժողկոմ ե. բայց սովորական ժողկոմ չե. նա բոլոր շինարարական և գլուղատնտեսական զործերի «պետն» ե. թոշում ե ավտոլով, թոշում ե աերոպլանով ու վորտեղ իջնում ե, այնտեղ մի նոր շենք ե բարձրանում, լայնատարած ցանքսեր, ալգիներ, բանջարանոցներ են սփրուվում...

Նա պտտվում ե վողջ յերկրում, զործի յե հրավիրում ամենքին, ամենքին... Անորինակ յեռանդով հրաշքներ ե զործում, բայց այդ բոլորը կատարվում ե առանց թղթի. նա խիստ արգելում ե զրագրությունը, նույնիսկ պատմել ե տալիս նրանց, վորոնք թուղթ են ներկայացնում:

— Զգիտե՞ք, — ասում ե Մաղաքյանը, — չզիտե՞ք, վոր մեր լոգունքն ի՝ «կորչի գրագրությունը... թուղթը սպանում ե գործը»...

Նրա յերեակալույությունը վերջանում եր այն ժամանակ, յերբ հիմնարկության սանդուղքներով բարձրանալով հանդիպում եր իրենց սպասավորին. Սերոր եր անունը կեռ քթով, յերկար ձեռքերով, վորոնք շարունակ փնտում եյին իրենց տեղն ու չեյին գըտնում. Նրա պիջակը շատ լայն եր, իսկ շալվարը՝ նեղ ու կարճ.

իրաբ տեսնելով՝ Մաղաքլանն ու Սերոբը տարբարինակ խաղի մեջ եյին ընկնում. Մաղաքյանը անպատճառ աշխատում եր բարեկել Սերոբին, վորպես հաւավասար ընկերոջ, իսկ սա իել խուժափում եր նրա բարեվից, մտածելով, թե՝ ոյերը վոր բարձր ծառայողները չեն բարենում, քո բարեկելն ինչ եմ անում. շատ հարսկավոր ա... ալ, թե ուզում եք մեղ ել հավասար մարդու տեղ դնել, ոսճիկս ավելացրեք...»

Սերոբի կցկառուր բարեկ կամ նրա յերես շուռ տալը անհարմար զրության մեջ եյին դնում Մաղաքլանին, միշտ զգացնել տալով, վոր իր և Սերոբի մեջ մի պատճեղ կա: Նա ամաչում եր, վոր Սերոբից ավել ե ոսճիկ ստանում, ու ամեն անգամ այս ճմլող զգացումով ներս եր մտնում գրասենյակը:



Մաղաքյանն անցնում եր լերկար դահլիճով, նըստում իր տեղը ու ընդհանուր սովորության հակառակ՝ իսկույն սկսում զործը: Կես ժամից հետո գալիս ելին բարձր ծառալողներն ու բազմում իրենց առանձին ձևի աթոռներին: Կարճատե հանգստյան ըովեներին կամ լերը առիթ եր լինում անցնել այդ բարձերի առաջ, Մաղաքլանը տեսնում եր գլխավոր հաշվապահի ամբարտավան դեմքը, վորը կարծես ասում եր. «Ինձ հետ խոսելը սրբագրծություն ե»:

Դործավարի լերկար քիթը միշտ ձգտում եր դեպի վերև, մի արհ մարհական ժպտի ուղեկցությամբ:

Բաց գոներից լերեւում ելին փոքրիկ սենյակում նստած յերեք «սպեցները», վորոնք կեղծ լրջություն տված դեմքերին՝ միշտ այնպիսի տեսք ունելին, վոր

թվում եր, թե զբաղված են ամենալուրջ և ծանրակշիռ հարցերով։ Դահլիճի մյուս ծառալողները հեռվից միապատադ պատկեր ելին ներկայացնում, իսկ մոտիկից յերեսմ եր, վոր ամեն մեկը լուժատեսակ մի հնարավ աշխատամ եր ինքն իրեն լուրջ և նշանակալից տեսք տալ։

Ամեն անգամ, յերբ Մաղաքանն անցնում եր բարձր ծառայողների մոտով, նկատում եր նրանց գեմքին մի գաղտնի արհամարհանք կեղով ինքը ու լըցվում եր փոխադարձ առելությամբ։

«Միթե նորից գալիս են «բարձրերն» ու «ցածրերը»... միթե նորից սկսվում ե այն հինը, վորը նա մոռացել եւ Այդ բողեներին նա հիշում եր անցյալը յերբ ծառալում եր մասնավոր բանկում ու ատամները կրնացնելով հպատակվում եր դաժան կառավարիչներին։

Այն ժամանակ նրա շուրջը ծառայողները քըծնում ելին բարձրերի առաջ, իսկ ինքն իր մոռայլ գեմքը գառնորեն ծամածում եր զզվանրից։ Յերբեմը մոծ մոծ ճիգեր ելին հարկավոր Մաղաքանին իր մարդկային արժանապատվությունը պահպանելու համար, նրա ջղերը շարունակ լարված ելին, բռունցքները սղմած...»

Անցել են այդ որերը. բայց ահա նորից տեսնում ե վերին ու ներքին խավերը և զգում ե իր մեջ հավասարության տենչերը. Սակաւո՞ն այդ մոմենտներին նա ինքն իրեն բռնում եր հակասության մեջ. «Չե վոր միքանի տարի առաջ, յիրը հավասարություն եր տիրում, յիրը Սերոբի ու կառավարչի մեջ տարբերություն չկար, դու յել զժգոն ելիր, վնթինթում ելիր,

թե ինչու թղթատարը քեզ հհա հավասար ռոճիկ և
ստանում, իսկ ամժմ, յիւր քո ցանկությունը կատար-
վեց, դու նորից դժգոն ես...»

Ի՞նչպես զոյացան արէ «բարձրերը»: Միքանի
անդամ ռոճիկների համլետում, և ահա դրվեց այդ պատ-
նեշը: Ամեն մնկ ծառայող կամ պոչն եր շարժում, կամ
պողը՝ իրեն առաջ քաշելու համար: «իսկ դու այդ չես
արել այդ պատճառով ել ֆացել ես ներքեմ շարքե-
րում...»

Այժմ դու դժգոն ես նորից, բայց վորոնք են քո
իդձերը... Հավասարություն ես տենչում, թե զուցե
կամենում ես սանդուղքների վերեը պատվավոր տեսդ
դրավել... Ցեթե այդպես ե, ինչ կասես Սերոբի մա-
սին: Նա յԵլ ե մտնում քո ծրագրի մեջ .. չԵ վոր ամեն
առավոտ նա սպասում ե քո պատասխանին, քո հա-
վասարության»...

* * *

Ամեն որ, վորոշ ժամին կառավարչի ոգնականի
առանձնատեսնյակից դուքս եր գալիս Մաջլումյանն ու
անցնում ծառայողների լերկար շարքով: Անցնում եր
թելիկ-մելիկ գալով, ինքն իրեն վրա սիրահարվածի
տեսքով: Ծառայողներն ատում եյին նրան, վորովնե
տե նրա հայացքի մեջ ինչ-վոր արհամարհանք կար
մանավանդ դեպի ստորին ծառայողները: Փողոցում
պատահելիս նա ակնհայտնի սպասում եր, վոր դիմա-
ցինը բարեի, հետո ինքը բարեհաճի պատասխանել:
Իսկ ծառայության տեղը նա ուշադրություն եր դարձը-
նում միայն «բարձրերի» և կուսակցականների վրա:
Ամենքը դիտեյին, վոր Մաջլումյանը կառավար-

չե պանականի բարեկամն ե, նիտ քրոջ տղանս Մառայողներն այդ պատճառով վերոշ ակնածություն ունեին դեպի նա: Իր դիրքու ավելի բարձրացնելու համար Մեջլումյանը տարածել եր, թե կուսակցության թեկնածու յեւ և շուտով մտնելու յեւ նրա շարքերը: Միամիտ հավատացողներին այդ բանն ամենից ավելի յեր գրգռում:

— Ախր վժնց թե կոմմունիստ... Մեջլումյանը վոչ միայն սպեկուլյանտի տղա յեւ, այլ և սպեկուլյանտի թոռը... Ախր Լենինը շուր կզա գերեզմանում...

Սակայն, լիթե Մեջլումյանը սուր ականջներ ունենար, կըսեր, թե ինչպես են հեգնում իրեն յետելից:

— Վերել դատարկ ա մի, — ասում եր մի ծառայող մլուսին:

— Հա, մեջը դարման ա, — պատասխանում եր մյուսը:

Բայց, իհարկե, նա այդ խոսքերը չեր լսում. փքված առաջ եր գնում զեպի դահլիճի ծայրը, ուր նստած ելին զրամեքենաների վրա աշխատող որիորդները:

Աշխենը, վորին համակըում եր Մեջլումյանը, այն պաշտօնական գեղեցկուհիներից եր, վորոնք առանձնահատուկ տեղ են գրավում ծառայող որիորդների մեջ: Բնականից ունեցած կոկետությունը այստեղ՝ ծառայող տղամարդկանց մթնոլորտում՝ աճում է մոլախոտի նման ու ամեն ինչ կլանում: Պաշտօնական հաճոյախոսություններով սնվելով՝ նրանց զեմքերը հետզհետե թատրոնական են դառնում և լցվում զերասանական ինքնարավականությամբ:

Մինչև Մեջլումյանի մոտենալը որիորդ Աշխենը

արդեն վորոշ «պողա» յի ընդունում, ուսեբը և գլուխը կոկնտորեն շարժում։ Ցերք Մեջլումլանը նստում էր իր կողքին, նա իր ձեռքը վոլոր-մոլորելով տալիս եր նրան, բարենում։ Նրա խոշոր աչքերը լայնանում եյին իրենց սահմաններից դուրս։ Սկսվում եր աչքերի ու ժամփաների մի ներկայացում։

Մեջլումլանը զիջող ժպիտը դեմքին՝ առաջ և քաշում տպագրած թղթերը, իբր թե ստուգելու կամ թելազրելու համար, բայց դրանով միայն քողարկում է իր սիրաբանությունը։ Նրանց հայացքներն արդեն իրար ընտելացած եյին և կցկտուր խոսքերից միմլանց հասկանում ելին։

Այսքանը պարզ եր՝ Մեջլումլանը իրենն եր համարում Աշխենին, իսկ որիորդն ել սրտի խորքում մի գաղտնի հուկս ուներ, թե ալդ սովորական, թեթև սկսված կապը կհանգի ամդւանութիւն։ Ալդ միտքը այնքան եր նրան վոգեռում, վոր լայն դեմքը մի թիզ ավելանում եր։

Դոների մոտ նստած տիկին Կարոտյանը, վորը հասակն առած եր ու միշտ աչքերը լացակումած, նաւազում եր որիորդին ու ասում մտքում։ «Ի՞նչ ես կոտրըտվում. շատ-շատ մի գեղի լուսին ես ելի՞ւ։ Նրա կարծիքով գյուղի լուսինը մի առանձին, հասարակ տեսք ուներ։

Իսկ մյուս մեքենայի վրա բանող որիորդ Շողիկը, վորը նիհար, սուր դեմք ուներ և նախնիքներից ժառանգած դեղին մալարիոտ գույն, ալդ բոպեներին ջղայնանում եր և սովորաբար շփոթում տառերը։ Մըռուայլ մտքերը, հուսահատ նախանձը հասնում ելին գագաթնակետին։

Նրա ավելորդ անունը «որիորդ Կրճատում» եր վախկոտ և կասկածոտ նրա բնավորությանը ամեն մի չնշին գեպք առիթ եր տալիս մտածելու «Զլինի» թե կրճատում և լինելուաւ Նրա վախը վորոշ հիմք ուներ, քանի վոր նրա վզին ելին իր ձնողները և փորք քուչը իր չնշին ոոճիկը ծվիկ-ծվիկ անելով ապրում ելին հոգսերի թախծոտ ամպերի տակ:

Առավոտները որիորդ Շողիկը զարթնում եր ու անկողնում մտածում. «Ի՞նչից ե, վոր Աշխենը լերջանիկ և: Մենք միենալին մերենալի վրա յինք աշխատում, նրա ոոճիկն ել իմի չափ ե, բայց վմբանդից ե այդպես հազնվում ու պճնվում. նա արդեն լերկու կոշիկ և փոխեք իսկ իմը կ քկատած գեռ քաշ եմ տալիս: Ծղաժարդիկ նրան փայփայում են, նա զեղեցիկ և իսկ յես... Միթե թառամելու յեմ այսպես զրբկված անձնական կյանքից... Հարցնում եր նա ի՞նքն իրեն և կես ժամից հետո, նայելով բարձի տակ զբած փոքրիկ ժամացուցին, միայն մի պատասխան եր զըտնում.

— Պետք և վեր կենալ, արդեն գործի զնալու ժամանակն ե...

* * *

Կար մի մարդ ծառալողների մեջ, վորին Մեջլումբանը մարսել չեր կարողանում. դա Մաղաքյանն եր, վորի գոյությունը նա կարծես մի հանդգնություն եր համարում: Մանկությունից, զեռ զպրոցական շըրջանում, հարուստ լինելով՝ Մեջլումբանը սաստիկ ատում եր այն աղքատ տղաներին, վորոնց մեջ վորեե ընդունակություն կամ «հպարտություն» եր նկատում:

Հետազայում ռաղքատ և հպարտ մարդիկ նրա կծու
ատելությունն ելին շարժում։ Արդպիսիների թվին եր
պատկանում Մաղաքանը։

Ամենից շատ Մեջլումքանը սիրում եր գործեր
հանձնել ծառալողներին «ոգնականի» անունից և հետո
շտապեցնել, նկատողություն անել. նույնը անում եր
և Մաղաքանի վերաբերմամբ, բայց այս կետում միշտ
ժայռի չեր հանդիպում ու միշտ կատաղում, վոր չի
կարողանում ընկճել ոմի ինչ-վոր Մաղաքանի։

Աբտաքուստ շատ համբերող եր Մաղաքանը,
ուղարի նման համբերող ու բարձվող, բայց և ուղտի նը-
ման վրիժառու։ Նա առանց հակածառելու ընդունում
եր իրեն հանձնած բոլոր գործերը, բայց նրա գեմքի վրա
մի թագնված հեղնանք կար, մի սպանիչ թուչն, վորը
Մեջլումքանին մահու չափ ցնցում եր, Մաղաքանի գեմ-
քին նա տեսնում եր «քիմիական անալիզի» չենթար-
կող մի հայացք, վորը կարծես մերկացնում եր իրեն։

Դեռ հեռվից նկատելով Մաղաքանի պըռֆիլը,
նրա ակնոցները, լախ՝ գուրս ընկած ճակատը, հեգնող
կնճիռները՝ Մեջլումքանն արդեն կատաղում եր. նա
այդ գեմքի վրա տեսնում եր ինքնասիրություն, հը-
պարտություն, վորոնք իր մաղձը շարժում ելին. նա
մեծ ցանկություն եր ունենում այդ բոպեներին վիրա-
վորել, ստորացնել Մաղաքանին, ցուց տար վոր
նրա ալդ «հպարտությունը» մի Փիկցիս չե վոչ մի
հիմք չունի. վոր ելի «հին» ժամամակվա նման կան
հրամայողներ և ինթարեկվողներ, և ինքը մի հասարակ
ծառալող ե և ուրիշ վոչինչ, ուստի միայն պիտի «հը-
պատակվի»։ Մական ալդ բանը չեր աջողվում Մեջ-
լումքանին։

Նա սիրայն մի գենք ունեմ՝ գործ եր ուղարկում
Մաղաքյանին ողջականից անունից և շտապեցնում,
վոր զբախ նրան. բայց Մաղաքյանն ել ամեն կերպ
աշխատում եր շուտ և լավ կատարել ու շատ անգամ
ավելի առաջ եր վերջացնում և մինչև Մեջլումյանի
գալը ուղարկում եր ողջականին, վորով ավելի լեր
դադում նրան:

Եթվ այդպիս որ-որի վրա Մեջլումյանն ավելի
յեր կատաղում, աեսնելով, վոր այդ հպարտությունն
ու ինքնասիրությունը, այդ «Փիկցիան»—կարծես ա-
վելի յեր ամբանում Մաղաքյանի համառ դեմքին Յե-
թե իշխանությունն իր ձեռքին լիներ, նա, անշուշտ,
անժիշտապիս կրանտարկեր Մաղաքյանին վորպես
«Փիկցիաներ» տարածողի...

Պետք ե ասած, վոր իր կողմից Մաղաքյանն ել
ատում եր Մեջլումյանին. իր ծոցատեսքի մեջ նա
գրել եր. «Յես այնպես եմ ատում Մ.ին (Մեջլումյա-
նին), վոր յեթե լուսնի վրա յես և նա մենակ մնանք,
կշպրտեմ նրան դեպի մի ուրիշ հանգած մոլորակ, վո-
րովհետեւ նու մեր յերկուսի մեջ ել կմտցնի իշխողի և
հպատակվողի աստիճաններ, իր դատարկ գլուխը ին-
ձանից բարձր կպահի... Նա «Ընկերականի» յերդվյալ
թշնամին ե, նրա թույնն ե.».

Վորպես միջանցուկ քամին իր հետ հարբուխ ե
բերում, այնպես ել Մեջլումյանի հայտնվելը դահլիճում
մոալլ մտքեր եր ներշնչում Մաղաքյանին. «Յեթե Մեջ-
լումյանը ոգտվելով իր բարեկամական կապերից՝ կա-
րող ե այսպես թող փչելով համարլա վոչինչ չշինել
բոլորի վրա վերեից նայել ել ի՞նչ ես շատ մտածում...
ինչքան ուզում ես մտածիր ու բարակ մանիր՝ ան-

խուսափելի «վոնճը» կզա և կնստի աղբյուրի ամենավերին ակի վրա...»

Բայց դարձանալի յե. այսպիսի հոռեսնես մտքերը գալիս եյին, յեր Մաղաքյանը հեռվից նկատում եր Մեջլումյանին. իսկ հենց վոր նա մոտենում եր, մի զորեղ ալիք գալիս սրբում եր Մաղաքյանի այդ մըտքերը, ու նրանց տակից իսկույն ծառանում եր մի բուռն դիմադրություն, վորը պատրս ստ եր իսկույն գործի անցնելու նա ամրող հոգով «Ժխտում եր» Մեջլումյանին և պատրաստ եր նոր հեղափոխություն սկսելու, միայն թե նրան տապալեր...

* *

Թարս որ եր: Առավլոտից Մաղաքյանին հանձնել ելին միքանի հին ավանսի հաշիվներ: Անկարգ կազմած եյին, վատ ձեռքով զրած և սխալներով լիքը: Մաղաքյանին գրգռում եյին անկանոնությունները, սխալները, բայց մանավանդ գրգռում եյին հաշիվը ներկայացնող անձերն ու նրանց ծախսած մեծ գումարները:

— Լըքեր,—ասում եր նա ինքն իրեն.—ով գիտե ես փողերի կեսը գավառներում քեֆի յեք տվիւ, իսկ յես հիմա պիտի ձեր կեղառտ շապիկները մաքրեմ...

Անուհետեւ յեկան մեկը մէուսի յետեից շտապ և «հրատապ» գործերը: Յերկուսը բերեց Մեջլումյանը, դրեց Մաղաքյանի սեղանին ու արհամարհական տոնով ասաց.

— Ոգնականի համար ե, պետք ե մի ժայից հետո պատրաստ լինի:

Մաղաքյանը այնպիս գրգռովեց Մեջլումյանի ար-

համարհական տոնից, վոր պատրաստ եր իր առաջի թանաքամանը գլխովը տալ բայց Մեջլումյանը կարծնս զգալով ալդ՝ ասելն ու հեռանալը մեկ արավ:

Մաղաքյանը յերկար ժամանակ չեր կարողանում կենտրոնանալ իր հաշիվների մեջ: Գումարներն սխալ ելին գուրս գալիս ու գրգռում: Իսկ պատի ժամացուցն այսոր գլխովին թարսվել եր և ուշացած զնացքի նման ել դադար չեր տալիս. մի զլուխ վազում եր ու շտապեցնում Մաղաքյանին:

Զանցած մի կես ժամ՝ Մեջլումյանն ուղարկեց սպասավորին իմանալու՝ վերջացրել և Մաղաքյանը թե չեւ Պատասխան յեկավ, թե՝ չեւ Մի քառորդ ժամից հետո նա նորից գուրս յեկավ ոգնականի առանձնասենյակից, անցավ գահլիճով ու յետ դառնալով՝ նորից ուղարկեց սպասավորին, ինքն ել յետեց գնալով:

— Մաղաքյանն ասեց, գեռ չի վերջացրել. յերբ պատրաստ կլինի՝ կզրկի, — ասաց նա:

— Ի՞նչ... Մաղաքյանի հերն ել անիծած, — պատասխանեց Մեջլումյանը գեմքի արհամարհական ծրումըոցով: Ասաց զիտմամբ բարձր ձայնով, վոր Մաղաքյանն ել լսի, նրա մոտի նստողներն ել:

Մաղաքյանը տեղից վեր թռավ ու բռունցքը բարձրացրած՝ վաղեց գեպի Մեջլումյանը, գոռալով.

— Սրիկա, յես քո զլուխը կջարդեմ, — գոռաց նա կատաղած:

Բայց նրա վեր թռչելուն պես ծառալողներն առաջը կտրեցին, և նա հազիվ միքանի քայլ արած, նրանց ձեռքութիւն եր:

— Թհղեք, պիտի սպանեմ, — գոռում եր Մաղաքյանը մի տարորինակ զարդանդ ազդող ձայնով:

Յերեք հոգով հաղիվ եյին կարողանում նըրան
բռները իսկ յերբ նա զգաց, վոր անկարող ե շարժվել,
ծանր՝ հեքով ընկալ աթոռի վրա:

Ամբողջ գահինը տակն ու վրա յեղավ. Ծառա-
յողները մեկ-մեկու յետեից գալիս եյին հարցական
դեմքերով, համախմբվում Մաղաքյանի շուրջը: Ապա
իմանալով գործի եյությունը՝ ամեն մեկը մի վորեն
ածական եր տալիս.

— Ի՞նչ զգինի .. ի՞նչ տգեղ բան ե ..

Կառավարիչն աղմուկի վրա գուրս լեկավ, մոտե-
ցավ խմբված ծառայողներին և իմանալով գործի եյու-
թյունը՝ դիմեց ըուրըին.

— Հո չի՞ կարելի մի ինցիդենտի պատճառով
ամբողջ հիմնարկության կարգը խանգարել Գնացեք
տեղներդ և շարունակեցեք ձեր գործը.

Ու ակնոցներն ուղղելով՝ լուրջ դեմքով վերա-
դարձավ իր սուտանձնասենյակը, մտածելով՝ «ոգնակա-
նիս ֆրոնտը շատ և ուժեղացել. պետք և միքիչ տեղ-
ները ցույց տալ...»:

Բայց մի հինգ րոպեից հետո նա մոռացավ «ին-
ցիդենտը», մի հաճախորդի հետ զրուցի բռնվելով:

Անորինակ դեպքը կարծես մեխվեց հիմնարկու-
թյան պատերին: Մերթընդմերթ գրիչները ծառա-
յողների ձեռքերին կանգ ելին առնում ու ասես
հարցնում.

— Վճնց թե. . վճնց թե եղ խոսքեբը... ես ժա-
մանակին, ես հիմնարկության մեջ...

* *

Տուն գալուն պես Մաղաքյանը պառկեց՝ մահճա-
կալի վրա ու յերկար ժամանակ մտածում եր, ալելի

շուտ՝ անկատ զառանցում որվա դեպքի շուրջը։ Սկըզբում լերևակայում եր, թե հարձակվում և Մեջլումյանի վրա ու վրեժը հանում, նույնիսկ ատրճանակով սպանում։ Ապա փոքր ինչ հանգստանալով՝ լերևակայում եր, թե զատի յին կանչում Մեջլումյանին, ինքը ճառ և ասում, մեղադրում ու ջախջախում Մեջլումյանին ու իր պաշտպանողներին։

Մեկ-մեկ նա հանկարծ վեր եր թոշում, նստում մահճակալի վրա ու բռնկվում եր կասկածով. չվիճի՞թ են նա ալսոր մի անուղղելի սիսալ և արել, թուլ և տվել, վոր իրեն ծանր վիրավորեն, չի դիմաղրել և այժմ վոչ մի կերպ չի կարող սրբել իրենից այդ վիրավորանքը... գուցե բոլոր ծառալողները դիտեն և խոսում են դրա մասին, և միայն ինքը չգիտե...

Վեր և կենում, քայլում ու հետզհետե հանգստանում. չե, ալսոր նա արել և ալն, ինչ վոր բնականարար պիտի աներ ամեն մեկը...

Սեղանի վրա դրած եր մի շիշ գինի։ Խմում եր, քայլում, նորից խմում։ Արգեն շիշը դատարկվելու վրա յեր։ Նրա տրամադրությունը գի՞ւ ու ալիքներով բարձրացել եր։ Մտքերի, զգացումների մի խառնուրդ եր մեջը։ Ահա վերջին բաժակն ել խմեց ու նորից քայլեց։ Ամեն ինչ մշուշի մեջ եր յերևում։ Կանգ առավ կենինի պատկերի առաջ։

— Մտածել ես ինձ նմանների մասին, — հարցը ն ու և պատկերից ու ինքը նրա տեղ պատասխանում.

— Կովիթր...

— Իսկ յեթե գալիս և ռաճխուսափելին։ յեթե մանրանում են մարդիկ և նրանց կոիմանքը ..

Պատկերը նորից պատասխանում է.

— Կա ավելի մեծ և հզոր ռանխուսափելին» —
«միլիոնավորը», ... այսուհետեւ ամեն ինչ նրա ողակի
մեջն ե...

Թագլում եր նորից, ու մշուշի միջից բացվում
ելին մարդկային լայնածիր շարքերը. բոլորը միա-
ձուլլ գալիս ելին, խոտանում ու փոթորկալից ձայնով
կանչում.

— Կպաշտպանե՞նք, կպաշտպանե՞նք. .

* * *

Անձրեալին որ ե: Զբաղմունքներից հետո յելկու
հողի լեն մնացել հիմնարկության մեջ: Կոնֆլիկտային
հանձնաժողովի նախագահ Պետրոսյանը և Մաղաքյա-
նը: Բավական ժամանակ նախագահը լուր եր: Դուրս
եր նայում պատուհանից, սակայն ավելի դեմքը ծած-
կելու համար: Մտածում եր՝ Ի՞նչպես սկսի, վոր կարո-
ղանա համոզել Մաղաքյանին: Փոքրիկ դեմքը ծռմռում
եր, մի աչքը խուփ անում, վերջապես մազերը ձեռ-
քով խառնելով՝ սկսեց.

— Բնկեր Մաղաքյան, դուք, իհարկե, զիտեք
ինչի համար եմ ձեզ կանչել... շատ ցավալի լե մեր՝
այսպես ասած՝ ծառայողների ընտանիքում... ինչ
խոսք, Մեջլումլանը շատ անկորրեկտ ե վարվել ձեզ
հետ, միանգամայն անթույլատրելի մեր՝ այսպես ա-
սած՝ ծառայողների ընտանիքում .. մենք պիտի աշ-
խատենք ընդհանուր ջանքերով այդ անախորժ դիպ-
քը լիկվիդացիալի լենթարկել...

Մաղաքյանը չհամբերեց.

— Ես զարմանում եմ, վոր դուք զիմում եք
ինձ այդպիսի խոսքերով. իմ հարցը շատ պարզ ե. Մեջ-

լուժանը վիրտվորել և ինձ և պիտի ներողություն խնդրի. իսա ուրիշ դեր չունեմ խաղալու, բացի Մեջլումյանից ներողությունն լսելուց...

— Ընկեր Մաղաքյան, դուք մռահնում եք, վոր բոլորը մի տեսակ գիտակից չեն. և ազգիսի գեղքեռում գիտակիցները պիտի ոգնեն գործին...

— Ալիբնքն, ներեցեք, զուցի դուք կամենում եք, վոր յես գնամ Մեջլումյանից ներողություն խնդրեմ:

Պետրոսյանը կարմրեց:

— Դուք իրավունք ունեք, ընկեր Մաղաքյան, վորպես վիրավորված մարդ՝ զրգովելու. աակալն պետք և հարցին հանգիստ նայել...

— Ալիբնքն Բնչպես, չի՞ կարելի, վոր ողարգեք ձեր միտքը:

— Գիտե՞ք, կան հանգամանքներ... որինակ, կարող և պատահել, վոր Մեջլումյանը համառի և չանի այն, ինչ վոր անհրաժեշտ է...

— Հետո՞ւ իսկ դժւք. . Բնչ և ձեր դերը: Դուք պիտի ինձ ողաշտպանե՞ք, թե չե...

— Ինչու չեք այդպես մռահնում հարցին. չի՞ վոր մենք կոչված ենք՝ այսպես ասած՝ խաղաղություն մտցնելու... և այդ տեսակետից ցանկալի չեր, վոր ձեր հաշտեցումը լիներ՝ այսպես առած՝ փոխաղարձարք... ձեռք ձեռքի տված...

— Միանգամայն հասկանալի յե ձեր ասածը, ընկ. Պետրոսյան: Շնորհակալ եմ, վոր վերջապես պարզեցիք ձեր դեմքը: Իսկ յես հայտնում եմ, վոր դուք շնորհիվ ձեր «հանգստմանքների» գործիք եք դարձել ուժեղների ձեռքին և որը ցերեկով արդարիսի առաջարկություններ եք անում...

— Ե՞ս չեմ յեր արդ տանով խռում: Ես ծվառ են վիրափոքելու կարիք չկա, յերբ մարդ ձգտում է իր պարագը կատարելու:

— Դուք դա անվանում եք սպարագ կատարելու... Ինչ յիս, օքորզ թուցիք, ձեր առաջարկը համարում եմ մի գափաճանություն: Յետ ձեր պաշտպանության կարիք չունեմ, կար ո իմ գործը տանել պուանց ձեզ եւ Աւ գլուրո զնաց:

* * *

Ահա այդ ժամանակ եր, վոր Մաղաքանը զրկց իր նումակը արհաստակցական միության խորհրդին:

«Բնկերներ, յիթե լուսնի վրա յիմ, իջեցը եք, յիմեն քնում եմ՝ արթնացը եք: Որը ցերեկով մեր հիմնարկության մեջ վիրավորեց չակերտավոր մի ընկեր, և չնաշխարհիկ մեր կոնֆլիկտային մասնաժողովն առաջարկում է, վոր վիրավորվածը՝ «փոխադարձ» ներռություն խնդրի վիրավորողից:»

«Բնկերներ, վորքան ճիշտ է, վեր զրում եմ ո՛հ թանաքով, նու ննջան ճիշտ է, վոր սիրու ոկ և այս թորու բաներից: Աւստի պահանջում եմ՝ պաշտպանեցնեց քընկեր» անունը, վոր անցել եւ բարբիկագներից ու խոցվում է ձեր տառջ... ընկերներ, պաշտպանեցնեց քընկեր» անունը, վոր բարձր է, քան Մասիս...

Նումուն ստանալուն պիս կարգավորություն յեղակ նշանակել հետեւյալ որը ծառալողների ընդհանուր ժողով՝ արհմիության ներկայացուցչի մասնակցությամբ:

* * *

Արտօնակարգ ժողով եր:

Համեմական ճառերը կհծ ջրի նման թափվում են Մաղաքանի վրա:

Կուսակցական Ադամյանի վճռական հայտարարությունը, թե՝ «վերջին ժամանակներս մեր հիմնարկության մեջ «նեղիք» պազեցության տակ առաջ են լինել մի շարք լիբուլթներ, շեղություններ»... կարծես գալիս են Մաղաքյանի ներսից, նրա ներսից ելին գալիս և անկուսակցական կողմիկանի խոսքերը, թե՝ «մեր հիմնարկության աշխատակիցներն այս հարցում ցուց տվին կատարալ ահասություն», այսոր արհմիության խորհուրդը մեր ականջից բռնած հրավիրում և ժողովիք... Կոմյերիտ Մաղոյանը, իր լերկար մազերը թափահարելով՝ բռնան կերպով հարձակվում է Մեջլումյանի և նրա «արքանցակների» վրա, պահանջում է մաքրել աշխատավորների շարքերը թունավոր ոճերից...»

Մաղաքյանն ընկնում է տաք հոսանքի մեջ, այլ ևս չի կարողանում հետեւ խոսողների մտքերին, վոչ ել կարողանում է կենարունանալ հիշել, թե ինչ պիտի տոի ինքը, յերբ «վերջին խոսքը» կուան իրեն

Նա չի նկատում, թե ինչպես բոլորի հայացքներըն ուղղված են իրեն, համակրական հայացքներ...»

«Միայն «բարձր» ծառալողների մի խմբակ հըմուտ թղթախաղների նման ծածկում են ամեն ինչ իրենց զեմքերի չեղոք արտահայտությամբ, չի իմացվում, թե ում կողմն են—Մաղաքյանի, թե Մեջլումյանի»

Որիսրդ Աշխենը հազիվ և զսպում իր կատաղությունը՝ Մկրտիչ անհամբեր սպասում եր Մեջլումյանին, բայց չեկավ (քանի որ և չի տեսել). «Մի գար, ասպալիր ես մոռւթը կիտած փիլիսոփալին.. . ինչի՞ համար են ապրում եսպիս մարդիկ, վորոնք միայն ուրիշներին խանգարում են... Ի՞նչպես լավ եր. նա սիրահարված եր ինձ վրա, իսկ ալժմ ..»:

Որիորդ Շողիկը զարմանում է, թե ինչու արդարես փոխվել է Մաղաքյանի դեմքը. կարծես լուսավորվել է, ինչու առաջ չեր նկատում, թե ինչ ռհետաքրքիր» և յեղել. ուժեղ մարդ է յերեսում. համարձակ դուրս կցա ըստորի գեմ, միթե չի վախենում կրճատումից...

— Ընկեր Մաղաքյան...—դիմում ե նախագահը:

Մաղաքյանը շփոթված, արվող զեմքով գալիս կանգնում ե նախագահի սեղանի մոտ. սիրտը բարախում ե ուժգին, կարծես մենամարտի յե դուրս գալիս:

— Ընկերներ, ամեն անդամ, յերբ խոսողները իմ անունն ելին տալիս, յես յերեսակաչում ելի սի ուրիշ Մաղաքյան, վորը նստած ե ձեզնից ամեն մեկի մեջ... Ընկերներ, այստեղ Մաղաքյանի և Մեջլումյանի դատը չե... այստեղ փորձում ե գլուխ բարձրացնել անցյալը... ալսաեղ խոսում ե անխոսափելին... Յեկ ինձ ալրում ե այն միտքը, վոր Մեջլումյանները սնվում են մեր մեջ... մեր այն աշխատակիցների հնացած ոըրտերում, վորոնց մեջ ալսորված ժողովի ընթացքում չկար պալքար, բողոք, ալլ չեղոքություն... բայց այս մոմենտին յես զգում եմ իմ մեջ, ձեր մեջ, մի ուրիշ ավելի հզոր անխ ևափելին... նա անթեղած ապրում ե մեր սրտերում ու բուկում, յերբ ժամն ե համում... Նա հետևում ե մեղ ամեն տեղ, թեկուզ լոթը սարի լետեր թագնվենք, նա մեզ կհասնի... այսուհետեւ ամեն ինչ նրա ողտեղի մեջն է....

* *

... ռհետացնել Մեջլումյանին... շարքերից... անցնում ե Մաղաքյանի ակոնջներով.

Ժողովը վերջանում է: Ամենքը մոտենում են

Մաղաքյանին ձեռքը սեղմաւմ, իրախուսում, թվում
ե, թե մի հսկայ լիսուն բանակ և բանամ նրա տուաջ,
վորի զիմ վոչ մի ուժ չի դիմանար:

«Յեկ ինչն առաջ սպարգ չեցի անսնում, վոր այս
բոլոր ընկերներն ինձ են վերաբերում...», անցավ
Մաղաքյանի մտքով, ոչ վոր նրանք թափնած չելին,
իմ տուաջ ելին...»

Բնդհանուր հոստիքի հետ Մաղաքյանը դուրս
յեկով փողոց, Ելեկորական լուսներն ուրախ վողջու-
նում ելին: Թվում եր, թե ամեն ինչ փոխվել է, դար-
ձել և մտելիմ, թվում եր, թե ամեն ինչ իրեն, Մա-
ղաքյանի հետ և կաղված, շիրեն և վերաբերումք...

Անցավ փողոցի մյուս կողմը, վարակիով մենակ
մաս և մտքերը հավաքին ներս մտավ սրճարանը, նըս-
տից մի անկունում, թիյ որտհանջից: Բայց միքանի
բռնկեցից հետո վեր կացավ, զուրս զնաց, թողնելով
թեյը:

Միքանի քայլ անցնելով, հանկործ յետելց
լսեց իր անունը.

— Բնկեր Մաղաքյան...

Յետ նույից նըրիորդ Շողիկն եր:

— Բնկեր Մաղաքյան, շնորհավորում հմ ձեր
հակթանակը, — ասաց նա մի առանձին քնքուշ ձայնով: —
Յետ գարմանում հմ ձեզ վրա, զուք բո որովին փոխ-
վել եք, եւ նման չեք տուաջվա Մաղաքյանին...

— Այս, յիս ինքս եւ զարմանում եմ, կարծես
իհա եւ չեյի ճանաչում ինքս ինձ...

— Շնորհավորում հմ, — կը ինց որիորդը ձեռքը
մեկնելով:

— Շնորհակալ հմ:

Աւ հանկարծակի լեռկուսն ել իրար ձեռք տված
զգացին մի անհարմարություն, կարծես հանցանք ե-
լին գործել: Բաժանվեցին:

Մաղաքանը քալից առաջ, նորից ընկնելով իր
մաքերի հոսանքի մեջ:

Այդ բովեցին մեկն ել թափառում եր փողոցներում,
չեր ուղում տուն գնալ: Որիորդ Աշխենն եր, վորը
թղթախաղում ամեն ինչ տանուլ տվածի պես բունկ-
վում եր, թույն թափում Մաղաքանի զլիսին, հետո՝
ինքն իրեն մխիթարում: «Գուցե Մեջլումյանը նորից
բարձրանա... կամ դուցե մի ուրիշը...»:

Մաղաքանը անցնում եր փողոցով հարբածի
նման Վաչվորի չեր նկատում: Նրան թվում եր, թե
ելի շարունակում ե իր ճառը յերկար, յերկար, հազա-
րամոր վասված տմբոխի առաջ... ամենքը լարված լը-
սում են... օ՛նկերներ... իմ և ձեր մեջ, միլիոնավորնե-
րի մեջ, խոսում ե անխոսսափելին... այսուհետեւ ամեն
էնչ նրա ողակի մեջն ե.

ԹՄՓԼԻԿԻ ՍԱԲՈՏԱԺԸ

Թմփլիկի Դավիթին բոլորը ճանաչում ելին վոչ
միայն իր քաղաքում, այլ և նրանից դուրս թե ին-
չու նրա ավելորդ անունը Թմփլիկ եր, այդ ել ամեն-
քի համար պարզ եր՝ Դավիթը ճիշտ վոր թմփլիկ եր,
չաղլիկ ու փամփլիկ. և պիտի ասած՝ իսկի յել չեր նե-
ղանում այդ անունից:

Թմփլիկին տեսնելու հումար պիտի ստնելինք
նրա «Մալիս» ճաշարանը, վոր գանվում նր շուկայի
կենտրոնում, ամենարանուկ տեղը: Այնտեղ փափուկ
քուֆթոներ ու տոլմաներ ուտելիս դուք կնկատելիք
և ճաշարանատիրոջ փափուկ շարժումները:

Առ նքին մոտ ծանոթ և մոտ բարեկամ եր թը-
վում Դավիթը, ամենքին ժպտում եր սիրալիր, և նրա
լայն ժպիտն առնելով՝ ովկ կարող եր չժպտալ փոխա-
դարձարար: Յեթե նույնիսկ ոտար մարդ եր զալիս,
Թմփլիկին այնպիս եր բարեում, կարծես վաղուց ճա-
նաչելիս լիներ.

— Բարով, հազար բարի յես յեկել մեր ես, չես
յերեում, լավ ժամանակին ես հասիլ հենց հարիսա
յեմ եփել վոր մատներդ հետը կուտես:

Ալսպիս եր Թմփլիկը, միշտ ուրախ, միշտ ժրպ-
տուն, և ամենքն ել ընտելացել եյին այն մտքի հետ,
թե նրա դեմքին չեն սազում տխուրն ու մռայլը:
Մինչեւ անգամ յեթե նրա դործերը վատ եյին գնում,

«Նիսիեքը» ջուր եյին կտրում, ելի նա իր շախը չեր կոտրում, քեզը տեղն եր պահում:

Թեպետ ասելու բան չի, բայց պիտի հայտնեմ, վոր թմբիլիկը սիրուհի լեռ պահում: Այս բանը գաղտնիքը, եր, բայց գավառական գաղտնիք, այսինքն շատերը գիտելին, վոր վորբեալրի նազով Յեղսոն թմբիլիկի սիրուհին ի, բայց, իհարկե, յերեսին չեյին ասում: Գիտեր նույնիսկ թմբիլիկի կինը. նա սկզբում աղմուկ հանեց, խոռվեց ու փախավ հորանց տուն, բայց մարդը կարողացավ համոզել և հաշտեցնել ամուսիններին:

— Ի՞նչ կա վոր, — ասում եր նա. — տղամարդ ա, միքիչ դեսղեն կընկնի, ելի տուն կզա. քո հացը չի պակասացնում, վոչ ել քու շորը. ամեն բան լեն ու բոլ կա. գնա, վորդիս, աշխարհ ա, եսպես ել կըլի, ենապես ել. ոմոթ ա, վոր մեր տանու բանը խալիսը իմանա:

Պետք ե ասած, վոր նազով Յեղսոն ել իր փափուկ ճամպին գտել եր. շատ զգուշ եր տանում գործը, ասիթ չտալով, վոր թմբիլիկի կինը իր անունը հիշի: Փողոցում ման գալիս կիսածածկ յերեսով եր լինում, յերկար թերթերունքները գետնին ուղղած. իսկ նրա քայլվածքն այնպես եր, վոնց վոր գյուղի նորահարսինը՝ ժամը տանելիս: Տեսնողը անպատճառ կասեր, թե ալս կինը ալնքան պարկեշտ ե, վոր սեփական ամուսնուն ել չի թույլ տալ իրեն փաղաքշելու:

Թմբիլիկն ել տարորինակ սիրական եր. ավելի շուտ նա սիրող եր. մեկ-մեկ եր այցելում իր Յեղսոնին, գնում եր մութը գիշերներին, ճաշարանը փակելուց հետո: Կնոջն ել ասում եր, թե «ընկեր-տղերք

մրտահեցին, միքիչ քեֆ արինքու Յեղասյի համար ամեն որ ուղարկում եր զաղթական կնոջ ձեռքով ու մենալավ կերակուրներից, իսկ յերբ զործերը լավ եյին գնում, ընծաներ եր առնում նրա համար՝ ականջի ու զեր, մատանիներ, ապարանջաններ

Այսպես Թմիլիկը քեֆով ապրում եր, ընտանիքը իր յերեխաներով մի կողմից եր ծաղկում, մյուս կողմից՝ անուշ սիրուհին, ինչպես յերգումն և տավում՝ «Ես յանը պնդոք, են յանը պոտոք»: Թմիլիկի դրամնը ուրախ զնովնում եր, ճաշարանումն ել քեֆն ու սաղանդարն անդակում եր նվ քեֆ չի արել «Մասիս ճաշարանում, թող նա փոշմանի»:

* * *

Բայց զետք միշտ դաթու չի բերիլ յեկալ պատերպմը, նրանից հետո յել կուսակցություններն իրար խառնվեցին, և մեր Թմիլիկի բանը զժարացավ: Զեր իմանում վար կուսակցության կողմը ըոնի, ամենքի հետ ել համաձայնում եր:

Նրա ճաշարանի ամեն անկյունում մի կուսակցություն եր բազմել արի ու ամենքի հետ հաշտ ապրի, բոլորն ել աշխատում եյին իրենց կողմը քաշշել Թմիլիկին: Դաշնակցականների անկյունում իշխում եր Փայտ Կարոն, ամսնից շատ Թմիլիկը նրանից եր վախենում, ինքը անձամբ սպասավորում եր նրան ու միշտ կրկնում.

— Ես մեր պատվական աղջն ու հավատը կթողնմամ, ուրիշների յետեից կընկնեմ... ինչ խոսք, մեր ազգի կուսակցությունը ամենախսկականն ա...

Իսկ մյուս կուսակցականների հետ հանոքներով եր անցկացնում քաղաքական հարցերը.

— Դե ևս աշխարհում, — ասում եր նա, — ամենասմեծ կուսակցությունը վարի կուսակցությունն ա. զե յես ել ինչպես ամենքիդ հայտնի լա. փորի կուսակցության առաջարաշին եօ. ամենքին ել կերակրում եմ. ով ուղարձ ա. թող գա...

— Այսպես սիրաը շահելով յոլա յեր գնում Թմփլիկը. բայց սիրաը շահելու համար ապառիկի գուռը հետքնեան ավելի լոյն եր բաց անում: Դե բոլորը պիտիական մարդիկ ելինց վմնց նրանց խաթրին դիպչեր: Դրում եր, դրում ապառիկները, համրիչը զցում, ու սիրաը հետզնեան բարակում եր: «Նիսիքը» նրա ջանն ու առաջ ելին միջառների նման, մտածում եր, մտածում, բայց առաջն առնել չեր կարող. բանը բանից անց եր կացել:

Շատերը գիտեն, թե բնչ նեղն ընկառվ Թմփլիկը. մի դիշեր ել անքուն մնալով՝ այնքան մտածեց, վոր բավական նիհարեց: Առավոտը վեր կացավ, մտքերը հալաքեց ու առաց ինքն իրեն.

— Թմփլիկը խելքի լեկ. քաղցր խոսքը լավ բան ա. բայց փողը նրանից քաղցր ա...

Ու այդ որը Թմփլիկը մի թուղթ փակցրեց ճաշարանի պատին. թղթի վրա զրած եր իր ձեռքով, իւրարեց փախչող տառերով.

Հընգերեներ,
Խերաւմ եմ
Ել նիսյա չնաւեմ,
Դիմանում չեմ,
Մեռնում եմ...

Սակայն ճաշարանի ճաճախորդները կարդում

ելին ու փոխանակ լաց լինելու՝ ծիծաղում։ Նույնիսկ
հաճախորդներից մեկը չեր ամաչել, զրել եր Թմփլիկի
հայտարարության աակը։

«Թե մեռնում ես՝
Բան չեմ ասում.
Միայն սրբազն
Պարտելի լինի՝
Մի լավ ենեխ
Առաջուց տաս»։

Ուզիղն ասած՝ Թմփլիկն ել կարգալով այս առ-
զերը՝ ծիծաղեց. բայց ներսում կարծես մի կատու
չանդոտում եր ու ասում։

— Թմփլիկ, ժամանակը փոխվել ա. խային մար-
դը շատացել թե խելք ունես՝ ճարդ տես, թե չե նի-
սիեքի մեջ կխեղդվես։

Ու մի որ ել և Մասիս ճաշարանը փակվեց։

* * *

Սկսվեց մի նոր կյանք. Թմփլիկը կարծես ընկալ
սատանի քամու մեջ ու պտտվում եր, անվիրջ պտըտ-
վում։ Գիշեր ցերեկ մի մտքի վրա յեր՝ թե ապրու-
տի թնչ հնար զտնի։ Ինչելք ասես չորավ ու չփորձեց
Թմփլիկը։

Սկզբում նա ամենից շատ զբաղվում եր վոտի
վրա առուտուր անելով։ Յեկ զարմանալին այն ե, վոր
այդ գործում նրան մեծ ոզնական դարձավ Յեղան,
մեծ շնորհքներ ցուց տալով առեւտքի մեջ։ Թողել եր իր
նուզը, ամեն տեղ համարձակ յերեւում եր, տղամարդի
նման ճակատաճակատի վիճում, սակարկում։ Նույնիսկ

լիսում հիմն գեղաքեր, յերբ նա Թմմիլիկից ավելի հըս
մուտ եր գործը բռնում։

— Յես դանակ եմ, դու նշտար, — ասում եր
Թմմիլիկը Յեղսոյին։

Դրանից հետո Թմմիլիկը ընկերովի մաի խանութ
բաց արեց, հետո միացավ հացթուխի հետ, նրանից
անցավ լուղի, պանրի առևտրին, ապա սապնի գործա-
ռան բացեց, մի խոսքով՝ այնքան գործերի ձեռնար-
կեց, վոր ինքն ել չեր կարողանում հիշել։

Վերջը տեսնելով, վոր ընկերովի գործերում «հա-
րամություն» և ընկնում՝ նա Յեղսոյի հետ խորհուրդ
անհեռով՝ վճռեց մանրունքի խանութ բաց անել։ Յեղս-
ոն քաղաքից ապրանք եր բերում, իսկ ինքը առու-
տուր եր անում։

Այս այս գործի վրա յեր Թմմիլիկը, յերբ «բայլ-
շիկն» յեկավ, Մեկը մյուսից ավելի սարսափելի լու-
րեր ելին տարածվեր թե բայլշիկները կացիններով
զինված՝ բոլորին կոտորում են։ Թմմիլիկը այդ լուրե-
րի սարսափի տակ մի գիշեր հավաքեց իր մասցած
ապրանքը և ընտանիքի հետ փախավ զյուղը՝ իր սա-
նահոր մոտ։ Այնտեղ հին ու մին շորեր հագավ, վոր
զյուղացիներից ջոկվի, ու թագուն առուտուր եր ա-
նում։ Յեղսոն մնաց քաղաքում, ճիշտն ասած՝ նա վախ
չուներ. «Յեկողները տղամարդիկ են, մտածում եր
նա. իսկ տղամարդու աչքը փափկացնելը հեշտ ա-
խելոք կնիկը ենքան ֆանդեր ունի, վոր առյուծին ել
կղնջացնի։»

Թմմիլիկը մեկ-մեկ աչցելում եր Յեղսոյին, ապ-
րանք եր վերցնում նրանից ու տանում զյուղ։

Յերեք ամսից հետո Թմմիլիկը համոզվեց, վոր

բայց երկները սովորական մարդիկ են, իսկ սովորական մարդկանցից Թմփլիկը չեր վախենում:

— Ախաղեր, իսու միշտ են մաքի յեմբ, ուսում եր նայ, — վոր յեթե մարդ ըերան ու ձևոք ունի՝ միշտ նրա հետ կարելի էտ լոլա գնալ, դաֆի ենքան ծանոթ ներ ունիմ, զործո խարար չեն տնիլ ...

Թմփլիկն իր սիրելի քաղաքի հարութ շատ եր քաշում, նա կուզեր նորից հաստատվել անտեղ, Յնդսոն ել շատ եր վախազում, վոր նա դա քաղաք, վորովնետե վախենում եր, վոր Թմփլիկը լուլորավին դրուզացի դառնա և մոռանա իր սիրունու զոյությունը: Բայց զրությունը դեռևս վահանգավոր: եր ճամարում, վորովնետե մի անդամ իբրև ռազիկուլյանու ընկել եր չեկա:

Յերկու տարի այսպիս զիմանալուց հետո Թմփլիկը վերջապես վերադարձավ իր ռարցիառա քաղաքը:

Յեկավ քաղաք, ինչ տեսավ: իր ճաշարանի շենքը նորոգած, մաքուր սպիտակով սվաղած ու ճակտաբին ել ցուցանակի վրա կարդաց.

Կոռպերտափիլ նաւարան:

Սա ի՞նչ բան ե, ամեն բան լոել ել Թմփլիկը, նույնիսկ համիլ կաթի մասին, բայց այսպիս բան չեր տեսած: Նայից, ամ քաշեց ու գնաց իր Յեղոսի մաս:

— Թթիս մուխը զցում ա, Յեղոս, վոր տեսնում եմ ճաշարանու բայտերը մետք մետք մետք ...

— Արխեյին կաց, հիմի տոռւտուրը խաթա յա, ամենից լավը չաղ պաշտօնն ա, ենակն զործ կճարես, վոր ճաշարանդ ել կմոռանատ:

Բայց որերն անցնում եյին, վողերը ծախսվում,

Թմմիկիկի զործը չեր հաջողվում. Հաղ ովաշտունները դեռ չկային Սեփական զործ ել չեր ուղում սկսել, վախենալով ու զերու լյանարիք անունից: Մոտահագ դուրս եր զայիւ տանից ու չեր իմանում բնչ անի, ևր զնա, ու վերջը եկի միակ տեղը մնում եր իրեն լավ ծանոթ կոշկակար Հեթումի արհեստանոցը: Գնում եր նրա մոտ ու զարդերը ովաշտում:

— Հեթում, ահը չըլի, հենց խոսքեր են պալիս լիզվիս ևս անիբավ բավաշեիկի մտախն. բա սա ու բենք ա. իմ ճաշարանը ձեռիցն խլին, ուրիշի տան.

Հեթումը Թմմիկիկին պրկուելու համար՝ հակածառում եր,

— Ինչի լեռ ատում ուրիշները. խալիսի համար ա. կոմպերատիվ ճաշարան ա...

— Հեթում, ուս իւլ փչացմք, կոմպերատիվ ճաշարանս վթին ա. զլիսին մի մարդ են նշանակելու հենց իմանուս սայ որը աղոթք ա անում, արմանք բան այ ախապեր, շինության են շինում ինժիներ են կանչում, հիգինդանում են բժշկի յետեից են զրկում, բա ինչի ճաշարանի կառավարիչ վարժատիւս են նշանակում:

— Ե՞սչի չես զնում խնդրում, վար քեզ կասափարիչ կարդենա

— Միամիտ մարդ ես, Հեթում. չես իմանում ենք մարդին նրանք մոտ չեն թողիլ:

Բայց և այսուհետ Թմմիկիկի խելքումը նստեց. ինչի չդնա խնդրի, կարելի յերան և գուբա դալիս:

Ու սկսեց կոռպերատիվի շեմքը մաշելը Բայց գնալդալուց կոշիկները մաշվում ելին, իսկ զործը դեռ զլուխ չեր դալիս:

Թմմիկիկը միս եր քաշում անցյալը հիշելով. Իհ,

ել են որերը յետ չեն դմէր. ա Փաղագած, սիրոը կուռ-
բած, կնճիռները խորացած գալիս եր իր միակ տեղը՝
Հեթումի մոտ, ու ելի սկսում եր խոնելը.

— Ախոպեր, փիքը եմ անում, ինչքան ել խելքիս
զոռ եմ տալիս՝ և թարս քանները չեմ հասկանում:
Թե վոր սատաննեն խառներ աշխարհն, հենց հսպես ել
կխառներ, ես բայց եիկ ասածդդ բա սատանի ջինս չի-
ախալեր՝ ես հարսւստին աղքատացնում ա, չե՛ աղքա-
տին ել չի թողում, վոր հարստանա... բա մի վոտքի
վրա ման գալ կըմ՝ առանց հարստի խեր ու բարա-
քաթ կըմ... զե արի ես բաները հասկացիր...

Եսպես խոսում եր Թմիկիկը, խոսում եր յերկար,
մինչե վոր ինքը լավ հոգնում եր ու հոգնեցնում Հե-
թումին.

Վերջապես յերբ նա դուրս եր գնում արհեստա-
նոցից, Հեթումն ասում եր իր վոքը յեղորը.

— Ես քուոակը մաշեց աթոսս. բա մի որ ասե-
լու չեմ մաշել ես՝ թազեն առ...

* * *

Այն որը, յերբ Թմիկիկին նշանակեցին կոռպերա-
տիվի ճաշարանի կառավարիչ, ճիշտ վոր մի ուրիշ որ
եր: Թմիկիկը ուրախ տուն վազեց, կնոջը գրկեց, յե-
րիխաներին ուսերի վրա ման ածեց, յերգեց, նույնիսկ
պարելու նշաններ արավ:

— Դե Մարթա, հիմի քեֆ արա. կոմպերատիվի
ճաշարանի կառավարիչ եմ, թամամ կճուճը թոլ ելալ՝
խուփը գտավ. մի որ ել տեսար՝ սրտիս մուրազը կա-
տարվեց, ճաշարանը ձեռս գցեցի ու ճակատին կպցը
իմ պայծառ անունը.

Ճաշարան Մասիս Դավիթ Պողոյանի:

— Դու յել դեռ ջուրը չհասած՝ վասներդ հանում
ես. մի կարգին նստի, տեսնե՞ք ի՞նչ ես արել. մի
զլուխ հենց երեխի նման թռչկոտում ես. ելի խմե-
ցի՞ր, աչքս լիս. Են ա, ինչ վոր աշխատես՝ խմիչկի
կտաս, ել յերեխաներիդ ի՞նչ կմնա:

— Յես քեզ ասում եմ՝ քեֆդ քէոք պահի. յես
վոր կամ՝ Թմժիլիկ Դավիթն եմ. բանը խելքով եմ
բռնում.

— Դու վոր մի բան բռնում ես, սազ աշխարհը
չալ ես անում:

— Դու յել հենց իմանաս՝ Թմժիլիկ Դավիթի
կը չլինես. մի ուրախացիր ե...

Այս ասելով Թմժիլիկը զրկեց կնոջը և բարձրաց-
նելով ձեռքերի վրա՝ սկսեց պատցնել սենյակում:
Մարթան ճշում եր, իսկ յերեխաները ծիծաղում ելին:

— Դե վոր ուրախացար, ել ձեռը չեմ տար:

Ու վայր զրեց կնոջը:

— Հիմի իմացմար, վոր մեջը նաօիվ կա... «Ճաշա-
րան Մասիս» կամ...

— Հա, գիտամ քո հաշիվը, միքիչ կհավաքես,
հետո քամուն կտաս:

Կինը ուրախ եր, վոր Թմժիլիկը գործ և գտել,
բացց զայրանում եր նրա խմելու պատճառով:

Յերկար ժամանակ Թմժիլիկը անցուդարձ եր ա-
նում սենյակում, բայտաթի յերգում, վերջապես քնեց
յերկար ու խորը քնով՝ մինչեւ մյուս առավոտը:

Հետեյալ որը վաղվեր թռավհագավիր ազիզ որվա-
չերքեղի չուփան, յերկար ճիտկերով կողիկները ու գնաց
ճաշարան Ներս մտնելուն ուես Թմժիլիկը մուշտարու
աչքով ամեն ինչ դիտեց. Սպասավոր Յերկմին ուղար-

կեց, զաղթական կնոջը կտնչել տվեց ու պատվիրեց հատակը լվանալ, իսկ ինքը խոհարար Հադոյի հետ գնոց պրալիզիա առնելու իր փորձված ձևքով ամեն ինչ ընտրեց ու վերադարձավ ճաշարան։ Պատվիրեց ամենալավ կերակուրները, վարոնց մեջ եշխովը պատվական քուժիման եր:

Գաղթական կինն արգեն վերջացնում եր հառակ լվանալը։ Այժմ Թմփլիկը կանչեց Յերեմին ու կարգագրեց մաքրել սեղաններն ու աթուները, նույն իսկ աշազբաթյուն գարձրեց պատերի վրա, արտեղ բավական զբաղրտթյուն կար, յերեւմ եր՝ հասարակական կարծիքը զգո՞ւ եր ճաշարանից։

Մաքրելը վերջացնելուց հետո Թմփլիկը կանչեց նորից Յերեմին

— Ես գողնոցդ եսոր լվանալ կտառ, իսուոկ վոր ըլիս՝ մուշարի շատ կզա, մեկ ել մի բան պիտի առնեմ, ճաշողների հետ քաղցր վարվիր, ինչ վոր տում են՝ լավ միտոյ պահիր, վոր աշքները քաղցր ըլի ու միշտ զան մեզ մոտ Սա ես խրատ չիմանաս, յն փորձված մարդ եմ, ենդուր եմ տումի։

Յերեմը՝ մոտ քանուոհնով տարեկան քարձրահապակ մի աղա, լսում եր «իսրաւները» աչքերն ուղղած եր մեծ քթին, նրան այնպիս եր թվում, կարծես ամեն խոսքի հետ մի լու յեր մանում վզից ու թոշուտում մեջքի վրա։

Ամեն ինչ կարդի թերելուց հետո Թմփլիկը պիրք զրավեց մեծ պահարանի առաջ, պլազան շշերի տակի Դեմքը դարձրեց մեղրտար, իր ժողիալ յերկաւակելով, այնպիսի արտահայտություն ուներ, կարծես առում, եր ամեն, ներս յեկողին։

— Համեցիք, անուշ արեք:

Յեթի հաճախորդը մի արտակարգ բան եր ողա-
հանջում, Թմփլիկը ինքն իր ձեռքով հասցնում եր,
ոզնութեան գալով Յերևմին իսկ յիթե պատվիրվածը
չեր լինում, մի բաղր խոսքով լոլայիր տանում:

— Եղուց անպատճառ կլինի:

Յաշտների հետ խոսելիս հաճախ լովում եր
Թմփլիկի «Հաջանը», ու անական քաղցր, վոր ալդ
«Հաջանը» ուղղակի ջանի մեջ եր մտնում:

Արպիսի բաներից հետո ինչ զարմանք եւ, վոր
լիրեք որից հետո ճաշարանի անունը վեր լիլավէ:

— Նանը չմեռնի Թմփլիկի, ձեռաց ծաղկացրեց
ճաշարանը, — առում եր միլիցիապետի ովնական Սարի-
բեկը. — այ ինչ ե նշանակում սպեցը:

Նանիսակ մի հրաշք կտառարվից, գործկոմի քար-
տուղար Կիրակոսյանը, վորի ղեմքը տարենը մի ան-
դրամ հազիր եր բացվում, այժմ ճաշելիս սկսել եր
ժպառալ:

* * *

Յաշարանը ուրախ աղմկում եր, չխչիկում, սիր-
ուը բաց ան ան Որ որի վրա հաճախորդների թիվն
ավելանում եր, զատ հետ ել որամարկով լցվում եր
փողով: Ի՞նչ թափյունեմ. Թմփլիկին վոգեսրողը ալդ
զրամարկզն եր, զորովհետեւ ոյզակովից Թմփլիկին իրեն
համար մասն եր վերցնում: — Ի՞նչ կտ վոր, մտածում
եր Թմփլիկը, կազմոնի գործը նրա համար ա, վոր
միջի մարդը ուտավի. մեւ ինչը կպահասի, վոր մի լի-
զուազեմ, մասնավոր մարդու հո չի, վոր նեղանաւ:

Շատ հաջող ելին իրաը ընկել ողործեցը. մուշ-

